



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- ԱՐՄԱՆՏ Դու, մ՛վ սպասում
- 4.- » հասար
- 7.- » Անուշ իմ աշուն
- 8.- Լ. ԱՅԱՏԱ Մարդը՝ որ ինճն իր ղէմ պատերազմեցաւ
(հայացուց՝ Ս. Կիրակոսեան)
- 22.- ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ Կէս գիշեր եւ հոգի
- 23.- Բ. ՔԷՊԱՊՃԵԱՆ Տօղ-անցք
- 23.- ՎԱՐԱՆ ՈՒԺ Իւզանկարը
- 31.- Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 39.- * * * Կարօ Մեհեանի մահը
- 40.- Կ. ՄԵՀԵԱՆ «Զեռնահման» ...
- 43.- * * * Անկոնփիլիկայնութեան տեսութիւնը
- 45.- Լ. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ Առանց կոնփիլիկտի
դրամատուրգիա չի լինի
- 51.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Պ. Սնապեանի
«Աղջատնեբուն աւանդութիւնը»
- 56.- * * * Հարցադրոյց՝ Եարասյալ Սէյֆերթի հետ
- 58.- * * * Նշմարենք
- 74.- * * * «Բարբե»ի 1984ի բովանդակութիւնը




Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Ի. Տ. Յ. Բ. Ի. Բ. 12 Գ. Ե. Ն. Ս. Բ. Բ. 1984 Գ. Ե. Ս. Բ. Բ.

Ա Ր Մ Ա Ն Տ



ԴՈՒ, Ո՛Վ, ՍՊԱՍՈՒՄ

Մեր երազանքի յաճախանքին
Ու հայրանքին յանձնուած՝
Սպասում ենք մենք՝
Մարմնաւորուի նա,
Դառնայ համ ու գոյն,
Եւ հոսի, վազի մեր հագար ու մի
Այս վազանման
Ու մազանման
Երակների մէջ:

Մենք սպասում ենք մեր ժլատ բախտին,
Ինչպէս որ լիքը ըստինքին իր մօր՝
Մանուկը քաղցած,
Եկած խմորը՝ քոնքի քէժ քշին,
Եւ հազը ծարաւ՝
Աշնան անձրեւի տատիկներին քաց:
Մենք սպասում ենք, որ հրաշքով մի
Ցեւ դառնայ անգամ մանկութիւնը մեր, --
Այդ անուշ յուշը,
Որը ո՛Վ գիտի, քէ ո՛ւր է հիմի
Թափառում անտէր,
Ու չկայ մէկը, որ հասնի, հանի
Իր ոտքի փուշը...

9934-85թ.

ԹԳԿ

Դու, ո՛վ սպասում,
 Երկուորեակը դու կենդանի յոյսի, —
 Մի կատրիք սիրան,
 Ուր բարախում են սրտերը փափուկ
 Աշխարհի համայն.
 Եւ մարդու խղճը:
 Յանախ դառն ես դու ու խորն ես խոցում:
 Ասա՛, անարդար, ինչպե՛ս է լինում,
 Որ վայրկեանը էս
 Երբեմն ամբողջ մի դար է թւում...
 Բա՛ւ է, շտապի՛ր ու խոնարհուի՛ր դու,
 Ծռնկի եկ աւ էն գլխարկը հանի՛ր,
 Երբ կարօտ մայր է քեզ ապաւինում, —
 Աչքը ջուր կտրած, հայում է նամբին՝
 Ճակատ գնացած, կամ նայեան ազուտ
 Դարձած իր որդու...
 Դու՛ նրա փոխան խարի՛ր նորից ինձ
 Եւ յուսախաբի՛ր,
 Միայն թէ՛ նրան չտեսնեմ տխուր,
 Այդպէս լալագին, իր վիզը ծռած
 Կանգնած տան շեմքին...

Դու, ո՛վ սպասում, մի թող, դու մի թող,
 Որ հազը ծարու
 Երկար սպասի անձրեւին վարար.
 Թող նա շուտ տեղայ,
 Եւ մոլախօտի ու փշի փոխան՝
 Մինձ ու դադձ ծլեն,
 Ու ծըլարձակի հասկը մի օրում,
 Հաց դառնայ, հասնի քաղցածի բերան:
 Թող հասնի միրգը մի գիշերուայ մէջ՝
 Միրող ազդկայ հայեացքի տակ թէժ.
 Մերը պարմանի ու պարմանուհու
 Մրտում բողբոջի ու պայթի մէկէն:
 Մի թող, դու մի թող, որ կոյսը ծամի
 Եղունգները իր,
 Երբ սպասում է ժամադրութեանը
 Նա իր առաջին...
 Եզիբ՝ դու բարի ու մի չարչարի
 Երանց փուխը հոգին՝
 Քաշէլուհով էն ու յապաղումով,
 Ակնկալիքը ի չիք դարձնելով
 Մի անակնկալ ու գէշ փորձանքով...

Եւ մօր կողմերը, կոնքերը նրա, —
Ազեզն այդ յարուած —
Զայլակերպուենք թող.

Ինն ամառայ տեղ՝ վաթսուն ինն օր
Մայրը թող կրի բեռն իր մանկան,
Ու կողերն իր շտեման այդքան:

Դու, ո՛վ սպասում,
Յոյսի, Հաւատքի երկուտրեակը դու.
Լաւութեան դիմաց՝
Փոխարինութեան, օ՛, դու միամիտ
Անկապութիւն,

Որ օրօրեց մեզ թէ՛ քուն, թէ՛ արթուն:
Ես հայ եմ, գիտե՛ս.

Համբերութիւն է միւս անունս.
Ես յաւ եմ ծանօթ քո յեզուին անխօս,
Քո խոստումների դիւրարեկութեան,
Դառնութեանն անուշ,

Տուած յոյսերիդ նաւարեկութեան:
Տես, ուշանում է, շա՛տ է ուշանում
Այն մէկը, որին դու շատ յաւ գիտես —
Անառակների անտակն է այն,

«Արդարութիւն» է նրա անունը.
Ո՛ր է արդեօք նա, որտե՞ղ է կորել...
Անեղի՛ հայ եմ, Տոկունութիւն է միւս անունս,
Բայց վա՛յ թէ հատնի համբերութիւնս.
Ասա՛, այդ ասա՛ դու մեր բշմամուն,
Հասկացրու նրան,

Թէեւ նա անմերջ խօսի է ձեւանում...
Սպասե՛նք պիտի արդեօք մենք նորից,
Ի սպաս դնենք
Ե՛ւ սիրտ, ե՛ւ հոգի,
Ե՛ւ աչքերի լոյս,

Ու մեանք անյոյս, անտուն, անկայան...
Լսո՛ւմ ես ծայրը կարմրաշէկ արեան,

Որ անմեղօրէն թափուեց սեւ մի օր.
Նրա ամէն մի կաթիւր եիմա,
Դառել է բողոք կրակալեզու,
Շայում է բոբոբ...
— Թօթափի՛ր, ինչ որ սրտմաշուկ է լող,

Տագնապ է ու տենդ ճանաժամային . . .
Եւ սաղրամք է պիղծ.
Հասկացի՛ր հայիւն,
Լսո՛ւմ ես դու ինձ:

Խ Ա Ի Ա Ր Ո Ի Մ

Եւ Արարիչը իր մտառը կծեց,
 Հծծեց դառնօրէն՝
 — Օ՛, մեղա՛յ, մեղա՛յ, —
 Երբ մի նուպայի պահին անուպայ,
 Նախանձից անհուն՝
 Կայէնը գարկեց եղբօրն՝ Աբէլին
 Ու քօպեց արիւն...
 Ընկե՛լ էր մարդու սրտի խնձորում
 Որդը կասկածի,
 Եւ հոգու ձորում
 Մոռցում էին ստեղծութիւնը,
 Կիրքն ու նախանձը:
 Եւ եղաւ դարբ, եւ եղաւ ռմիլ,
 Եւ եղաւ անը, եւ մահը եկաւ.
 Մարդը օտի պէս խայթե՛լ սկսեց,
 Եւ քաշեց նա սուր, բարձրացրեց կացին,
 Ու պատառուեց նա իր նմանին՝
 Զերթ գազան ու ցին...
 Եւ Արարիչը իր մտառը կծեց,
 Հծծեց դառնօրէն՝
 — Օ՛, մեղա՛յ, մեղա՛յ,
 Եւ Աբէլներէ դիակի վրայ
 Դառնօրէն լացեց...
 Եւ ծովեր եղան, յովիտան այեկոծ,
 Սզան ցաւ ու կոծ, եւ եղաւ կական,
 Եւ հողմեր եղան հառաչից Նրա,
 Շանք ու ուրազան...

Եւ արշալոյսը արիւնեց անյայտ,
 Եւ վերջալոյսը դարձաւ արեւաքամ.
 Խաւարը եկաւ սեւ կատուի նման,
 Զոհեց Լոյսի դէմ,
 Մլանեց երկար.
 Ճերմակ աղամբին ձգեց իր էգին
 Ու փախաւ կատուի աչքերից ազահ...

 Արարմունքներից մարդու գայրացած՝
 Արարումից իր գղջաց Աստուած:
 Հոգոցը Նրա անսրբույանման

Արձագանգեց ռոջ տիեզերքի մէջ-
 Պատուհանները բացուեցին երկնի
 Եւ եզար անձրեւ տարափանման,
 Ու ջրհեղեղը ջնջեց երկրի, երկնի
 Երեսից՝ մարդ ու անասուն եւ քոչում անգամ...

Արածից սակայն, տխուր, զգեստաւոր
 Նա խորհեց երկար.—
 Մարդու պատճառով կործանել էր Նա
 Երկիրը ամբողջ...
 Եւ Նա իր սրտում ուխտեց, որ ոչ մի
 Մարմին չկորչի էլ ջրհեղեղով,
 Այլ՝ ով որ քափի արիւնը մարդի,
 Նրա արիւնը հենց մարդով քափուի...
 «Ձի չար է», ասաց, «չար է, չար՝
 Մարդու խորհուրդը սրտի
 Մանկութիւնից իր»,
 Եւ աղեղը իր դրեց ամպի մէջ՝
 Իբրեւ մի նշան իր արած ուխտի:

.

Նայեա՛ն ազարնին գնաց այս անգամ
 Ու էլ յետ չեկաւ,
 Բայց նորից եզար անձր, նենգ ու դաւ,
 Նորից՝ շինութիւն,
 Շնութիւն՝ նորից, —
 Ազիկը պառկեց հետը իր ծեր հոր
 Եւ եզար, եզար Մարդ ու Գոմար...
 Եւ Արարիչը հանեց խոր հագոց,
 Եւ փեթի մէջ առած գլուխն իր՝
 Նա խորհեց կրկին, Նա խորհեց երկար,
 Ապա իր հոգում ազօք-ֆ ու մարմնֆ՝
 Առաջեց աշխարհ իր Միակ Որդուն—
 Եւ Ենունդ եզար, եզար Յայտնութիւն,
 Եւ Արարիչի կոպերին շոգաց ցօղը վազորդեան,
 Աչքերից կաթեց մի արտասուախառն
 Տխուր խնդութիւն...

.

Եւ Արարիչը դառած միտ, արիւն,
 Քայեց տմարդի մարդկանց միջով

Ու իր պատգամը յղեց հոգեթով.—
 «Սիրեցե՛ք միմեանց, սիրեցե՛ք միմեանց,
 ես եմնապարհն եմ, եւ ես եմ դուռը,
 Ձեր սրտի նուրբ բող ճափ սիրուց...»:
 Եւ մրմնջում էր ձայնը այդ վերուստ,
 եւ կանչում էր Նա բուրբ-բուրբի՛ճ՝
 Հեռուեն իրեն՝ ազատ ու հարուստ:
 «Սիրեցե՛ք միմեանց, սիրեցե՛ք միմեանց»
 Բնկնում էին այդ բառերն ադամանդ
 շահնի մէջ ասես, առանց արձագանգ:
 Շաչիւն էր լսում նորից սրերի,
 եւ խողխողում էր մարդն իր նմանին
 Կրկին ու կրկին...
 «Ձի չար էր մարդու խորհուրդը սրտի
 Մանկութիւնից իր...»:
 Սիրոյ սուրն էր դէմ առել ֆարին
 Ու փշրուել էր շաչիւնով տխուր
 Սրտերի ժեռին...

. : . . . :
 , : . . . :
 Եւ իրիկուն էր մի արիւնհանրկ.
 Արեւն էր ասես ձերածիւն մի ձեռք
 Արիւնաթաթախ,
 Եւ երկնում մով՝ զուր էր փորձում նա
 Մաքրել ձեռքերը անպի սաւանով, —
 Արեւն գետեր վառ, յորդում էին մութ
 Երկինքն ի վար...
 Սարսազդեցիկ մի ինչ-որ բան էր
 Կատարում հեռում,
 Ու լեզպառուսա փախչում էին լուս
 Սողուն ու բոչուն.
 Ճախնում էին բողբոջից ֆարերն
 Ու ծանր տնձում...
 Հովը սրսփուն իր թելին առած՝
 Բերում էր հեռուից մարակի շառաչ,
 Ամբոխի կլանչ, նիչ ու հոռոց,
 Ու ապա մուրմի բութ ու խուլ թնդիւն՝
 Հարուած առ հարուած,
 Լաց ու մղկտաց...
 Աստուածն է խաչուած...

ԱՆՈՒՇ ԻՄ ԱՇՈՒՆ

Հասունութիւն է միւս անունդ,
 Նաեւ՝ լիութիւն,
 Եւ այգեկութ է, եւ բերքահաւաք:
 Ասասութիւն ես, առա՛տ եւ առա՛տ,
 Մեղքահամ արեւ, մեղմանուշ մի տաք:

Թաց սագարքներից քա սկեգիսակ
 Թափում է սկի—
 Սիրոս գերք սկիի բարձրացնում եմ վեր,
 Կենացդ եմ խմում ես այս իրիկուն, —
 Օ՛, դու սկեքաշ, օ՛, դու սկեքարձ,
 Սկեքերք ազգիկ,
 Դու՛ հարս սկեկարս,
 Ա՛հ, մաղի վրաս քա սագարքահամ,
 Դա սագարքահաս արտօսքդ բարի,
 Որ յիշեցնում է արցունքը իմ մօր,
 (Որ դառն էր սակայն, ու աղի, աղի՛)
 Որ իր տղայի նման սիրեց քեզ, —
 Օ՛, մաղի՛, մաղի՛, լուս՛, մաքրի՛ր, տա՛ք,
 Ինչ որ դառն է եւ ինչ որ լեղի, —
 Ազգիկ սկեքուռ, ազգիկ սկեքեր,
 Կրճեքով հասում,
 Սէր իմ, սէր իմ, սէ՛ր,
 Անուշ իմ աշուն:

ԱՐՄԱՆՏ

Թեհրան, 1984

Լ Ո Ւ Է Յ Ա Յ Ա Տ Ա

Մ Ա Ր Գ Ը՝

ՈՐ ԻՆՔՆ ԻՐ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵՅԱԻ

— ԵՌԱՐԱՐ ԹԱՏԵՐԱԽԱՂ —

Հայացուց՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

**ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ
ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ**

Օսման աղայի տունը, այր կը տեսնենք Ռաշատ էֆենտիմ եւ տամուկը, որոնք բարձրագոյնակ կը խնդան:

ԷՖէնՏի.— Հոյակա՛ւ... Հոյակա՛ւ...

ԱՂԱ.— Ուրեմն ծրագիրս հաւնեցար:

ԷՖէնՏի.— Անկիզծորէն, աղտ, ես կրեք չէի պատկերացներ, որ մտածելու կարողութիւնդ վարպետութեան այս աստիճանին պիտի հասնի...: Հայերուն անջրգի ընդարձակ հողերը զբախտի պիտի վերածուին եւ մեզի միլիոններով շահ պիտի ապահովեն:

ԱՂԱ.— Բայց ես կը վախնամ, որ այս ծրագրին դէմ բողոքեն չըջանի միւս աղաներն ու պեկերը, որոնք...

ԷՖէնՏի.— Գուն լաւ պիտես, որ նոյնիսկ իրենց ղէմքերը պիտի չկարենան խոտոռեցնել, երբ որ լսեն, թէ ես գործընկերդ եմ:

ԱՂԱ.— Կը վախնամ, որ ջուրը պատրուակ գործածեն եւ...

ԷՖէնՏի.— Ո՞ր ջուրը...

ԱՂԱ.— Քեզի չբացատրեցի՞, որ ատուին ջուրը մեր շուրջի անջրգի բոլոր հողերը ոռոգելու համար բաւարար չէ:

ԷՖէնՏի.— Ի՞նչ է, զուն երկնաւոր Տիրոջն աւելի՞ առատաձեռն ես...

ԱՂԱ.— Բանէ մը մի վախնար... Կոստանդնուպոլսոյ մէջ իմ քաղաքական ներկայութիւնս պիտի արգիլէ, որ անոնք նոյնիսկ բառ մը արտասանեն. թերեւս փսփսան... բայց մի մոռնար, որ յիշած աղաներուդ նւ պեկերուդ կէտէն աւելին շարունակ ինձի կը նային, որպէսզի իրենց հարցերը լուծեմ, յետոյ... առաին ջուրը ինչո՞ւ պատրուակ գործածեն, երբ իրենց բռնագրաւած հողերն ալ իրենց սեփականութիւնները չեն, այլ հայերու կը պատկանին...

ԱՂԱ.— Լաւ, էֆէնտիս... Հիմա միայն մէկ հարց մնաց. ե՞րբ պիտի նստինք
եւ խօսինք կողմերուն... գործնական կողմերուն մասին...

Էֆէնտի.— Ո՞ր գործնական կողմերուն...
ԱՂԱ.— Ըսել կ'ուզեմ՝ նիւթական կողմին մասին: Օրինակ, ինչպէ՞ս պիտի
բաժնուինք ըրը... Իւրաքանչիւրիս բաժինը որքա՞ն պիտի ըլլայ եւ...

Էֆէնտի.— Ամօթ չէ՞, աղա... այս հարցերը անքան անիմաստ են, որ ա-
նոնց մասին պէտք չէ իսկ խօսինք. բայց զանի որ հարցը արժարժե-
ցիք, կը կարծեմ, հաւասար բաժանումը լուծումն է այս բոլոր հար-
ցերուն...

ԱՂԱ.— Ուրեմն, սկզբունքով համաձայնեցանք... թէկուզ աւելի մենք բաժին
մը ձեռք ձգելու արտօմակ ունէի:

Էֆէնտի.— Համաձայնեցանք Աստուծոյ օգնութեամբ... թէկուզ կը տեսնեմ,
որ արտօմակը սահման չի նանչար. բայց աղա, մի մոռնար, որ ես
ամբողջ անունս ու Հեղինակութիւնս ձեռքերուդ մէջ դրի արդէն եւ...

ԱՂԱ (համակերպելով եզրակացութեամբ).— Ինչպէս ըսիր, անոնք անիմաստ
հարցեր են, որոնց մասին պէտք չէ իսկ խօսինք... Աստուծոյ օգնու-
թեամբ հաւասար բաժանումի սկզբունքին շուրջ համաձայնեցանք...
(հալիլ Անր կը մտնէ):

Էֆէնտի.— Բարեւ, Յայիլ... Այս ատիթով կ'ուզեմ ըսել, սիրելի Օսման,
որ մարդը՝ Յայիլը... կայտառ, խելացի մարդ ընն է եւ նախանձով
կը դիտէ զեզ...

ԵԱԼԻԼ.— Ծնորհակալ եմ, էֆէնտիս, շնորհակալ եմ...

ԱՂԱ.— Զինք հոս բերի՞ր, Յայիլ...

ԵԱԼԻԼ.— Այո, տէր իմ, դրան ետին կեցած՝ մուտքի արտօնութեանդ կը
սպասէ:

ԱՂԱ.— Ներս մտցուր:

Էֆէնտի.— Ո՞վ...

ԱՂԱ.— Մուրառը, գիւղացին...

Էֆէնտի.— Հա՞... այդ կարեւոր արտին տէրը... (Համ Մուրառ Անր կը
մտնէ):

ՄՈՒՐԱՏ.— Ողջն ձեզ... (Բայցը կը պատասխանեմ արդայնիմ):

ԱՂԱ.— Բարի եկար, Համ Մուրառ: (Խօսքը Էֆէնտիին ուղղելով): Ահաւա-
սիկ աս է մեր շրջանին մէջ ամենապինդ դրուած ունեցողը...

Էֆէնտի.— Ուրեմն դուն ես արուի երկայնքն ի վեր ձգուած արտին տէրը:

ՄՈՒՐԱՏ.— Այո, տէր իմ:

ԱՂԱ.— Ի՞նչ կը լսեմ, Մուրառ... ջու մասին վատ խօսքեր կը լսեմ...

ԱՂԱ.— Լսեցի, որ արտին ձեռք ջաշելու մտադրութիւն չունիս:

ՄՈՒՐԱՏ.— Եւ այս խօսքին մէջ վատ ի՞նչ կայ...

ԱՂԱ.— Այո, կայ...

ՄՈՒՐԱՏ.— Իմ արտա է, աղա...

ԱՂԱ (ժղպելով).— Քանի որ արտը իրաւունքը է, ուրեմն ինչո՞ւ իմ իրա-
ւունքս ինծի չես վերադարձներ:

ՄՈՒՐԱՏ.— Աղա, կարծեմ նախապէս մենք համաձայնեցանք, թէ ինչպէս
պիտի վերադարձնեմ իրաւունքդ:

ԱՂԱ.— Ո՞չ, ես ամբողջ իրաւունքս կ'ուզեմ, մէկ անգամէն... Ի՞նչ է կար-
ծիքդ:

ՄՈՒՐԱՏ.— Ասիկա դիմացինը անկարողութեան մասնիկ կը նշանակէ:

ԱՂԱ.— Իրաւունքի մասին խօսք բացողը դուն էիր եւ...

Էֆէնտի (տաղտկացած).— Աղա, ինչո՞ւ մշակիդ հետ կը վիճարանիս:

ՄՈՒՐԱՏ — Ես էր մշակը չեմ...
 ԷՖԷՆՏԻ — Աբիկայ, ես քեզի հետ չեմ խօսիր:
 ՄՈՒՐԱՏ — Ես որիկայ չեմ...
 ԷՖԷՆՏԻ — Ինչո՞ւ է կը միջամտես...: Քանի որ արգար դուժար մը պարտա-
 կան ես ազային, քանի որ մեր առնել մտադրած արտին փոխարէն ան
 ուրիշ կար մը կու տայ: Եւ քանի որ կը մերժես քեզի առաջարկուած
 բոլոր քաշողական առաջարկները, ուրեմն, առիկա կը նշանակէ, թէ
 յամառութիւնը ծրարուած է, մախողեցնելու համար մեր ծրարէրը,
 եւ առիկա քեզի երբեք պիտի չարտօնեմ...: (Աղայիմ) : Մեր ծրարէրը
 էսա պիտի սկսինք գործադրել շարաթ մը հաջ եւ, կը կարծեմ, որ սեւէ
 անձ մեր դէմ չի կրնար կանգնել (Մարտիրո), որովհետեւ ես առհա-
 ռարակ կը ճգնեմ բոլոր անեւք, որ իմ դէմ կ'ելլեն:
 ԱՂԱ — Յետոյ, լո՛ք, Հոժ, ես քեզի առած պարտքս մտա առ մտա բռնելու զա-
 ռա զափարին համաձայն դռնուկացոյ միայն մէկ պատճառով՝ դժբալով,
 խղճալով վրայ, ուրիշ ոչ մէկ պատճառի համար:
 ՄՈՒՐԱՏ — Աղա, դուն ո՛չ պուժ կը ճանչնաս, ոչ ալ խիղճ...
 ԽԱՆԻ — Մուրատ, տա խօսքիդ պատասխանատուն ես, սուղ պիտի վճարես:
 ՄՈՒՐԱՏ — Կարծեմ՝ Հարցս ազային հետ է, դուն եւ այս էֆէնտին հետ ոչ
 մէկ կապ չունիք:
 ԱՂԱ — Մուրատ, զոհացիր Աստուծոյ կատարած բաժանումով եւ ընդունէ
 քեզի առաջարկած զինս:
 ՄՈՒՐԱՏ — Անջրդի արտերը... այնպէս չէ...
 ԽԱՆԻ — Բայց ազան խոստացաւ քեզի ջուրը մինչեւ հոն հասցնել:
 ՄՈՒՐԱՏ — Ես չեմ կրնար հիմնուել մարդու մը բերանացի խոստումին վը-
 րայ, որ սէրը չէ իր տուած խոստումին...
 ԱՂԱ (խնդարով եւ կացութեամ տեր դառնալ կեցծելով) — Տէրը չէ՞մ...
 ՄՈՒՐԱՏ — Այո՛... առունին ջուրը բոլոր արտերուն չի բուեր... Եթէ նոյն-
 քի միւս աղաները, պեկերն ու էֆէնտինները արտօնեն քեզի...
 ԷՖԷՆՏԻ — Կը թուի, թէ զիւղացիի մը սահմանափակ ըմբռնողութենէն ա-
 լելի մեծ բաներ գիտես... քեզի հետ զրոյցս երկարեցի...: Լսէ՛, արտը
 առունին հասակն ի վեր կ'երկարի եւ հողերուս վերջին մասին կը հաս-
 նի եւ ես, պայմանս ընդունիս կամ ոչ, հողդ պիտի առնեմ, թէկուզ ուժի
 դիմելով եւ այն բանն...
 ՄՈՒՐԱՏ — Փորձէ...
 ԱՂԱ — Ապարե՞ղ կը կարդաս, Մուրատ...
 ՄՈՒՐԱՏ — Ես ոչ ոքի ասպարէզ կարդացած չունիմ, իսկ արտս միայն դիա-
 կիս վրայէն անցնելէ հաջ կրնաս առնել:
 ԷՖԷՆՏԻ — Եւ առիկա պիտի պատահի Աստուծոյ կամքով:
 ՄՈՒՐԱՏ — Ըսի՛ դուն Հարցին հետ կապ չունիս...
 ԷՖԷՆՏԻ — Քլուխդ ե՛ս պիտի ճղմեմ: (Էֆէնտին կը փարձէ յարձակիլ համ
 Մարտիր վրայ, ազան արգիւժ կը համղիսանայ):
 ՄՈՒՐԱՏ — Ան՛ որ արտս բռնադատէ, հողով պիտի սրբեմ զինք... ես
 ուր չհայ չեմ...: (Կը թփէ գետին եւ դրամ կողմ փախելով): Ես ալ քեզի
 պէս թուրք եմ...
 ԷՖԷՆՏԻ — Աղա, մէկ կ'ըսեմ, այս զիւղացին անպատուեց զիս...
 ԱՂԱ — Միզմէ բարկութիւնդ, էֆէնտիս, զիլ մը հանդարտէ, ես էր Հաշիւը
 կը տեսնեմ...:

ԷՖԷՆՏԻ — Զօփը տնցուց, էր աղաւա լեզուն վրաս երկարեց եւ պէտք է էր
արդար պատիժը ստանայ. վրաս թքեց, հը՛ (հայկեր կ'ուզէր զէպի
ա՛յն պատը, ուր կը տնտնէ՛ն կոխուած կրացան մը: Կտանէ կրացա-
նը եւ կը մեկնի):

ԱՂԱ — Ի՞նչ պիտի ընես, էֆէնտիս:
ԷՖԷՆՏԻ — Ասկէ առաջ ոչ մէկ արարած էր լեզուն վրաս երկարած է (ազան
... կը փարձէ արգելի հանգիստանալ, բայց չի կրնար...):

ԱՂԱ — Ի՞նչ պիտի ընենք, Խալի:
ԽԱԼԻ — Ինչ կրնանք ընել որ...
ԱՂԱ — Շուտ, հատեր էֆէնտիին, նախքան կացութիւնը պայթի:
ԽԱԼԻ — Էֆէնտիին էֆէնտի է եւ կացութիւնը պիտի չպայթի...
ԱՂԱ — Ինչ ալ ըլլայ՝ դուն պէտք է հասնես իրեն եւ արգելես, որ չժխտու-
... րէ... (Յայներ կը բռնին, ապա՝ կրացանի պայթումներ):

ԱՂԱ — Միբընուկցաւ արեան մէջ եւ... ամէն բան վերջացաւ:
ԽԱԼԻ — Ըսի՛ որ էֆէնտիին էֆէնտի է...
ԱՂԱ — Խալի, զե՛ս՝ եւ հասկցիր, թէ ինչ պատահեցաւ:
ԽԱԼԻ — Ի՞նչ մըն ալ չպատահեցաւ, կը վստահեցնեմ զեզի:

... Այս խօսքերուն վրայ էֆէնտիին ներս կը մտնէ, կրացանը բռնած եւ կտ-
նի դուրս կ'ելլէ:

ԷՖԷՆՏԻ — Դան ստատի ըրի՛ այդ գիւղացին... արժանի էր:
ԱՂԱ — Բարկութիւնը պէտք է մեղմէիր, էֆէնտիս:
ԷՖԷՆՏԻ — Դուն վախկոտ ես, ապա... մի է որ, գիւղացի մը եւ ոչինչով կը
... անարբերի սրեւէ իշտամուկէ...
ԱՂԱ (սարսափահար) — Գի՛տ՝ մեզ, Տէր... էֆէնտի, զո՛ւ արարածը
անունը սեցուցիր...
ԷՖԷՆՏԻ — Ե՛ս... Աստուած մի՛ արարցէ... ըրի զեզի, որ գալուածուկ է...
Խալի ներս կը մտնէ:

ԱՂԱ — Խալի:
ԽԱԼԻ — Այո, աէր իժ:
ԷՖԷՆՏԻ — Մտիկ ըրէ. (խորհելով) այդ գիւղացին դուն սպաննեցիր:
ԽԱԼԻ — Ի՞նչ... (հտ-հտ կ'երթայ):
ԷՖԷՆՏԻ (պատմութիւն մը կը հնարէ) — Մեզի հետ խօսեցաւ եւ զե՛ս, ինչ
կըր իրեն հասար, ան վրա յարձակեցաւ եւ սպաննեցիր զինք... Ինք
զինքը պաշտպանելու համար...
ԽԱԼԻ — Բայց ստիկա անկարելի է...
ԱՂԱ — Ի՞նչը անկարելի է...
ԽԱԼԻ — Ես նստիսկ ժրջեմ մը շեմ սպաննիր... ուրեմն, ինչո՞ւ զինք ը-
պաննեմ:
ԷՖԷՆՏԻ — Քեզ խելացի կը կարծէի... լսի՛... Հիմա ազան զեզ կը վանտէ
եւ կը յանձնէ ոստիկաններուն եւ, երկու-երեք ամիս կտք, առաջ-վա-
... րաջ դուրս կու գաս բանտէն, կը հաստատուիս Եւթանդուզ աւ կը սի-
... ւաքաւ արտախիլ...
ԽԱԼԻ — Զհասկցայ...
ԱՂԱ — Այսինքն՝ էֆէնտիին հարցը պիտի զոցէ, կարեւորը՝ գալթակալութիւ-
... նը շրջանցելն է, նախքան մարդիկ հասնին եւ...
ԷՖԷՆՏԻ — Հասկցա՛ր...
ԽԱԼԻ — Հասկցայ, աէր իժ...
digitised by A.R.A.R.®

ԵՐԿՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

Ըմ ԱնՄէտ կը բռնայ տան դուռը, քրտէսդի Նաաման Յերս մտնէ:

ԸՄ ԱՀՄԻՏ — Բարի եկար, ազատ, ներս հրամէ:

ՆԱՍՄԱՆ — Հա՛մ Մուրասը ո՛ւր է:

ԸՄ ԱՀՄԻՏ — Ազան զինք կանչած էր եւ զնայ:

ՆԱՍՄԱՆ (կը փորձէ վերադառնալ) — Ուրեմն, զինք զիշերը կը տեսնեմ...

ԸՄ ԱՀՄԻՏ — Ո՛ւր կ'երթաս...

ՆԱՍՄԱՆ — Մնաք բարով ըսելու եկայ...

ԸՄ ԱՀՄԻՏ — Պիտի ճամբորդե՞ս...

ՆԱՍՄԱՆ — Այո, վաղը, արեւածաղին հետ, զէպի Տէր-Ջօր ճամբայ պիտի ելլեմ, զօրանոց պիտի վերադառնամ:

ԸՄ ԱՀՄԻՏ — Ուրեմն, պիտի նստիս, (կատակելով) ուզես թէ չուզես պիտի նստիս:

ՆԱՍՄԱՆ — Պէտք է երկտասարդներուն մնաք բարով ըսեմ եւ ապրանքներս պատրաստեմ...

ԸՄ ԱՀՄԻՏ — Ապու Ահմէտը շատ պիտի չուշանայ:

ՆԱՍՄԱՆ — Լաւ, Առուածոյ վտանհեցանք:

ԸՄ ԱՀՄԻՏ (հիշատարութեան պատրաստութիւններ տեսնելով) — Բանեք մը կան, որոնց մասին կ'ուզեմ կարծիքը լսել...

ՆԱՍՄԱՆ — Անկասկած, կ'ուզես որ խօսիմ Ահմէտի հարսնացուն մասին:

ԸՄ ԱՀՄԻՏ — Ոչ, այդ մասին պէտք եղածին չափ խօսեցար ինծի...

ՆԱՍՄԱՆ — Ուրեմն:

ԸՄ ԱՀՄԻՏ — Ապու Ահմէտը ինծի պատմեց, թէ մերժած ես սպաննել վտանգըստական հայ մը եւ հրացանդ ուղղած ես ընկերոջդ վրայ... ասիկա ճի՞շտ է...

ՆԱՍՄԱՆ — Այո, ժօրաբոյր:

ԸՄ ԱՀՄԻՏ — Եւ ճի՞շտ է, որ փախտականը մեր շրջանէն է:

ՆԱՍՄԱՆ — Այո... որովհետեւ Ահմէտը հաւաստիացուց ինծի... հարցին հետազնուումը Ահմէտը ստանձնեց եւ...

ԸՄ ԱՀՄԻՏ — Ի՞նչ է փախտականին եւ զրոջը անունը:

ՆԱՍՄԱՆ — Քրոջը անունը չեմ գիտեր, ինք Յակոբ կը կոչուէ:

ԸՄ ԱՀՄԻՏ — Մարմնով հակո՞յ է...

ՆԱՍՄԱՆ (կը յիշէ) — Այո...

ԸՄ ԱՀՄԻՏ — Ինքն է:

ՆԱՍՄԱՆ (մեծ հետաքրքրութեամբ) — Ո՞վ...

ԸՄ ԱՀՄԻՏ — Յակոբը, հանի Սարգիսին տղան:

ԸՄ ԱՀՄԻՏ — Ան՞ որ Երուսաղէմ ուխտի զնայ եւ ես չզարձաւ...

ՆԱՍՄԱՆ (տեսնակցելի եկած՝ ընդատու ստի կը ցատկէ) — Առաւուժ ի՞մ...

ԸՄ ԱՀՄԻՏ — Յիշեցի՞ր...

ՆԱՍՄԱՆ — Այո... Ահմէտին եւ ինծի հետ կը խաղար...

ԸՄ ԱՀՄԻՏ — Մանկութեան օրերդ կ'ուզէի յիշեցնել քեզի, բայց կանխեցիր զիս... Բայց դուն գիտե՞ս, որ հանի Սարգիսին հողերը նոյնիքն այն անջրդի հողերն են, զորս Օսման աղան բռնադրուեց... այն հողերն են, որոնց ոտոզման համար մեր արտին պէտք ունի...

ՆԱՍՄԱՆ — Հիմա աղադ կը հետազնոյէ զինք...

ԸՄ ԱՀՄԻՏ — Գիտեմ... եւ կս մտադրեմ, որ փորձանքի մը չհանդիպի... ան ալ մեզի պէս զիւղացի մըն է, կը հասկնա՞ս, Նաաման...

ՆԱՍՄԱՆ — Վայրկեան տոռջ վերադառնալ կ'ուզեմ...

ԸՄ ԱՀՄԷՏ.— Գիտե՞ս, որ ժորաքոյրդ՝ Ըժ Անճէտը մեծ դիւս մը ըբուծ
ՆԱՍՄԱՆ.— Ի՞նչ...

ԸՄ ԱՀՄԷՏ.— Աղաներն ու պեկերը մեր թշնամիներն են:

ՆԱՍՄԱՆ.— Աղաներն ու պեկերը, միայն, եւ ոչ թէ հայերը (պաշտօնաժի
ձայնը կը լսուիմ եւ Ըժ Անճէտ դուրս կ'ելլէ՝ անցուկարձը հասկնալու
համար, իսկ ինք դէպի պատուհան կ'ուղղուի):

ԸՄ ԱՀՄԷՏ.— Աստուած ի՞մ... տղամարդու մը դիակը շարժած են...

Խուսք մը սպամարդիկ, Հաժ Մարտի գիակը շարժած, տան անձ-
ձերս կը մտնեն: Ապշահար՝ Ըժ Անճէտ կը պռայ:

Լոյսերը կը մարին:

ԵՐՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ ՍՈՒԼԷՅՄԱՆԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Կը տեսնենք Զահրամ, որ դրալած է ինքզինք յարդարելով: Ֆաթիմ
Ձերս կը մտնէ:

ՖԱԹԻՄԷ.— Դէպի ո՞ւր, այսպէս:

ԶԱՀՐԱ.— Պազանտարներու աղջկան՝ Այիշէի հարսանիքին:

ՖԱԹԻՄԷ.— Ես ալ պատրաստուեցայ:

ԶԱՀՐԱ.— Առանձին պիտի երթամ:

ՖԱԹԻՄԷ.— Ի՞նչ ե՞ս...

ԶԱՀՐԱ.— Տունը պիտի մնաս:

ՖԱԹԻՄԷ.— Բայց Այիշէն ընկերուհիս է...

ԶԱՀՐԱ.— Մարդիկը հրուէրին շնորհաւան մեծերը պիտի մեղադրեն. քեզ
չեն մեղադրեր:

ՖԱԹԻՄԷ.— Ինչո՞ւ հետք պիտի չերթամ:

ԶԱՀՐԱ.— Ի՞նչ մեր հիւրերը...

ՖԱԹԻՄԷ.— Յակորը եւ Միլվա՞ն...

ԶԱՀՐԱ.— Այո, դերենք առանձին պէտք չէ՞ մզնեք...

ՖԱԹԻՄԷ.— Բայց դուն շարունակ կը կրկնես, որ թուրքերը մեր առնը կո-
խելու յանդգնութիւնը պիտի չունենան:

ԶԱՀՐԱ (ընդմիջելով).— Այսինքն...

ՖԱԹԻՄԷ.— Այսինքն՝ անոնց վրայ պէտք չէ վախնանք...

ԶԱՀՐԱ.— Թերեւս առնը կ'ոխեն եւ յետոյ պատրուակեն, թէ հայերը իրենք
դուրս ելած էին...

ՖԱԹԻՄԷ.— Կը կարծե՞ս որ կը յանդգնին:

ԶԱՀՐԱ.— Անշուշտ... դուն լուս գիտես, որ անոնք մեր առնը հսկողութեան
տակ առած են. եւ եթէ գիտնան, որ դուն ու ես առնէն դուրս պիտի
ելլենք, թերեւս խորամանկութեան դիմեն եւ Յակորը մեք մզն:

ՖԱԹԻՄԷ.— Աստուած մի՛ սրտացէ...: Լուս, մայրիկ, դե՞ս՝ առանձինը...

ԶԱՀՐԱ.— Ֆաթիմէ, հոգիս... մի նեղուիր, շնախառտուած կացութիւններ
են եւ մենք պէտք է կացութիւնը տանինք:

ՖԱԹԻՄԷ.— Հասկցայ, մայրիկ... Աստուած հետք ըլլայ... Այիշէն ի՞մ կող-
մէս ալ շնորհաւորէ:

ՋԱԼՐԱՆ.— Ուշադրութիւն ըրէ... Սիւման Յակոբին սենեակը պատկած է,
զինք շարժեցնես, Յակոբը կրնայ անհանգստանալ...

ՃԱԹԻՄԷ.— Սիրով, մայրիկ... Ե՛, մտոցայ քեզի հարցնելու...

ՃԱԹԻՄԷ.— Յակոբը Վրբ պիտի առողջանայ:

ՋԱԼՐԱՆ.— Մէկ կամ երկու շաբաթէն երկաթի պէս կ'ըլլայ... (Զանաւ կ'ա-
ւարտէ իր աշխատանքը): Մնաք բարով... շաւ ուշադրութիւն ըրէ եւ
իբեց հանգստութեան անհրաժեշտ լռութիւնը պատահէ...

ՃԱԹԻՄԷ.— Անշուշտ մայրիկ: (Փարիսէ դէպի փեք-սփը կ'ուղղուի, բրքե-
թիւրբէն ձայնապնակ մը կը դնէ եւ կը սկսի առտնիմ գործ մը ընել, օրինակ,
մաքրութիւն: Ակնքարք մը՝ եւ մերս կը մտնէ Սուլէյման, զինով վի-
նակի մէջ, քիթին տակէն մոյն երգը մրթմրթալով): Հայրի՛կ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ո՛չ... ես Սուլէյմանն եմ... Ապու Տուռու... Ճիշդ է, որ
ես ներս մտայ անպատելի թեթեւութեամբ... անմայն քայլերով...
բա՛յց, առեւտուրը պէտք եղածին պէս չի քալեր... քո՛ւ պատճառովդ,
այս սատանային պատճառով, որ հիմա մեր տունը կ'ապրի... ասոր
համար ես նեղուած եմ եւ այս զեղեցիկ երգը կը մրթմրթամ... (Գո-
նալով): Ձահրա՛... Ձահրա՛...

ՃԱԹԻՄԷ.— Հայրիկ, գիտով ես...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— (Կը մտնանայ Փարիսէին եւ շտառչում ապտակ մը իջեցնե-
լով) — Լա՛հ'...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ինծի խրա՞տ կու տաս (կը փորձէ անգամ մը եւս ապտակել,
սակայն Փարիսէ խոյս կու տայ), մայնս իջեցնեմ, հա՛...)

ՃԱԹԻՄԷ.— Հայրիկ, խնդրեմ, անհեակը անցիր եւ հանգստացիր...

ՍՈՒԼԷՅՄԱՆ. (դարձեալ գոռալով) — Ձահրա՛... Ձահրա՛...

ՃԱԹԻՄԷ.— Հայրիկ, մայրս տունը չէ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ո՛ւր է...

ՃԱԹԻՄԷ.— Թազանտարներու աղջկան՝ Այիշէի հարսանիքին գնաց...

չէ... Սուլէյման կ'ուղղուի դէպի իր սենեակը, պահ մը կանգ կ'առնէ՝ բամ
մը յիշելով, բաւական երկար կը մնայ այդպէս, յետոյ ժպտելով կը մտնի իր
աղջկան, կարծես քէ դաւ մը լարելով:

ՃԱԹԻՄԷ.— Ինչո՞ւ այդպէս կը նայես:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Այիշէն քու հին ընկերուհիդ չէ՞:

ՃԱԹԻՄԷ.— Այո, հայրիկ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ուրեմն ինչո՞ւ իր հարսանիքին չգացիր:

ՃԱԹԻՄԷ.— Մայրս արգիլեց...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Արգիլե՛ց... երթա՛ւր... Ինչո՞ւ...

ՃԱԹԻՄԷ.— Մեզի մէկը պէտք է տունը մտար:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Հայրս՞ն պատճառով:

ՃԱԹԻՄԷ.— Հայրի՛կ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ահա, ես եկայ արդէն եւ...

ՃԱԹԻՄԷ.— Բայց թուրքերը դուրսն են եւ կը վախնամ, որ դուն տեղ մը
կ'երթաս...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Մի՛ վախար... մինչեւ ձեր գալը տունը սիտի մնամ:

ՃԱԹԻՄԷ.— Ի՞մ ալ կարծիքս այս էր...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ուրեմն, պիտի երթաս:

ՃԱԹԻՄԷ.— Լա...

Քայլերը հ'ուզգէ հայելիին, քիչ մը արդարօրը կը շտկէ, մինչ հայրը դէպի սեմնակ կ'ուզուի: Տարխմէն կ'երթայ, Սուլէյման կը վերադառնայ քեմ, քիչ մը իմֆզիմֆ գտած, կը սկսի պատուհանները գոցել, յետոյ ձայն կու տայ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Սիւլմ... Սիւլմ... սէրն ու հեշտանքը Շամֆ(°) ափէկ-
նին... շու... սէրն ու հեշտանքը Հայաստանի տիկինին... չեզու,
շափը չբռնեց... (կրկնելով) սէրն ու հեշտանքը Հայոց տիկինին...
(ծափահարելով) Հա, բռնեց, շափը բռնեց... Սիւլմ... Սիւլմ... Սիւլ-
մաաա...
ՍԻԼՎԱ.— Այո, Հորեղբայր...
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Քեզի ըտի, որ ինծի Հորեղբայր չըսես...
ՍԻԼՎԱ.— Ի՞նչ կ'ուզես:
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Մեր խօսակցութեան մասին ի՞նչ մտածեցիր...
ՍԻԼՎԱ.— Ո՞ր խօսակցութեան...
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Քեզի երկու օր պայմանաժամ տուի:
ՍԻԼՎԱ (բարկութեամբ).— Թող Աստուած ներքէ զեզի, Հորեղբայր:
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Քեզի ըտի, որ ինծի Հորեղբայր չըսես:
ՍԻԼՎԱ.— Ի՞նչ ըսեմ:
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ինչ կ'ուզես՝ ըսէ... Ապու Տուսու... Սուլէյման... սրունչ
բան... (մեղմելով իր գայրայթը) Սիւլմ, փոքրիկ, ես կը սիրեմ զեզ
և օրինաւոր պահանջ մը կը ներկայացնեմ... կ'ուզեմ հետք տալու
նոնայ եւ, կարծեմ, ամուսնութիւնը ամօթ բուն մը չէ... մնաց որ, ես
[յարգուած վաճառական մըն եմ եւ կը կարծեմ, որ դուն արդէք ոչեմ
չհանդիսանաս...
ՍԻԼՎԱ.— Երբ ըման՝ ամիս մը կը Հայտնեն զեզ եւ դուն՝ Հայտնական, ան-
թի եւ բույրիկ կը քայես, երբ ամէնէն սիրելի Հարազատներդ ու ազգա-
կաններդ կը ապանեն... կը կարծեմ, ամուսնութեան եւ ուրիշ բանե-
րու մասին չես մտածեր... իսկ երբ կը ապանան մտքիդ զեզ եւ դուն
մահէն ու անպատուութենէն արտափակուող փախուստ կու տաս... կը
կարծեմ, այդ մասին դարձեալ չես մտածեր... իսկ երբ քու ապա-
տանարանդ կը պաշարեն, ինչպէս որ Հիմա է, երբէք չես մտածեր աս
մուսնութեան մասին...
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ընդհակառակն, Սիւլմ, հետո ամուսնանալով՝ դուն ապա-
նոված կ'ըլլաս զու եւ եղբորդ կեանքը:
ՍԻԼՎԱ.— Իսկ երբ եղբայրդ վերադառնա կ'ըլլայ, ինչպէս Հիմա իմ հայրս
... է... ա՛յ մէկ բանի մասին կը մտածես... յետոյ... այս ի՞նչ ասո-
ր ինձի բաներ կ'ըսես դուն...
ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Տարօրինակ...
ՍԻԼՎԱ.— Այո՛, տարօրինակ... որովհետեւ դուն տարբեր տարբեր ունիս,
եւ՝ տարբեր, զուն տարբեր կրօնք ունիս, եւ՝ բոլորովին տարբեր...
ՍՈՒԼԷՅՄԱՆ (անպատուութեամբ շեշտով).— Մաշալլա՛, Հայուհին ալ սկսաւ խօ-
սող լեզու ունենալ եւ բարբառիլ, կարծես թի՛ շատուսն տարեկան ազ-
ջիկ ըլլայ...: Լսէ՛, ազլիկ, տէր-գործիներէն շատեր Հայուհինքու հետ
... ամուսնացան, իսկ ես զեզմէ մեծ բան մը չեմ պահանջեր, ընդհակա-
... : ասկէ... այս ամուսնութեամբ՝ ես զեզ է որ կը պատուեմ...
(°) Շամֆ Քամակուրէ եիմ անուամ է, Յուս անուամ՝ Արգաստի Մանիկ մէջ ան-
փոփուած երկիրներում, այսինքն՝ Սուրիայ, Լիբանոն, Երաք, Երզնածի եւ Փոպուս-
նի միւսերեւոյր ասորականիմ այն երկիրն, որ Վովմի կուսակցութեամբ գլխաւոր Բոլաական է:
Հաս գործածուած է փոխարինական՝ Սուրիայ իմաստով: Բացարարիւնք մերն է: — Ս. Կ.:

ՍԻԼՎԱ.— Ինչպէ՞ս կը մտնաս Ջահրա մօրաբոյրը... իբրև կինը...: Ինչպէ՞ս մտնամ զինք, ինչպէ՞ս մտնամ իմ եղբօրս հանգէպ իբ տանած գուրգուրանքը, Հիւրամեծարութիւնը, մայրական, վերաբերումը...: Ինչպէ՞ս իբ բաժնեկիցը ըլլամ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Կարեւո՞րը...

ՍԻԼՎԱ.— Կարեւորը այն է, որ ես վերջնականապէս եւ մերժելով կը մերժեմ ... այս առաջարկը եւ կը խնդրեմ, որ այս մտածումը հետացնես զլիսէդ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Մայրա՛ւ... զիս նաեւ համոզել կը փորձես...: Լա՛ւ մտիկ ըրէ, եթէ այս մտածումը կը մերժես, ստիպուած ես ընդունելի երկրորդը կամ երրորդը...

ՍԻԼՎԱ.— Երկրորդը...: Երկրորդը, երկրորդը...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ահա, թուրք զինուորները տան շուրջը զէրֆ բռնած են եւ եղբօրդ գլուխը կը պահանջեն:

ՍԻԼՎԱ.— Կը սպաննա՞ս...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Այո՛, կա՛մ կէս կ'ըլլաս... կա՛մ ես չու տարժանուզ կ'ըլլամ եւ կամ ալ Յակոբը թորքերուն կը յանձնեմ...

ՍԻԼՎԱ.— Քու հոմանունի՞դ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Այո՛, կը խոստանամ քեզի, որ ոչ ոքի անդրադառնալու առաջ ո՛րք չեմ տար (կը մտնեայ, իսկ Սիլվա կը սկսի նստանցել):

ՍԻԼՎԱ.— Ի՞նչ կ'ընես...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Կը ցանկա՞մ քեզ, Սիլվա՞... կը ցանկամ քեզ աւենալ հալած կամ հարած... կը...

ՍԻԼՎԱ.— Հետացի՛ր ինձէ (Սուլէյման կը փորձէ բռնել ազդիկը, որ խոյս կու տայ իբ ձեռքէն եւ կը պոռայ) ըսի՛ քեզի՛՝ հետացի՛ր ինձէ...: (Աւելի բարձր պոռալով): Մօրաքո՛յր... Ծաթի՛մէ՛...: (Սուլէյման կը խնդայ)...: Մօրաքո՛յր...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ո՛չ, ո՛չ... ես կողորդիչ վրայ կը վախնամ... Ջահրա մօրաբոյրդ եւ Ծաթի՛մէն քիչ առաջ գուրոս ելան, (աւելի մտնեալով) հիւրութեան դասին...

ՍԻԼՎԱ.— Հետացի՛ր՝ ըսի՛...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Սիլվա, փոքրիկս, հողեակս... զիշերցեցիկ ես քեզ կ'երազեմ...: ամէն մարդ այդպէս կ'ընէ...: Համով բան է, պիտի գլուս եւ ինձի իրաւունք պիտի տաս...

Կայծակնային արագութեամբ կը յարձակի վրան, կը փորձէ ամբողջ մարմնով երկնալ ազդեան վրայ, որ կը պոռչտայ, միմի ինձ կը խնդայ...: Այս պահուն, Յակոբ ներս կը մտնէ, մերկ կուրծքով, որ վիրակապով պատուած է:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ի՞նչ կայ...

ՅԱԿՈԲ.— Գո՞ւն...

ՍՈՒԼԷՅՄԱՆ. (ամենայն լրբութեամբ) — Այո, ե՛ս...

Յակոբ կը վերցնէ այն գաւազանը, որուն միջոցաւ Ջահրա նախապէս սպաննացած էր թուրք զինուորներուն...: Սուլէյման քիչ մը կը թափափէ, ապա կը սկսի մեծամարտի: Մենամարտը վերջ կը գտնէ Սուլէյմանի յաղթանակով, Յակոբի վերջերան պատճառով, երբ երկուքն գետին կ'իջնան եւ Յակոբ գգայագիրի կը պարտուի: Սուլէյման կը փորձէ օտէր ելլել: Սիլվա կ'օգնէ:

ՍԻԼՎԱ.— Ո՛չ, խնդրե՛մ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Կորսուէ՛՛ համբէս, բողբ ճնունդ...

Սուլէյման դուրս կ'ելլէ:

ՍԻԼՎԱ (քայլերը ուղղելով Յակոբին).— Յակո՛բ, արթնցի՛ր... Յակո՛բ, եղբայրս... (Երբ կը նկատէ, որ Յակոբ չ'արթննար, կը քայլ կուժին ուղղութեամբ, գաւաթ մը դուրս կը վերցնէ եւ կը սկսի սրսկել եզրորդ երեսին)...

ՅԱԿՈԲ (աչկերը բանալով).— Ի՞նչ պատահեցաւ...

ՍԻԼՎԱ.— Ոչինչ... շուտ, ոտքի ել, Սուլէյմանը դնաց թուրք զինուորները կանչելու, որ քեզ ձերբակալեն...

ՅԱԿՈԲ.— Թուրք զինուորները... ուրեմն, պէտք է փախչիմ:

Կը փարձէ դուրս ցատկել պատահաւե՛մ, Անմէտ ներս կը մտնէ արտաքինը ձեռքին:

ԱՀՄԷՏ.— Տե՛ղբ կեցի՛ր, սրիկայ... կեցի՛ր, աշխարհս պիտի կրակե՛մ...

Այս ակնթարթին Յակոբ կը փարձէ դուրս ցատկել, Անմէտ կը կրակէ եւ փամփառչոք կը հասնի իր թիբախին:

ՍԻԼՎԱ (գոռարով).— Ո՛չ, գաղտնե՛ր...

Լոյսեր կը մարին:

ԶՈՐՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

Վաճառական Սուլէյմանի բնակարանը, Տեր-Ջորի ճէջ, ուր կը տեսնենք քանի մը զինուորներ, որոնք կը հսկեն ներմուկ ստանով ծածկուած դիակին վրայ:

Թեմին խորը կանգնած՝ սրայ Անմէտ կը նայի պատահաւե՛ք դուրս: Հիմա քանի մը կը մտնէ եւ ոտքը գետին գարնիսով՝ զինուորական բարեւ մը կու տայ: Ձայնը կը գրաւէ Անմէտի ուշադրութիւնը եւ ան իսկ կը դառնայ:

ԱՀՄԷՏ.— Ի՞նչ կայ, Հիքմէթ:

ՀԻՔՄԷթ.— Քանի մը ժամէն մեր դիրքերը ամբողջով զինուորական նոր ջոկատներ պիտի հասնին:

ԱՀՄԷՏ.— Հրամանատարութեան ալ հետադրեցի՛ր:

ՀԻՔՄԷթ.— Այո...

ԱՀՄԷՏ.— Ուրեմն, չիտիլը ոտնիջապէս պէտք է փոխադրենք...

ՀԻՔՄԷթ.— Այո, աէր իմ... Կ'արտօնե՛ս ինձի, որ քեզ շնորհաւորող առաջին անձը ըլլամ...

ԱՀՄԷՏ.— Ի՞նչ բանի համար:

ՀԻՔՄԷթ.— Հրամանատարութիւնը տեղեկացուց, թէ որչա՛տ է նոր առախճանով մը վարձատրել քեզ. հազա՛ր շնորհաւորութիւն, հազա՛ր...

(Այս պահուն, քէյի ափսէն ձեռքին, Սուլէյման ներս կը մտնէ):

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Հրամանե՛ք, սղաք, ձեր թէյերը վերցուցէ՛ք:

ՀիֆօՒթ.— Սուլէյման, Հրամանատարութիւնը աիրոջս նոր աստիճան մը շնորհեց:

ՍՈՒՆԷՍԻԱՆ.— Իրա՛ւ... Հազա՛ր շնորհաւորութիւն, աղաս:

ԱՀՄԷՏ.— Աստուած օրհնէ՛ ձեզ...

ՀիֆօՒթ (խօսքը Սուլէյմանին ուղղելով).— Օրհնութիւնդ կ'ուզենք, որպէսզի Ահմէտին եւ Յաթիմէին ջուրերը իրենց բնականն հունին վերադառնան:

ՍՈՒՆԷՍԻԱՆ.— Աստուծոյ կամքով պիտի վերադառնան:

ՀիֆօՒթ.— Բայց ե՛րբ...

ՍՈՒՆԷՍԻԱՆ.— Ճիշդ է, որ Ջահրան ու Յաթիմէն Հիմա պիտի գայրանան, բայց ժամանակը բոլոր Հարցերուն լուծման բանալին է...

ԱՀՄԷՏ (կշտամբումով).— Կը խնդրեմ, որ այս գրոյցին վերջ տանք:

ՍՈՒՆԷՍԻԱՆ (աղուէսի պէս փախուստ տալով).— Այս գիշեր պէտք է անքան մնանք՝ նոր աստիճանը տօնելու համար, այս մղձաւանջէն (մատնացոյց բնելով դիակը) մեր ձերբազատման առիթով:

ԱՀՄԷՏ.— Անշուշտ, պիտի գիշերենք մինչեւ արշալոյս: Այս առիթով, Հիգմէթ, վազու՛րնէ սկսեալ դարձեալ կը սկսինք գործակցիլ Ապու Տաւուսին հետ:

ՍՈՒՆԷՍԻԱՆ.— Շնորհակալ եմ... (կը մօտեմայ քէյամանին, գաւաքը լնցրնելու. Նաաման ներս կը մտնէ):

ԱՀՄԷՏ (ուրախութեամբ).— Նաամա՛ն... փա՛ռք Աստուծոյ, որ ողջ-առողջ վերադարձար (կը փորձէ մօտեմալ Նաամանի, վերջինը համբուրելու համար, բայց Նաաման խոյս կու տայ):

ՆԱԱՄԱՆ.— Հեռացի՛ր ինձէ, ոճրագործ...

ԱՀՄԷՏ.— Նաաման...

ՆԱԱՄԱՆ.— Երիտասարդները ամէն բան պատմեցին ինծի... ոճրագործը դուն ես, Ահմէտ...

ՍՈՒՆԷՍԻԱՆ.— Այս ի՞նչ խօսքեր զուրս կու տաս:

ԱՀՄԷՏ.— Ասիկա գինուորութիւն է, Նաաման...

ՀիֆօՒթ.— Մեր առաջնորդին ազնուութիւնը մի շահագործեր...

Անմտո նեղութիւն կը զգայ Հիֆուրթի խօսքերէն:

ՆԱԱՄԱՆ.— Խե՛ղճ Ահմէտ, դուն չես գիտեր, թէ ի՞նչ գին վճարեցիր այս մարդուն արեան փոխարէն:

ԱՀՄԷՏ.— Խօսքերդ կոտէ, ես քու սպառ եմ եւ ոչ թէ բարեկամդ, իսկ եթէ մինչեւ Հիմա քեզ յարգած եմ, պարզապէս անոր համար, որ մանկուքեանս ընկերն ես:

ՀիֆօՒթ.— Թող Աստուած ներէ քեզի. փոխանակ մեր առաջնորդին նոր աստիճանը շնորհաւորելու՝ ելեր ես լեզուդ վրա՞ն կ'երկարես...

ՆԱԱՄԱՆ.— Գինը արդէն վճարեց...

ԱՀՄԷՏ.— Գիտեմ, գինուորութիւնը ա՛յլ քեզի յարմար ասպարէզ մը չէ. այդ իսկ պատճառով, կը խոստանամ օգտակար ըլլալ քեզի:

ՀիֆօՒթ.— Մօտեցիր եւ ներողութիւն խնդրէ, յետոյ շնորհաւորէ իր նոր աստիճանը:

ՆԱԱՄԱՆ.— Ահմէտ, իմ թանկագին ընկերս, շնորհաւոր ըլլայ... սիւննի պետութեանը ո՛վ յաղթանակի կերտիչ... ո՛վ Հերոս, որ ծածանեցիր դրօշը արդար իրաւունքին. շնորհաւոր ըլլայ նոր աստիճանդ, որուն իբրեւ գին հօրդ արիւնը վճարեցիր:

ԱՀՄԷՏ.— Ինչե՛ր կ'ըսես...

ՆԱՍՄԱՆ — Այո՛, Հօրդ, Հատ Մուրատի՛ն արիւնը...: Լօկե՛ք, մարդիկ, սպայ Ահմէտը աստիճանի բարձրացում ունեցա՛ւ (պոռպոլ) իր Հօր արեան փոխարէն:

ԱՇՐԱՅ — Անկասկած որ հիւանդութեան նոպաները դարձեալ եկած են...
ԱՀՄԷՏ — Նաաման, Հանդարտօրէն բէ ինծի, Հօրս վատ բան չը պատուահեցա՛ւ...

ՆԱՍՄԱՆ — Ողորժի Հոգուն, Հայրդ մեռաւ, Ահմէտ, Ուրֆուլի Օսման աղան սպաննե՛ց Հայրդ...

ԱՀՄԷՏ — Աղային կապը ի՛նչ է... Նաաման, ճշմարտութիւնը խօսէ...

ՆԱՍՄԱՆ — Օսման աղան պէտք ունէր ձեր արտին, որպէսզի անոր մէջէն տոււ չը բանալով՝ Հասցէք անլրդի արտերուն, որոնք այս սպանեալին կը պատկանին (մտմեացոյց կ'ընէ դիակը):

ՀԻՔՄԷԹ — Անկասկած խենթացաւ...

ԱՀՄԷՏ — Նաաման, Նաաման (ցնցելով) աղան ի՛նչ կապ ունի այս դիակին, Հօրս Հետ, բան չը հասկցած շուեիմ...

Նաաման արագ քայլերով դէպի դիակը կ'ուղղուի եւ կը բանայ դէմքը:

ՆԱՍՄԱՆ — Լաւ նայէ... չե՞ս ճանչնար... Թէ ոչ իր դէմքին դարկութիւնը եւ ողբերգութիւնը արդիւնցին քեզի, որ զինք ճանչնաս: (Ահմէտ կը նայի մեծ կեղքանագումով): Յակորն է, ձեր մանկութեան ընկերը, Հատ Մարդիսին աղան... Թէ ոչ նոր աստիճանդ ալ արդիւնց, որ զինք ճանչնաս...

Նաաման ռաքի կ'ըլլէ, Ահմէտին կ'երկարէ աստիկաններուն հաստատագիրը... Ահմէտ կը կարդայ եւ կը դառնայ աղքատաբար... Բանի մը ակնբարբ լուրբիւն կը տիրէ... ապա կը լսուի երաժշտութիւնը... Նաաման կը հասնի Ահմէտին ետեւէն...

ԱՀՄԷՏ — Անկարելի է...

ՆԱՍՄԱՆ — Այո, Հայրասպան: (Ահմէտ խորապէս կ'ազդուի այս խօսքէն):

ԱՀՄԷՏ — Զեմ Հաւատար...

ՆԱՍՄԱՆ — Հաւատա՛, Ահմէտ, Հաւատա՛... քեզի տուածնին միայն սուկորն է...

ԱՀՄԷՏ (ամբողջական գայրոյթով) — Լաէ՛:

ՆԱՍՄԱՆ — Դու եւ ոճրադործը:

ԱՀՄԷՏ — Լաէ՛ ըսի, պապանձէ՛... (տնի սաստիկ գայրոյթով) տարէք զինք բանտ եւ զինուորական դատարանին յանձնեցէք, իր պաշտօնակից զինուորին վրայ ժամանակ չը տուա՛յ կրակելուն Համար:

ՀԻՔՄԷԹ — Տէր իմ... Հանդարտէ...

ԱՀՄԷՏ — Գործադրէ՛ Հրամանը...

ՀԻՔՄԷԹ — Կարծես թէ իր սպանութիւնը կը հրահանգես...

ՆԱՍՄԱՆ — Զգէ, ինչ կ'ուզէ թող ընէ... իր Հայրը սպանողը մարդասպանութեամբ երբեք չի հետաքրքրուիր:

ԱՀՄԷՏ — Զայնը լսել չեմ ուզեր, զինք բանտ տարէք...

ՆԱՍՄԱՆ — Սիրով, պիտի երթամ: (Զղայնութեամբ կը քֆնէ եւ Հիֆմէթիմ դառնալով): Կ'ուզէ զիս սպաննել, որովհետեւ իր գործած ոճիրին միակ վկան եմ...: (Դուրս կ'ելլէ՝ զինուորներով շրջապատուած):

ԱՀՄԷՏ — Լեզուն շատ երկարեց...

ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Անշուշտ, իր արժանի պատիժը պէտք է ստանայ :
ԱՀՄԷՏ. — Սկիզբէն պէտք է այս քայլը առնէի :
ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Ճի՛շդ է, Ահմէտ... կը յայտնեմ իմ խորին ցաւակցու-
 թիւններս...
ԱՀՄԷՏ. — Ողորմի հոգուն, ամէն բանի մէջ շորզլուխին մէկն էր եւ այս
 պատճառով ալ իր կեանքը վրայ տուաւ...
ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Մեռելներու մասին այսպէս կարելի չէ խօսիլ...
ԱՀՄԷՏ. — Սուղէ՛՛ր՛ս, ես միայն իրականութիւնն է, որ կը ներկայացը-
 նեմ...
 Այս ակնթարթիմ կը լսալին պռաչտուփի եւ իրարանցումի ձայներ :

ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Հօրեղբորդ կի՛նն ու փաթի՛մէն են...
 Խօսքը հազիւ տարտած՝ մերս կը մտնեն :

ՋԱՀՐԱ. — Ճի՛շդ է, Ահմէտ, սպաննեցի՛ր :
ԱՀՄԷՏ. — Այո :
ՋԱՀՐԱ. — Ոճրազո՛րծ, գինը սուղ պիտի վճարես :
ԱՀՄԷՏ. — Քեզի չեմ թոյլատրեր, որ ցեղախմբային դիւրագրածութիւնները
 գրգռես եւ...
 Զահրս կը քֆնէ Ահմէտի ռիզուսիտներ :

ԱՀՄԷՏ (խօսքը զինուորներու նուղելով) . — Տարէք զինք բանտ...
 Զինուորները կը քաշլուտեն Զահրան :

ՅԱԹԻՄԷ (մօրը հետեւելով) . — Մայրիկ, մայրի՛կ...
ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Ի՞նչ կ'ընես, Ահմէտ :
ԱՀՄԷՏ. — Զիս անարգեց, բայց ես, ինչպէս ըսի, պիտի չթոյլատրեմ, որ
 ցեղախմբային դիւրագրածութիւններ գրգռէ... եւ տարին զինք...
ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Ահմէտ, խելքդ տուն կանչէ :
ԱՀՄԷՏ. — Դուն ալ լուէ... կը բաւէ, որ խոստացայ պարենաւորումը դարձ-
 եալ քեզի վստահել :
ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Այստեղի բարբերը կ'արգիլեն կնոջ մը բանատրկութիւնը .
 երբ այս լուրը լսէ՝ Տէր-Ձօրը սաղի պիտի հլլէ :
ԱՀՄԷՏ. — Բանէ մը մի վախնար... նոր ուժեր պիտի հասնին եւ ոչ մէկ անձ
 պիտի յանդգնի շարժիլ. դիակը զօրանոց տարէք :

Ահմէտ դուրս կ'ելլէ եւ Սուլէյման կը հետեւի անոր :
ՍՈՒՆԷՅՄԱՆ. — Ահմէ՛տ... սպասէ՛... պիտի բացատրե՛մ...
 Լոյսերը կը մարին :

ՀԻՆՊԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ
 ՈՉ ՄԷԿ ՎԱՅՐ... ՈՉ ՄԷԿ ԺԱՄԱՆԱՍ

1.— Թարգմանը կը գտնուի ամբողջական խաւարի մէջ, բացի լոյսի եր-
 կու օգտակներէ՝ բնութի խորը անային օղակի մէջ, որ անկի մեծ է, կը տես-
 digitised by A.R.A.R.©

նենք Անվերը, կեցած՝ եռամսկարդակ տախտակէ աստիճանի առաջին սանդղեխամատին վրայ, իսկ երկրորդ օղակին մէջ կը տեսնենք Օսման ազան եւ Ռաշատ էֆէնտին, որոնք միասին հրացան մը բռնած են:

2.— Ազան եւ էֆէնտին կը սկսին խնդալ եւ ան յիմարարար կը ճայնակցի անոնց խնդուքին... Ազան հրացանը հետէն իրեն կու տայ եւ մատնացոյց կ'ընէ բռնին միւս ծայրը, ուր անմիջապէս կը կեդրոնանայ երրորդ լուսաշրջանակ մը, որուն մէջ Յակոբը կը յայտնուի: Անվեր կը կրակէ Յակոբի վրայ, որ անջունչ գետին կը փռուի:

3.— Ռաշատ էֆէնտին մտաւ կը հասկցնէ Անվերին աստիճան մը բարձրանալ եւ ան կը բարձրանայ երկրորդ սանդղխամատը:

4.— Օսման ազան մատնացոյց կ'ընէ այլ ուղղութիւն մը, ուր անմիջապէս կը կեդրոնանայ չորրորդ շրջանակ մը, որուն մէջ իր հայրը՝ Գիւլաթի Մուրատը կը յայտնուի: Անվեր կը պատրաստուի կրակելու, բայց պահ մը կը տատանուի... էֆէնտին կը հրահանգէ: Կ'արձակէ փամփուշտը եւ հայրը կը մեռնի:

5.— Ռաշատ էֆէնտին մտաւ կը հասկցնէ Անվերին ճոր աստիճան մը բարձրանալ. կը բարձրանայ եւ անոնք կը խնդան:

6.— Օսման ազան Անվերէն կը պահանջէ հրացանը իրեն տալ եւ ան կու տայ:

7.— Ռաշատ էֆէնտին մտաւ կը հասկցնէ Անվերին աստիճան մը եւս բարձրանալ եւ ան կը բարձրանայ երրորդ սանդղխամատը:

8.— Օսման ազան երեւակայական քանի մը փամփուշտ կ'արձակէ պատին ուղղութեամբ, յետոյ՝ ժողովուրդին վրայ, յետոյ՝ միւս պատի ուղղութեամբ, ապա՝ Անվերի վրայ, որ անմեարարձր աստիճանին վրայ դիտապատս կը փռուի:

Լոյսի բոլոր շրջանակները կը մարին, բացի Անվերի շրջանակէն, ուր իր դիակը կը տեսնուի:

Կը լսուին անազանգի ձայներ:

Վարագոյր:

ԼՈՒԿ ԱՅՍՍԱ

Տէր-Չօր, 1979

(Շաբ. 4 եւ վերջ)

Կէս գիշեր եւ հոգի

Գանձանակի պէս պարապ՝
Կը շրջին խեղճ, բազմախոց
Երկրէ երկինք հապշտապ՝
Արդ հոգիները մարդոց...

Կու գան ոմանք հայցելու
Քեզմէ, ո՛վ Տէր, սէր ու բախտ,
Իսկ ուրիշներ ուզելու՝
Այլեւս մա՛հը անյաղթ:

Ամէն առտու, ամէն մարդ,
Իր աղօթո՞ղ հոգիին
Գանձանակի մէջ անգարդ
Կը զգայ պարապն երկինքին:

Կը տեսնէ հոն կէս գիշեր,
Խաւար մը, որ միշտ կ'անքի,
Կը տեսնէ հոն ցուրտ շիթեր՝
Մահակայլակ արցունքի:

Մեր անձին մէջ, ո՛վ Տէր իմ,
Կը դնես դուն լոկ արցունք,
Այդ մութացկան պնակին
Զլացեր ես սէր ու խունկ...

ԵԳ. ՊՕՅԱՃԵԱՆ

Բ. Ք Է Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Տ Ո Ղ, — Ա Ն Յ Ք

Առանց տեղէն շարժելու, պատկերը յստակ դարձուց ստեղծելու վրայ կոխելով: Գոյնները, ըստ, եւ կոխեց ուրիշ ստեղծելու վրայ, կարմիրը դորացաւ, մարդոց այտերը կարմրեցան, կաս-կարմիր դարձան, նոսպաներ կ'անցընէին կարծես: Մաքիչ մը շատ եղաւ, այնքան ալ ծանր չէր կրածնին, խորհեցաւ եւ մատի վարժ շարժումով մը հաստատեց բնական գոյնը այտերուն: Մարդերը, իրենց աւանդական համազգեստը հագած, կը կրէին այդ ծանր բանը, որ շփոթութիւն ստեղծելու աստիճան կարմրեցուցած էր անոնց այտերը: Ո՛չ, արձանադրութեան եղանակին հետ կապ չունէր ասիկա: Վարպետ աղաք էին: «Մասթրովիտէօն» ձեռք ուրախ օրերը կը յաւերժացնէ: Գործի մարդ, լաւագոյն սարքաւորում, ճարտանական էին իրենց գործիքները: Նոյնպէս տիկին Սիրանոյշինը, Հակոբակ անոր, որ ճարտանական էր, Գերմանիայէն բերել ստուած էր: «Քիւստրա» հոն չէ մի հա, անոր միջոցով: Հինցած սիւքլմ է, անոնք ալ կ'ըսեն կոթ, բայց առաւելութիւն մը ունի, սփռն է: Նորէն 250 հազար մը վըճարած են: Գատկերը իսկապէս քիչ մը պղտոր էր: Զղայնացած կոխեց ստեղծելուն վրայ: Յստակ դարձաւ, իսկապէս

յստակ դարձաւ: Անպիտան ճարտանգիներ:

Ոտքի ելաւ դուռը բանալու համար: Նորէն բանալի չեա տաած հետք, ըստ: Մոռնալը ամօթ չէ, պատասխանեց Յովսէփ: Ամօթ չէ անշուշտ, ամօթ նկատուող ուրիշ բաներ կան: Սիրանոյշ խոհանոց դնաց: Անիմաստ էր խօսիլը: Զըկնորսներուն երթալը չէ՛ր մոռցած՝ ոչ թէ ձուկ դնելու համար: Ելիլիլիլի ծոցը ձուկ մնացած էր, որ ձկնորսները բռնէին: Քանի մը հաս չափարի: Նորէն «Ոսկի Տակառը» գացիր, պիտի հարցընէր, բայց չըբաւ: Նշանակութիւն չունէր, քանի որ պիտի չհրատարէր հոն երթալէ: Ընկերները հոն էին, ուրիշ է՛նչ գործ ունէին անոնք: Բիթը կախ էր, պէտք չգրաց հարցնելու, թէ կորսնցուցած է, թէ ոչ: Եթէ իրեն պատահէր ասիկա, Սոնային տունը: Հետաձայնող եղաւ:

Աստուած մի՛ արտօցէ: Ակնթարթի մը համար խորհեցաւ, թէ այդ «Աստուած մի՛ արտօցէն» հետաձայնի՞ն համար, թէ իր թղթախաղի հետեւանքներուն կապակցութեամբ սպրդած էր բերնէն: Լիւթ-

Փր՞ն ալ չըբաւ: Ո՞ր Լիւթֆրին, առնելիք-
 ւո՞րը, թէ միւսը: Այսօր քիչ մը յոգնած
 էր Սիրանոյշը: Բնական էր, որ միւսին
 մասին էր խօսըը: Առնելիքուորին հետա-
 մայնած ըլլալը ո՛չ ոք կը հարցնէր, նաեւ
 Յովսէփը:

Տքալով կ'ատանային մարդիկը,
 իսկապէս ուքալով, կասկածիլ կարելի
 չէր: Ըսել է՝ դազազը իր կարծածէն ա-
 լելի ծանր էր, հակառակ անոր, որ այն-
 քան վտիտակազմ եղած էր հանգուցեա-
 ւը: Միշտ կը ծանրանան, այդպէս ըսած
 էր Մարիամը: Ան ալ ամէն ինչ գիտէ:
 Դեռ պարսպ էր եկեղեցին, աւելի ետք
 պիտի գային հիւրերը: Իսկապէս լաւ ե-
 դաւ, մայրուն յիշատակ մըն է առ Վի-
 տնան: Սեփ-սեւ էին մարդոց համադ-
 զեանները, ճիշդ իրականութեան մէջ ե-
 զածին պէս: Պէտքիսը եւ Պոպը, այ-
 սնքն՝ Գրիգորը, առաջին եկողները ե-
 րան: Կարծես ճաշկերոյթ է տսիկա, ա-
 սանկ տխուր առիթներուն ճշդապահու-
 թիւնը աւելորդ չէ՞, ատեն շա՞տ ունիք
 հիմա: Աս ի՞նչ լըջութիւն է, նոյնիսկ Ա-
 ճիգը, որ խնդալէ զատ ուրիշ բան չի
 գիտեր, ան ալ լուրջ է: Հարսնիք չէ,
 բայց այդքանն ալ քիչ մը շատ է, ի՞նչ
 որ ուզէք ըսէք:

Պատրաստ ես, ըսաւ Յովսէփ: Ո՛չ,
 պատրաստ չէր: Եւ ինչո՞ւ, նորէն քանի՞
 ժամ պիտի տեւէին պատրաստութիւնե-
 րը: Կնո՞ղ հիւանդութիւնը: Ո՛չ, կնոջը
 հիւանդութիւնը չէր, պարզապէս մարդ-
 կային, կը պատահէ թէ՛ կիներուն եւ թէ՛
 էրիկմարդոց: Տաքութիւն, եւայլն: Բը-
 ժիշկ կանչած էր: Բայց Յովսէփ զոչաց
 հարցնելուն: Պէ՛շի տամարը, մրմնջեց եւ
 շարունակեց. ես կ'երթամ կոր, պատրաս-
 տութիւն տեսած են: Գնա՛, այս անգամ
 ալ գնա՛: Անշուշտ չ'ըլլար, վերջը՝ Տի-
 կին Միլվա պարսպ տեղը պատրաստած
 կ'ըլլայ այդ համեղ ճաշերը: Գոնէ ասան-
 կով փրկած կ'ըլլամ զանոնք զովելէ:
 Որքա՞ն համով են եւ նոյն ատեն գիւրտ-
 մարտ: Զափերը կու տա՞ս, սիրելիս: Ե-
 թէ նոյնիսկ իւղը ետ գայ: Գնա՛, ինչպէս
 զայցիբ միշտ աւ գիս ձգեցիր առանձին:

Կը յիշե՞ս այն գիշերը, երբ ժեր պզտիկը
 պիտի ծնէր եւ ես ցաւերէն կը տառապէի:
 Ի՞նչ էր այդ անգամ: Կարծեմ ձեր թըղ-
 թախաղի աւանդական օրն էր: Մնաւ եւ
 ծնելով այնքան քիչ ատեն ունեցաւ, որ
 անոր անունն անգամ չկրցանք դնել: Կը
 լսե՞ս ըսածներս, հա, նորէն գնաց: Կար-
 ծեմ ասանկն ալ աւելի լաւ է, սիրելի,
 զգայուն Յովսէփս: Սրտիկդ չկոտրի ա-
 ստեք լուրով, բայց փա՞ռք Տիրոջ, չես լը-
 սեր: Եթէ նոյնիսկ լսէիր, ի՞նչ պիտի
 փոխուէր: Ես ըսեմ զեղի. ոչի՞նչ:

Նայէ տես, որքա՞ն շատ մարդ եկաւ:
 Որո՞ւն միաքէն կ'անցնէր: Առաջին ան-
 դամ տեսածի պէս եղայ: Սեղրակն ալ ե-
 կեր է, տեսնուելի՞ք բան է: Այդքան տար-
 ւան բարեկամութիւն կար, անիմաստ
 բանի մը համար քէնտեցան: Իսկ միայն
 հիմա հայտուեցան, ան ալ՝ միակողմա-
 նի: Այս առիթներուն պիտի սպասէինք:
 Պատկերը պղտորիլ սկսած էր նորէն: Տի-
 կին Սիրանոյշ ստեղծեցուն վրայ կոխել
 սկսաւ: Փոխուած բան մը չկար: Ասանկ
 հինցած դործիքները մեղի արծանի կը
 տեսնեն, մրմնջեց: «Պէ՞թամաք», ըսաւ
 հեղինակը: Եւ շարունակեց. պո՞վ փոխ
 լ'Օրիամ: «Մասթրփիտօ՞ճի սողոց յան-
 ցանքը չէր տսիկա, քանի որ անոնց պէս
 արթուն տղաներ տարրական այսպիսի
 սխալներ պիտի չզործէին: Բան մը, որ
 կը փաստուէր Բամերայի ճարպիկ մէկ
 դարձուածքով: Սեղրակին փոխարէն հի-
 մա կը տեսնուէր Այտան, որ այսօր ալ իր
 սովորական զեղեցկութիւնով կը շողար:
 Սեւը որքա՞ն լաւ կը վայելէր իրեն: Կար-
 ծես նոր Բոստիլմ մը կարել տուած էր:
 Եւ մարգարիտէ մանեակը, քիչ մը ծած-
 կըւած պլիտ սեւ լաթով, բաւարար էր
 դադափար մը կազմելու համար Այտային
 բուն կարելիութիւններուն մասին: Այն
 թեթեւ ժպիտը, որ Տիկին Սիրանոյշ
 կարծեց տեսնել անոր լըթներուն վրայ,
 ուրկէ՞ ծնունդ կ'առնէր: Բնաւ ալ չէր
 յարմարեր ան օրուան լըջութեան:

Ճամբորդութեան պատրաստութիւն-
 ներու մէջ էր եւ անոր համար ալ շատ
 ատեն չունէր Յովսէփ: Հակառակ անոր,
 A.R.A.R.©

որ կրին էր գործը տեսնողը: Իրականութեան մէջ, Սիրանոյշը միայն վախիզը կը պատրաստէր, ա՛յդքան: Դժուար գործերը նորէն իրեն մնացած էին: Առտուան ժամը հինգին գնա՛ւ Էմմիլի, պոչ բռնէ, անցագիրդ երկարածդելու համար, չխօսինք տեսչիքի մասին: Հինգ ժամ ֆրանսական հիւպատոսարանին առջեւը դամաէ կեցիր: Եւ արդե՛ւնքը. ոչնչութիւն: Այս անգամ դժուարանը որկէ առտուն կանոյն ժամը չեմ գիտեր քանիին: Կը մընան միւսները. դերմանականը, գուրցերիականը: Մարգ գործի համար ինչե՛ր փրօներ: Առանձին եւրոպաները կ'երթայ: Ո՛չ, այս անգամ չէր ըլլար, կրնը իրեն միայն արգելք պիտի հանդիսանար: Ա՛մէն տեղ երթալ կարելի չէր ըլլար: Իր բացակայութեան զոնէ ինքզինքին լաւ նայէր եւ Լիւթֆիլին, անշուշտ առնելէքւորին, ըսէ՛ր՝ որ հիւանդ է, պտցած է Ընկերային Ապահովագրութեան հիւանդանոցը՝ Սամաթիա եւ շուտով, այսինքն՝ աղէկնայէ վերջ պիտի վճարէ պարտքին առաջին մասը: Եւ ասիկա ըսելով՝ անհետացած էր Եւրիպիւղի օդակայանի ամբարի մէջ: Ձեռքը՝ վալիզը, եւ բանկոնի ներսի գրպանին մէջ՝ 100 մարգ մը: Ձերբար չէին համարուած, արդէն օդակայան դալը աւելորդ երեւցած էր Սիրանոյշին, աւելի լաւ եղած պիտի ըլլար, եթէ տունը մնացած ըլլար:

...Պոր ցաւով կը գուժեն ժուճը իրենց անմոռանալի, յոյժ սիրեցեալ ամուսնոյն, եղբոր, սանին, ինստիին, մօրեղբոր, չօրեղբոր, քուսայրին եւ ազգականին...: Լաւ խորհած էին Վասիլիլիտա՛նի մարմունը տղաքը, մահազոյն ալ քաշել, լաւ յիշատակ մըն էր անպայման: Անոնք կը կենային հիմա առջեւի կողմերը. ջոյրը, սրուն հետ ո՛չ մէկ հանդիպում ունեցած էր վերջին քանի մը տարիներու ընթացքին, ժառանգի մը պատճառով, եւ քիչ անդին՝ եզրայրը, որ այնքան կը նմանէր իրեն, որ յարմար տեսած էին կարելի եղածին շափ հաղուադէպ անսնկ զիրար: Ո՛չ, ինդիր մը չէին անեցած իրարու հետ: Տունները պարզապէս իրարմէ շատ հեռու էին: Մէկը՝ մեծ

քաղաքին մէկ կողմը, միւսը՝ միւս կողմը: Սիրանոյշ յուզուեցաւ, որովհետեւ կզերականները ներս կը մտնէին Ս. Երբորդութեանէն: Առջեւէն՝ եպիսկոպոսը եւ ետեւէն՝ քահանայ հայրերը: Բարի գրտնըւած եւ այսքան բողբոսի մարդիկ եկած էին յուղարկագործեան: Դիւրու համոզուած էին, մո՛նաւանդ՝ որ իրենց տրուած էր այն քիչը, որ շատերուն կըրտնար շափէն աւելի շատ երեւնալ: Բայց դժուարները միշտ համեմատական եղած են: Ատոնք կարեւոր բաներ չէին. մէջտեղը անվիճելի բան մը կար. թափօրին վեհօրէնը, դեղեցկութիւնը, որ ինքզինք պարտագրած էր նոյնիսկ Սիրանոյշին, որ թերեւս ուրիշ առիթներով այսքան ոպուտուած պիտի չըլլար: Կը յառաջանային զէպի խորան եւ Վասիլիլիտա՛նի տղաքը ամենայն ուշիմութեամբ կը հետապնդէին զանոնք, անոնց իւրաքանչիւր քայլափոխը յաւերժօրէն դրոշմելով վեհօրէնի երեզին վրայ:

Յովսէփ հաղիւ քանի մը անգամ հեռաձայնեց Եւրոպայէն: Սիրանոյշին պատմելիք շատ բան մը չէր մտար: Հարցումները աւելի Լիւթֆիլին հետ կապ ունէին: Հեռաձայնե՛ց: Այո՛ւ: Ի՞նչ պատասխանեցիր: Հիւանդ ես, ըսի՛ւ ինդիրը բարգաւազած էր, երբ Լիւթֆիլին անպայման այցելել ուզած էր Յովսէփին: Լոկ մարդկային վերաբերմունք: Այսքան տարուան բարեկամներ ենք, կարեւոր չէ թէ զործի բերմամբ: Միայն այս վերջին հանգամանքը բաւարար էր անոր այցելելու համար: Սենեակին թի՛ւը: Յովսէփ կիտարթուն վիճակով մտիկ ըրած էր զլիտուպոյտ առաջացնող ծախսերուն եւ իր «հիւանդութեան» մասին, որուն անակրկալ դարգացումը պարտադրած էր, որ զինք ձէբբահ փաշայի հիւանդանոցը փոխադրեն, եւ ճիշդ ա՛յն օրը, որ Լիւթֆիլին ուզած էր այցելել իրեն: Ո՛ր Լիւթֆիլին էր հեռաձայնողը: Պարտակոտնը...

Շատ կը յուզուիմ ըի վերին Երուսաղէմք լսելով: Թաւիլի պէս ձայն է: Անանկ պիտի ըլլայ անշուշտ: Պարտապ տե-

ղը օփերայի երգիչ չին ըբեր մարդը, հա-
կառակ իր անյարմար անուանին: Յակոր
էր, ինչ էր: Ձեմ դիտեր, ես ալ յարկա-
բաժնիս դրան վրայ դրել պիտի տայի՞
«Պետական օփերայի երգիչ»: Լաւ ըրին
«Մասթրովիտէօ»ի աղաքը, հոս օտար ե-
րաժշտութիւն չ'տոցնելով: Քսան հազար-
նոց թաւիչէ մայր կը յորդէր բարձրախօ-
սէն: Կարեւոր չէր, որ գործիքը պէ՛րտօ
եղանակով չէր օժտուած, ինչպէս Սոնա-
յնը: Ձայնը քիչ մը ձեղմացուց, ստեղ-
ներէն մէկուն վրայ կ'ոխելով: Հայրէթ-
թին պէ՛յը լաւ, բարձի մարդ էր, բայց ե-
թէ պատերը ցնցուէի՞ն եւ ան անհան-
դի՞ստ ըլլար: Իսկ երգեցողութի՛ւնը: Բո-
լորովին օտար բան՝ Հայրէթթին պէ՛յին
համար: Անհանգիստ եղա՞ք, Պէ՛հտիէ
հանրմ: Աս մէկը կի՛նն է:

Ճամբորդութիւնն կանուխ վերա-
դարձաւ Յովսէփ: Վալիքը, որ Մերանոյնը
պատրաստած էր, ինքը բացաւ եւ մէջին-
ները տեղաւորեց: Կարագետենց ապըս-
պըբած դեղերը չէր դտած, աւելի շտա-
կը՝ շատ սուղ են եզեր: Շունին անտու-
րը, որ Վերթինենց ապսպրած էին, հետը
բերած էր, նաեւ կատուին վիդի շղթան՝
փոքր զանդակով: Կատու՛ւ էր այդ կեն-
դանին, շուն չըլլա՞ր: Մերան միայն չէր
մը փարփիւմ բերած էր: Գրամը չէր բա-
ւած իբրեւ թէ: Ի՞նչ կար այդ մեծկակ
ծրարին մէջ, զոր օր մը առանձնաբար
էր քաղաք: Ատոր դրամը ուրկէ՞ գտար:
Որո՞ւ համար է: Գործընկերի՞ համար:
Ես գիտեմ այս տեսակ զործընկերները:

Քառասուն հազարնոց վերլին աղօթ-
քէ մը ետք, զազաղը դուրս հանեցին ե-
կեղեցիէն: Ժողովուրդը դուրս կը խու-
ժէր: Նաեւ Սեղբակը, քոյրը եւ եղբոր-
րը: Լաւ բան էր սա վիտէնն: Ըսել է՝
Վարդանոյնն ալ եկած էր: Գուրս ելած
պատուն տեսաւ գինք: Մե՛ղք, որ վիտէնն
հոտերը չէր կրնար գրու՞մէլ երեղին վը-
բայ: Եթէ ընէր՝ Վարդանոյնն զոր-
ծածած փարփիւմը ինքզինքը պիտի
պարտադրէր ո՛չ միայն համայն եկեղե-
ցիին, այլեւ՝ Մերանոյնի յարկաբաժնիին
եւ նոյնիսկ Հայրէթթին պէ՛յին եւ Պէ՛հտիէ

հանրմին: Պիտի դանդաւտէի՞ն արդեօք:
Մերանոյն վերջիչեց. այս ինչ խնդում
էր Իսթիքլալ ճատտէտիին վրան: Մեռե-
լակաօքը՝ առջեւէն, միւսները՝ ետեւէն:
Ուրեմն Ռուբէն այն օրն ալ վրան բաց
կառքովը եկած էր: Զարմանալի բան,
մարդ քիչ մը փափկանկատ կ'ըլլայ: Գաշ-
տաղնացութեան՝ կ'երթաս, սրեկիս:
Յուզարկաւորութիւն է ստիկա:

Եւրոպայէն վերադառնալէ ի վեր,
Յովսէփ աւելի զբաղած էր իր գործով:
Յաճախ շատ երկար կ'աշխատէր եւ ուշ
ատեն տուն կու գար: Այդքան արդիւնա-
բեր եղած էր իր շրջապտոյտը, անհաւա-
տալի բան: Նոր չփումները գործի մար-
դու մը նոր հորիզոններ կրնան բանալ:
Միայն թէ ան ճարպիկ ըլլայ: Յովսէփ ա-
նոնցմէ մէկը չէ՞ր: Թերեւս, բայց իր
կարծածին չափ ալ զգոյշ չէր: Հակառակ
պարագային, Մերանոյն իր զբաւաններէն
մէկուն մէջ պիտի չգտնէր պանդուկ մը
ստացապիքը, ըսա որուն՝ Յովսէփ Ծը-
բանքփուրթի պանդուկներէն մէկուն մէջ
գիշերած էր երկու հոգիներ սենեակի մը
մէջ:

Գրեթէ անկարելի եղած էր Թաքսիմի
հրապարակէն անցնելը: Ո՞ր զօրախաղը
ձաղկեպակ դինկ կ'ուզէր արձանին մօտ:
Առանձին ալ չէր եկած, հետը բերած էր
զինուորական ջոկատ մը: Գնդացիները
օդը անկած կը կրակէին, չես դիտեր ին-
չո՛ւ համար: Մերանոյն անգամ մը նայի-
ցաւ պատկերասփիւռին: Ռուբէնենք լաւ
մը մտած պէտք է ըլլային նոյնմբերեան
այն պաղ օդին: Հակառակ ասոր, բան մը
յայտնի չէին ընե՞ր ո՛չ Ռուբէնը եւ ոչ
ալ Ասաղիկը: Ժողովուրդը լեցուցած էր
հրապարակը: Անանկ է, ուր որ զինուոր
ըլլայ՝ հոն միշտ բազմութիւն կ'ըլլայ:
Այդ օր ալ այդպէս էր: Մերանոյն ամբո-
խին մէջ դարոցականներ կարծեց տես-
նել: Անոնք ի՞նչ գործ ունէին հոն: Վեր-
ջուպէս, ճամբան բացուեցաւ եւ թափօրը
շարունակեց առաջանալ դէպի Շիլլի:

Լիւթֆին՝ առնելիքուորը, հոռոճայ-
նա՞ծ էր: Ե՞րբ պատահած էր ասանկ

բան, որ այս անգամ պիտի պատահէր: Առանկ առնելիքուոր չեմ տեսած: Մարդուն հողը չէ կարծես: Կամ շատ կը վըստահի Յովսէփին: Հեռախօսը հնչեց: Արդէ՛, ըսաւ Յովսէփ: Անպայման Լիւթֆին է: Բայց Սիրանոյ ընկալուչը արգէն ձեռքը տուած էր: Ալօ՛, կնոջ քողցը ձայն մըն էր՝ հայկական շեշտով: Լիւթֆին քոյրն է, ըսաւ Յովսէփ, տասնմին ձգէ մեզ, կարենոր զործի մասին պիտի խօսինք: Սիրանոյ արգէն Սոնային պիտի երթար: Յարկարածին դուռը արժուկով մը գոցեց եւ մտաւ իր արդուկի սենեակը, որ հերանային քովը կը դռնուէր: Այո՛, կ'ըսէր Յովսէփ, հիմա աղատօրէն կըրնանք խօսիլ: Լաւ էր, ա՛ն ալ շուտով տեսնել կ'ուզէր զինք: Կարօտցած էր: Անշուշտ մօտ առնէն պիտի իրականանային իրենց երազները: Դատա՛րկ կենալ: Ո՛վ, ա՛ն: Զարմանալի՛ բան: Ան էր, որ ամէն ինչ խորհած էր եւ դատած վերջնական լուծումը այս խնդրին: Բնականաբար առանց որեւէ հետքի, սպա ի՞նչ: Ընդմիջտ պիտի միանային: Որոշուած բան էր: Այս անգամ անպայման պիտի յաջողէր: Աէ՛ր հաւատար: Քիչ մըն ալ թող սպասէր, պիտի տեսնէր, թէ պարսպ խօսքեր չէին տանք:

Վերջապէս հասան Շիրլիի դերեզմանատունը: Դազաղը հանեցին կառքէն: Ի՞նչ է, Ռուբէնը եւ Ատողիկը չկայի՞ն: Կարծեմ շնորհքով մը մտած էին: Ատիկա թող դատ մը ըլլայ անոնց: Փոքր արգէն փորած էին: Եպիսկոպոսը եւ քահանայ հայրերն ալ հոն էին: Նաեւ քարեկամները: Սեղաւորը երկրորդ կարգը կեցած էր: Գլուխը դուրս ցցուած էր: Դիտած առեւնը նշմարեց. քոյրը հոն չէր: Մինչեւ եակեղեցի եկուր եւ թաղման ներկայ մի գտնուիր: Կ'ըլլա՞յ ասանկ բան: Աղօթքներուն աստեղը վիտէոյին ձայնը գոցեց: Անտանելի բան էր: Եկեղեցիին մէջ եղածը կը բաւէր: Հիմա դազաղը պարաններով փոսին մէջը կ'իջեցնէին: Կամաց, կամաց, տանց որեւէ սնապարանքի:

Սիրանոյ ծունկի եկու, ժօռեցաւ պատկերասփեռին, ա՛յնքան՝ որ քիչ մնաց քեթը պիտի դպէր անոր: Այո՛, կատկած չկար, փոսին մէջը կ'իջեցնէին զազաղը: Ամէն մարդ կը տեսնէր այս մէկը: Կամաց, կամաց: Անապարեցէ՛ք քիչ մը, ի սէ՛ր Աստուծոյ: Ձէին լսեք, կարելի ալ չէր: Ստեղծերուն վրայ կոխեց, ձայնը բացաւ, զործիքը զոտացուց: Սեւ դոյն համազօգեւորէն վար կը ձգէին: Եւ իրենց կ'ընկերանար երաժշտութիւնը, որ Սիրանոյ անձամ ընտրած ու ՎՄԽԹԵՐՎԻՍԻՅԻ տէօօի ճարտիկ տղոցը պարտադրած էր: Քանի որ վճարողը ինք էր: Կը հնչէր ճիւղակալան: Ինչ կ'ուզէ թող ըսէ Հայր ըկթֆին պէ՛յը: Իր հողը չէ: Ո՛չ այսօր, ո՛չ այս անգամ: Սեւ համազօգեւորէնով մարդիկը պարանները վեր քաշեցին: Դազաղը փոսին մէջն էր: Կարելի չէր տեսնել զայն այլեւս: Հակառակ անոր, որ ծունկի եկած էր Սիրանոյ: Տղաքը քամերան վերէն պէտք է բռնէին, որպէսզի փոսին մէջը տեսանելի դառնար: Բայց աւելորդ բան էր, Սիրանոյ վտահ էր, որ զազաղը եւ անոր հետ միասին իր Յովսէփը փոսին մէջն էին: Երիցը կը շարունակէր դառնալ անձայնանշուղ, սփռելով յուզարկաւորութեան վերջին փուլերը, որոնք այլեւս բնաւ հետաքրքրական չէին: Վերջաւորութեան հասած էր երիզը ու կեցած: Սիրանոյ զայն գործիքէն դուրս հանեց: Պա՛մ փուր լ'Օրիան:

Կու դա՞ս կոր, պոռայ Սոնան վարկ պատշաճմէն: Այո՛, պատասխանեց Սիրանոյ, վերցուց իր պնակը, նաեւ՝ Յովսէփին մաքուր պնակը: Քանի որ ան փառատօրէն այսօր ալ պիտի չգար ճաշի, պիտի չկարենար դալ: Ու շարունակեց ռուտել այն կաթնապուրը, որ դեռ կը կենար իր պնակին քովը: Այն կաթնապուրը, որով Սիրանոյ ձգած էր խաղալ ճակատադէր: Կու դա՞մ կոր, Սոնա, սպասէ՛, ակնոցս կ'առնեմ կու դա՞մ կոր:

ԲԱՅՅԻ ԲԷՊԱՊՃԵԱՆ

Վ Ա Ր Ա Ն Ո Ւ Ժ

Ի Ի Ղ Ա Ն Կ Ա Ր Ը



Տիկիմ, հայեցե՛ք :

Ա՛ :

Ոչ, մի հշտք,
 Թաւիշը բաճար է: Հչացե՛ք կրկին, —
 Ուրեմն ունի ձեր վիզը ռզորկ՝
 Երակներ բաճում: Անա կ'անհետիմ:
 Բայց ի՞նչ կը ծածկէ լուսբեամբ հիւսուած
 Ձեր վարագոյրը: պիտի տեսնէի
 Ձեր ճիշիմ ճեղքէն, բայց շտապեցիք
 Փէշերը փակի իբարու վրայ:

Իսկ վարագոյրը հրապոյթն իսկ է:
 Եւ շեմ ակնարկեր անյայտը ծածկող
 Իր դերքիմ միայն, այլ՝ իր սեփական
 Կայքին ու կեանքին, հիւքին մաւղուն,
 Վստահ սանակին, ծածան ծալքերուն...
 Սակայն իմ սէրը գտնիմ արձակեց —
 Բայց պարեգօտը փայլներ չունի:
 Ա՛հ, այս պատահար. փոխումն արտառոց
 Կը բռնի թէն, բայց ցամ է ցնցող,
 Թելադրութիւնը՝ սահմակեցուցիչ:
 Բայց ո՞ւր է հիմա երկքերք ձեր շուրթի
 Պրկումն երկդիմը, որ թէ՛ կը մերժէր
 Վրճիմիս շոյով պատտաւիս վրայ
 Մէկ այլ գոյութեամբ ապրելու շոյու
 Իմ ստաղարկը, թէ՛ կը վառէ գիւ

Խոստումով մը շէջ՝ որեւէ վայրկեան
 Յատկեյաւ դէպի համբար մը յայրատ:
 Ոչինչ ձեր դէմքէն, աչքերէն, շունչէն.
 Սպասողական սազմովարութիւն:
 Ինչո՞ւ մերժեցիք: Ի՞նչ, կ'ընդդիմանա՞ք
 Քանի մը օր մերկ ներկայանալու
 Իմ առջեւ, ապա՝ ներկի խորհուրդով՝
 Բոլորին, բնութիւն: Ո՛չ, ձեր անհամբար,
 Սեպ աղիւսներուն պէս հաստատ գիտէք,
 Որ մերկանալով դուք չեք յանձնուիր,
 Այլ կը Յաւանէք: Գիտէք խաճառել
 Տապկուած հասու գիտար, փրցընել
 Ակումներու գոյս փայլատեղանով:
 Ձեր ամուսի՞նք: Ձէ՞ք ար, անտարբեր,
 Քօթանց ուները: Դա՞՞ք էր կը թօթուէք:
 Ո՛չ, դուք չուզեցիք տրուիլ վրձինիս
 Վարպետ, հայակուսի տանակով վարկէս,
 Եւ շրջանակուսի շարժում մերկութեանց
 Այս շէքերքին մէջ, — ու շարաստի
 Անխնայ՝ փոխան իշխելու... բնութիւն:
 Ոչինչ ըսին ձեզ կիներն այս՝ շարուած
 Պատի երկայնքին. ծպիտով մ'անցաք:
 Հիմա ալ կարծես... Ոչինչ չըսա՞ւ ձեզ
 Յոսի մարմիններու ազնաստումն... անխիղճ —
 Կստած է ահա անկողնի եզրին,
 Մեզի կը մայի իբացած ու հուշտ,
 Եւ... փեռնկուած, կարծես կացինի
 Հարուածներ մեղքած ըլլային իր դին,
 Ենտեքն եմ հիմա պատտարին վրայ:
 Ետին, սաւանն դուրս է մոզարած
 Ոտք մը կանգային: Իսկ Էնտան, ծիւռն
 Վարագոյր մը վարդ, մտքումանն ու մտք,
 Որ սիւքէն պիտի սուտանի կարծես:
 Այդ ես եմ, ես եմ, բայց պատտանէն դուրս,
 Կոնակս՝ կնոջ, որ դեռ էիջ տապ
 Մարմինս կշռեց իր մարմինն վրայ,
 Այսքոն կարգաց, հայեացքս շառած
 Եւսի առ ծուփ ծափազ հուր վարագոյրին,
 Որ թիթեռնիկի թեւերուն մտան
 Պիտի թերթատուի, սուա՞ղ, հազու թէ

Ես փորձեմ եղիլ . . . : Բայց սուս անցնինք :
 Մի դայժիք : Անցնինք : Ես ինչու կինն այս,
 Մրանին հսկայ մեծակուրեան մէջ,
 Իր պիւնտատ ձեռքը կը սեղմէ .
 Ճաթած, ճեղքուած հայելիին մէջ,
 Զիզը ու գարիւրանք գեղազ աչքերով,
 Արնով շարահաւած խճանկարը՝
 Իր դին կը դիտէ : Ու զինք կը գիտեն
 Պատին յատկացուած վարագոյրներու
 Բարգելը մայրի . գետինը դիզուած՝
 Ամբամիստ, հանցիտ : Ո՞վ կրնայ համբել
 Ծախերն իրենց բիւր . ո՞ր կը տանին, ո՞ր,
 Ալիքներն հագար . որ յանկարծ, յանկարծ
 Պիտի ողորեն քրանն այս ստանած,
 Կինն այս հերձուած, այնն այս՝ սղառող
 Պատտանին վրայ, բէն ինք չկայ :
 Վերջապէս, Տիկին — բայց ի՞նչ կը թիւթէ —
 Այստեղ՝ դուք ու ես . մարմինները մեր
 Անխարդալիս, սակայն խառն, խռոված :
 Զի այ վերջապէս կը համարձակիմ
 Հրապարակ գալ : Ձեր կուրծքը կտրած,
 Զոր պէտք է կրծել : Ձեր սրովայնը . . .
 Վանան բնդունայն : Բայց մեր գայլտեան
 Զգտումն մէջտեղ վարագոյր մը կայ,
 Ձեր ձեռքը սառ, կեռ ձեռքը սառ
 Զայն վար կը քաշէ, պորտերն իրարու
 Խորքը կը հային, իրար կը խորհին,
 Ու դէմքերը մեր . . . բայց դէմքերը մեր, —
 Գլուխդ՝ մարմնէս կը բուսնի, մարմնիս
 Գլուխդ է անցած : Վրէժս սառ :
 Ու կը ծախարձիկնք, կը խուճենք անհոգ
 Շրթերն ու բերան : Եւ ինչպէ՞ս արդեօք . . .
 Պիտի աւարտի կեղծ այս նողկալի,
 Մասնանշտուամն այս սահմանկեցուցիչ
 Եւ վարագոյրի բռնադարձումը . . .
 Որ պիտի կախուի՝ բոյսրին ի ցոյց,
 Կոխուի . . . կը խնայուի :

Տիկին, նայեցէ՛ք :

ՎԱՐՈՆ ՈՒԺ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

Ս Ա Հ Ա Կ Պ Ա Ր Գ Ե Ի Ե Ա Ն

Արտակ Գասպարեանը վերի դէպքերը կը յիշէ անշուշտ: Բայց ոչ Հաւասար կենդանութեամբ: Անիկա չի կրնար մտքէն հեռացնել չարագուշակ վճիռը բժիշկին, որ արչալոյսը զողուննիչ զլացաւ արեւմտահայ մեծ արձակագիրին ընդմիտ փակուած աչքերուն: Ու ծագեցաւ արչալոյսը: Համբուրեցին անոր սառած (ինչ ալ արտի) ճակատը կրնքով ու կեցան: Իրենց միտքէն չանցաւ արցունքը, այնքան քանի մը ժամերու վրայ մենք երբեմն կը սպառենք մեր տարիները, առանց անդրադառնալու: Արեւը չէր ելած տակաւին: Գիւղին մէջ սկսաւ կեանքը, կաթ ու բունջարեղէն փոխադրող բանուորներուն ազմուկովը: Սահակ Պարզեւեան իր առաջին օրը կը սկսէր յաւիտեանէն:

Մահուան հետ մենք տարօրէն անհանգիստ ենք: Մինչև դառաղին հանուիլը դուռնէն աշխարհ մը մանրամասնութիւններ, որոնք մեր բուսակենցաղ վարժութիւնները կը խանգարեն: Կայ տակաւին ուրիշ շրջան մը, մեռելին ներքին արդուզարդէն անկախաբար: Պատանք: Ատեղ, Թունկ, Կրակ, Բաներ՝ որոնց վրայ մտածելն իսկ սառսապանք է մեզի: Տիկին Գոհարեան աղաչած էր Արտակին, վազել Հիւանդանոց, մեռելներուն մոմը, աշտանակով, բերելու: Անոր մեկնումէն հաջ, առաջին անգամ իրարու դէմ կեցան մայր ու աղջիկ: Անդգայ, անբարբառ: Ով նետեց զիրենք իրարու դիրկ...

Վառեցին մոմը Պարզեւեանի սնարքին: Ու զցուրտ անոր ճառագայթները իրաւ էին, անոր դէմքին: Կապուտիկ անոր շրթները կը թուէին զողողալ տակաւին, կարծես վարանելով պատմել դերազոյն փորձառութիւնէն: Տպաւորիչ դաշկութիւն աւ զեղեցկութիւն էր այդ մեռելը: Ինչի՞ր տեսան այդ կտաւին վրայ (դէմքին) երկու կէ-

ները, վերջապէս խոնանալ կրցող իրենց աչքերուն ետին, Ոնքը, երբ ծնրադիր իջան աղօթքի, մաշիճին աջ ու ձախ եղբերուն...

..Արեւը փառք է ու քաղցրութիւն, ջերմութիւն ու արիւն, ու ապրումէ պատճուան (ինչո՞ւ՞ ոչ պատանք) մանկամարդ մարապետին վրայ, Հարսնութեան ոսկի հալաւ, պիտի ըսէր զաւառացի բանաստեղծ մը: Երիտասարդ կինը, որուն դէմքը ըլլար կարծես անպէտ, տեսակ մը հեքիաթ՝ Արտակ Գասպարեանի աչքերուն: Ո՞վ անոր յիշեցուց, թէ ամբողջ սա վերյիշու՞մներուն ընթացքին այդ կինը չէր ունեցած ոչ մէկ շարժում, ծունկի փոփոխում, ըլլալով միակտուր արօթքը գիրքերուն: Մատուռ լման ներս առած է մայրամուտին պերճանքը: Պատերէն՝ պատկերները, ներկերը, դիրքերը, խաչերը, նոյնիակ լոյսի զայրաբներուն մէջ լողացող շամակաղները, պոյնթոր տարբալուծող ապակիները աղօթքի են: Թող ըլլան: Բայց ինչու, Արտակ Գասպարեանի մտքին՝ զարնանամուտ դիւերուան զարնանադեղ առաւօտը կը յամառի ու կը կենայ, բիրտ, աննահանջ: ..Ու մեռելը, մաքուր, դեղեցիկ, Հանդերձուած, ծաղիկներով պսակաւոր, որոնք հասցուած են արտակարգ առատութեամբ Մարանին ինքնաշարժովը: Գաշիւրէն — Հայութիւնը — ուղի, պարզ ու պաշտած, նոյնիակ քիչիկ մը առաւելագոյնից փառքով առաջնորդելու մեծ արձակագիրը իր գերազոյն հանգիստին: Մարդիկ կը կարծէին զարմաննէ՞լ զրադէտին անգարման ողբերգութիւնը, երբ աջապէս շարժման կը մտնէին՝ անոր թաղումը «քերթուածային» մայրչլութեամբ մը գլուխ հանելու: ..Թաղման կարգը, լայն, լեցուն, փառաւոր, այնքան պիտի ու Հաղորդական զգայութիւններով ծիծաղելի փառաբարութեանց յերան յաղուրդովը, որուն խոր, կեղծաւոր հասպաշտութիւնը կը ջնանք վարագուրել, այսպէս, պատուոյ մէջ խղիւղ, փորձելով մեզմէ անդարձ բաժնուածներուն դադադր, զոնէ քանի մը քառորդներու երկայնքին ըլլալով լուրջ, առնուազն՝ իրաւ, երբ կը յօժարինք ընդհանուր մեր գործառնութիւնը, ձգել եւ գրասենեակները, տուները, ներկայ ըլլալու համար ժամ, երբեմն գերեզման: Ու դամբանականները: Առաջնորդ սրբազանը, որ ներկայացուց Հանգուցեայը իրեւ մէկը իր մտերիմներէն, Հանդիսարան շքեղ տուրքերու, խօսքի ու գործի, մեր մտաւորականներու փաղանգին մէջ այնքան բացառիկ ու փառաւոր իր դերով ու հայ դպրութեանց տարեգրութեանց մէջ անճոռանալի իր էջովը: Եւ Հայցեց «Հոգևոյն արթոյ» մը՝ խիթարութիւնը իր «պարագաներուն», չմոռնալով անոր հոգին յանձնել մարդասէր Փրկչին քաղցր նկատառումին, մարդկօրէն կարելի անոր սայթաքումները բաշխելու իրեն, իր աստուածային անուպառ ու անյիշաչար ողորմութեամբը: Առաջնորդ սրբազանը սուտ չէր խօսեք, բայց կը խօսէր շեղ, քանի որ այդ դամբանականէն ճիշդ քսանը չորս ժամ առաջ, գործ պատրուակելով, մերժեք էր բնորունի գրագէտին այցելութիւնը, ի յառաջագունէ Համոգուած ըլլալով լեզի ժամուան մը իրականութեան, արեւելակայ անգուպական թատերագիր ծիղանգատէի ի պատիւ սարքուած ներկայացման մը հովանաւորութիւնը շնորհած ըլլալուն, զայն մերժելէ հաջ Պարզեւեանին հեղինակած ու քննադրուելիք մէկ խաղին...: Յաջորդ դամբանախօսն էր առաջնորդ սրբազանին կարգադրութեամբը նոյնինքն ձիւնազատէն, որուն դամբանականը խմբադրուած ու ձեռքն էր թխած նոյն ա-

ուղեորը, անոր անձնաւորութեան հաւանական հմայքը ի շահ ներկայացման օգտադորձելու գիտումով: Անհարակ, մանաւանդ անպիրտ խօսողը պաշտօնական երկու էջ սուտ գովեստ կարդաց, առանց առաւապելու, որուն մեծագոյն անպատեհութիւնն էր անշուշտ սեպհական սեւորտութիւնը, արհեստակցական նախանձի արդիւնք, Պարզեւեանին թատերական անապառախութիւնը՝ այլապէս խոչընդոտով: Մարդիկ տեսան, որ կանոնաւոր բնութեցումն իսկ կը պակսէր արեւելահայ մեծահասակ բառերագիրին, որ երկու նախադասութիւնէ ետք չէր կրնար շնայիլ Ռիթմիկա իր աղջկան, անբացատրելի կերպով թեթեւ հաղուած, մանաւանդ կիտաւրիան, անգրած կեցւածքով: Անկէ ետք Իշխան Պողոս Արծրունին, քովիկը Մինտա Մարանը ու քանի մը աղջիկ, Հնդկահայ իշխանը, դարձեալ թուղթի վերայ, ողջերթ մաղթեց մեծ գրագէտին ու թեթեւութիւն հայեց ածոր բարեւոյնն եւ Օրիորդ Գոհարեանին: Ամէնէն մերթին խօսողն էր Հանպուչկաւին մտերիմ ընկեր բանաստեղծ Տիրանեանը, որ զժուար հասկցուող բառերու մրային գտաւ. նշմարիտ յուզումը, երբ կանգնուեալ մաղթեց անոր Հողիէն աւելի մարմինին, այդ սխրալի մեղելին արտաբայ պատկերին անշուշտ վերաբերեալ որակով, աղքատիկ իր սեւեւեւին ամբողջ ատապանքը, կուսի ընկերոջ մը անկեղծ արցունքներովը հետանալով զագագէտն: Առ ամենահաս Մինտա Մարանը, որուն հանդերձած հոյակապ մեղելիակազմը ամբողջ Պահիւրէն խօսեցող շարաքներով: Ենթանականութիւնը այդքան կ'ըլլար: Մարդիկ կը սքանչանային հանձարեղ պանդոկապետին ո՛չ միայն տառաձեւութեան, այլեւ՝ հաշիւներուն, քանի որ պարզ էր ծրարիւրը, զկատարով եղնիկ որոյնքան, զասական առակը փոփոխէն բաց խօսքի շանկու աստիճան, թրջական արամտութիւնը, ալ զանպաշտպան՝ Մոնա Գոհարեանին հաւանական ճակատագիրը հետուէ հետու թիլադրող, բայց անմոռանալի ու տարօրէն արտառուչ Անգա Միրովան, որ, Տիրանեանին հետ առտու կանուխ հասեր էր Հելուան, միտթարած Արտեմիս Գոհարեանը իր ժուժկայ ու արի միջոցով, պատասխէ մը ձեռքէն ասեղր ասած Պարզեւեանին մարմինը պատանելու, դէպքսուն մարդ միայն ձեռքով ազատ դերագոյն զկարէն, հետեւեր մեղելական թափօրին, իր ճերմակ մաղերուն մայելուցութիւնը հակադրելով Մարանին գուղիններուն ահաւոր արդուգաղին: Յուզարկաւորները հասկնալի էր որ ունենային բացառիկ հետաքրքրութիւն այդ անձանքներու հիւն մրայ, քանի որ կործանած Տիկին Գոհարեանի կուշտէն յրաժնուեցաւ: Այդ հետաքրքրութիւնը հասաւ իր լրումին, երբ արարողութեան աւարտումէն ետք, կախարիչը գետեղելէ ատալ, օտարուհին անգամ մեղելին գլխուն կողմը, ասեղը ձեռքը, հազիւ տեսնելով — արցունքները ողողեր էին անոր յատ կապուտիկ աչքերը: Կարեց գոյնը, հոգածու, մարանտ, միտին փորուածքը պատանքին ու ընդմիջու փակելէ ատալ կտաւին ծաղըք այդ «թանկագին» երեսին մրայ, կեցաւ բուսէ մը: Ասիլի ուզող, տեսնել ուզող մէկու մը տապնապով, հետու եւ մարանտ — մարդիկ կարծեցին հասկնալ, իրենց ձեռքերով ազդուցանողութիւնը — ծեցցաւ անոր թերին ու կապուտիկ անոր յրթներուն դրաւ իր յրթները, խոր ու խաղաղ Համբարով մը մտակելով Մահակ Պարզեւեանի քառորդ դարք ու գայն ճամբայ հանելով իր նոր ճակատագրին: Խոսմած էին ամէնքը: Բանաստեղծ Տիրանեան թալուեցաւ մէկզի, կենալու անկարող: Նրապատ էր Տիկին Գո-

Հարեանք: Մանուկի մը պէս կը հեծեծէր Սոնան: Ըսի, թէ հոգե-
վարք մը չէր պատմուեր: Եւ զարկուտորութիւն մը: — Շատ անգամ
անիկա սկիզբ մըն է:

Աւելորդ է խօսիլ այն Հազար ու մէկ շնչին մտնորմասնու-
թիւններէն, որոնք մեռելին առաջին օրը կը սեւեռեն մեր մաքին: Արտակ Գասպարեան ամբողջ օրը անցուց կործանած վիլլան: Եղաւ
ականատես սգաւորներուն այգիութեանց ու անպատմելի անսարա-
նին, ուր Գահիրէի պատուական ազգայինը, որրուհիներու պաշտպան
Մինաս Մարանը անվերադարձ ճամբու կը դրուէր, Սոնային թատե-
րական մէկ հրամանով: Եղաւ խոր հանուշով դարձեալ ան-
կանատես միւս արհամարհանքին, որ կորաքամակ գրեթէ կը
վռնաէր հնդկահայ իշխան փեսայուն, Պօղոս Արծրունին «դէպի
իր ճահիճները», խնջուները: Մէկ օրուան մէջ այս ծանր էլոյթները
երեւան կը բերէին անհասկնալի աղիկը: Արտակ Գասպարեան ճա-
րեք էր մօր ու աղջկան համար սուգի զգեստ, մնացեր անոնց մենու-
թեան ըով, առանց բառի, ցոյցի, փախաքի, կատարելով բոլոր պարտ-
քերը, զորս պարագաները եւ սիրտը կը դնէին առջին: Ու... ապրեր,
ի՞նչ կարգին, անուարելի ուրիշքն ալ, կէսէն վերջ, միշտ յարագուշակ
անապատին մէջ, նոյն թարեբուն վրայ, ուր շարաթ մը առաջ երկու-
րան էր մանկամարդ կնոջ մարմինը...: Ուրիշ վէպ մը, անշուշտ,
այդ հասարակ (կէս կը նշանակէ դերքերու բառով) գիշերը, ուր բա-
ռէ բառ, խօսքէ խօսք, յուշքէ յուշք Սոնան քաշելու մերձաւոր անց-
եային ու պատմեր անպատմելին: Աղջկան բերնէն սա խոստովանու-
թիւնը ո՛չ ոքը էր, ո՛չ դիակ, ո՛չ քերթուած եւ ոչ ալ գղջում: Ձունե-
ցաւ արդարագման տկարադոյն ճիգ մը անգամ: Հակառակորթն էր,
որ մեծ է մեր բոլորէն: Չպատասխանեց հարցումին, որով միամիտ
երեսասարդը կ'ուզէր իմանալ անոր արտին տրամադրութիւնը՝ կը
սիրէր: Սոնան գոհացած էր, յիշեցնելով Գահիրէի պարտեղին մէջ
Արտակին հետ իր խօսակցութիւնը այդ զգացումին մասին: Գարձեր
էին տուն, քիչ մը աւելի թեթեւ, թիչ մը աւելի կոտորած, բայց խո-
րագոյն ալ զգացումով. կնոջ մը մեղքը մեռել մըն է մեր մտքին մէջ:
Բայց մեռել մը միշտ աւելի է, քան կասկածը, սուտը, խաբէութիւ-
նը: Արտակ Գասպարեան այդ գիշերին միւս կէսը լուսցուցեր էր բազ-
կաթոռին լաւով, յին հոտերուն մէջ եղբեւանիին ու ընդունելը աղջի-
կը իր կուշտին: Անիկա չէր համբուրած այդ թարմ վիշտը — ամ-
բողջ յարաթը Սոնան միակատուր լաց էր եղած — ու իջած, լուսնա-
լուսն՝ գործի: Իրիկունք չէր կրցած չվերադառնալ:

Կարիք կա՞յ նոր վէպ մը սկսելու, որպէսզի լուսաւորուին բո-
լոր տագնապները, որոնք այդ գիշերէն ծնունդ առին ու յանգած են
սա ժամուն, իրիկնամուտն ու ամառնավերջը, մատուռի մը վերջա-
լոյսին մէջ, ուր կը մտարեք զանոնք Արտակ Գասպարեան, քիչ մը
անդին, մայրամոցի սրահին արհնաթաթախ մահիճին մէջ մահուան
դէմ ոգորումը ընող աղջկան տրաման վերածելով իր ճշգրիտ իմաս-
տին: Անիկա կը գգար, թէ ողջ լուսնէր ելլելիք սա մատուռէն զաղէ-
տի մը պարագային» ու աղէտը Սոնային մահն էր այս անգամ: Անի-
կա կը շարձարուէր երկրորդ յանախանքէ մըն ալ, Մահակ Պարզեա-
եանին մէկ պտտումածքէն անոնց իր սկիզբը: Սոնան ամէն օր, այդ

կէս գիշերէն ասդին, կը կարդար պատմուածքը, որուն մէջ կինը իր արգանդին պտուղը կը սպաննէր, զայն աշխարհ բերելէ ետք, յազեցընելու համար այդ մանուկին հեղինակին դէմ իր անբասելի վրէժը... Սոնա Գոհարեանը, նոր զգացման մը սաղմին մէջ: Նո՛ր վէպ մը: Չունիմ ասոր ո՛չ կարողութիւնը, ո՛չ ժամանակը:

Ու արագ՝

— Այս երկրորդ կէս գիշերէն մինչև սա մատուռի բողբոջ, դէպքերը եղան Նայնբան եղերական: Մախուեցան վերջին գոհարեղէնները, հեշտագին ու քաղցր ընդառաջումով մը Տիկին Գոհարեանին կողմէ, որ կարծես կը պապակէր թեթեւում, հիմնովին ուրացել էր անցեալէն ու իր աղջկան ողբերգութիւնը իր մահովն իսկ դընեւ, եթէ երբեք ըլլար ատիկա կարելի: Գուք գիտնալու էք հարկաւ, որ կեանք ըսուած առեղծուածը կարգ մը մարդոց, Նայնիսկ ժողովուրդներու վրայ շատ յաճախ ուրիշ կերպարանք չի հագնիր: Այս մէկը, սա աշխարհին երեսին պիտի լայ ու արցունքով պիտի մեկնի տակէ: Աս ժողովուրդը, հակասակ իր բոլոր իրաւունքներուն այդ կեանքէն, պիտի դարբերով տոււայի գերութեան մէջ, ուրիշներուն վայելչին համար պարտաւորուած իր ուժերը սպռնելու: Աս այսպէս է: Գուք գիտէք ասոնք: Բայց չէք գիտիր, որ Արտակ Գասպարեան վէպի հերոս մը չէ Սահակ Պարգեհեանին նման, որպէսզի իր տաղանդին ուժովը ապրելուն, ճակատագրին արարքը, իր բնաստը չարիքին մէջ սրբազրել յամառի ու չհասնի ուրիշ արդիւնքի, եթէ ոչ այդ չարիքը խորանարդեալ կրելու, հազնելու թիտպարտութեան, սա ալ անսրբազրելի, անվերադարձ, Սահակ Պարգեհեան, արեւն ըլլար ոտկի ջուր, պիտի խմէր զայն քաղցած գինիի նման: Արտակ Գասպարեան պարզ, միաժիտ, աւելի քան իրաւ մանուկ մըն էր, երեսունի դուռներուն: Անհունորէն բարի: Անսրբազրելի ոտմանթիք: Ու նոյնքան հայ: Ասոնք բոլորը լաւ: Աօիէ անդի՛ն: Անուշտ: Նոր չեն, որ սպառնալու թեան տուներէն մարտիկ կը հաւատան առաքինութեան բնմիւղումին: Արտակ Գասպարեան, պատերազմի սերունդ, շատ բան մտածելու ասեն չէր ունեցած, մարդերու անզգամութիւնը հերքել համարձակելու համար: Ո՛վ էր մեղաւորը, պատասխանատուն տարիւնան կէս-գիշերին աղէտին: Ու հարցումը կրկին: Անկէ սաղի՛ն: Բայց ինչո՞ւ չէք տար հարցումը — անկէ առաջ: Անիկա կը սիրէր այդ աղիկը, դարերէ ի վեր, ինչպէս կը պատկերէր իր զգացումը պատրանաթափ Սոնային: Ահա թէ ինչու աստուածային բարութեամբ մը անիկա կրցեր էր առաջնորդել այդ աղիկը, կէս-գիշերէն ետք, անապատէն դէպի միլլա, գրեթէ առանց ցաւի, շքեղու համար՝ գոհունակ, որքան չէր մտածած ըլլալ: Արժան Պարգեհեանին յիշատակը իբրեւ գիակ մը ընդգրկելէ առաջ:

Տեղը չէ հոս ձեռնարկել խոր ու երկար վերլուծումներու ու յորինել պատկերը երիտասարդին, արեւմտեան վէպին մէջ այնքան ընտանի, որ իր սիրոյն կրակին մէջ իր մտքով մարդոց բոլոր մեղքերը: Խորհեցէք միայն, որ յիսուն տարի առաջ, գեղերու մէջ ծակապտուկ մը ողբերգութիւն էր, զանի մը մատուց կեանքերու գնով մը: Յիսուն տարի ետք աղիկը զգայական քաղցրութիւն մը, շնորհ մըն է քաղաքներուն մէջ, զոր շունինք իրաւունք ընդհանրացնելու: Մարմնական գեղեցկութիւնը փաստ մըն է անշուշտ: Ու փաստ է դարձեալ հոգեկանը: Կը գոհանամ գիտել տալով, որ Արտակ Գասպարեան վէ-

պի մը Հերոս չէ Սահակ Պարզեւեանին նման, որ կեանքը ապրելուն տեղ ժամաժամա ըլլար զայն տարրալուծելու եւ կամ ոսկիդիմելու, իր անկարողութիւնն իսկ այդ բանին՝ վերածելու իմաստութեան, յաւակնոտ բառով մը՝ իմաստասիրութեան: Ըսի, թէ կը սիրէր այդ աղջիկը ու ատիկա բաւ է ո՛չ միայն Արտակ Փասպարեանին, այլեւ՝ թերեւս բոլոր անոնց համար, որոնք սա տողերուն գրուած պահուն կը մաննն քան: Է՛ր երբեմն, երբ պահք մը տարելու ուրիշ դժբախտութիւն էր տունին գլխուն: Ի՞մ տղայութիւնս ունի յիշատակներ Հիւանդներէ, որոնք ինչի շարաթուպահը չարեղու համար մերժեցին կաթը ու, Հիմա կը վճռեն, մեռան: Այսօր այդ քրաժիւղով մեզի չի ներուեր գրագիլ իսկ՝ ո՛ւր մնաց ապրիլ:

Արտակ Փասպարեան կեցաւ այդ աղջկան կուշտին, արի, Հեղ, մանաւանդ սիրաւէտ ու հաւատարմ: Գանի մը անգամ անիկա կորովով պաշտպանեց զայն պրուտի փորձանքներու, փորձութիւններու ընդդէմ: Գեղեցիկ, բարի, որառուշ իրեն պարզ բառերով յօրինեց, աղջկան զմայլուն աչքերուն դիմաց կենդանապէրը Արման Պարզեւեանին, որ... Գէ յիթաունէն Սոնային հասցէին հաճած էր քարթ մը ձգել, երջանկութեան մաղթանքներով: Երեսասարդ, որ կը փախչէր հայր ըլլալու ամէնէն տարրական իսկ պարտքէն: Արտակ Փասպարեան վսեմ էր իր միամտութեան մէջ: Մարդերն ալ պարէ էին երբեմն: Ուրիշ անգամ նետեց ինքզինք նեղոս, աղջիկը ազատելու հոտանքէն, կամաւոր թէ արկածի Հետեւանք խեղդուելէ մը ատենալով ետ անտք տատապագին մայրութիւնը: Անոր յղութեան երկրորդ ամտուն էր սա դրուագը: Արտակ Փասպարեան ո՛չ վսեմ էր, ոչ ալ Հերոսական, երբ յօժարեցաւ ձգել իր գործը, մեկնիլ Սոնային Հեա Արեմուտք, Իտալիա կամ Ֆրանսա... մինչեւ որ դար խաղաղութիւնը: Այնքան իբրաւ, այնքան մարդ էր անիկա, որ նուանց Սոնան:

Այս լուսարանութիւնները բաժն առպէսզի գուշակէք պատեառք, որ Սոնա Գոհարեանը մայրամոց է ճիտան: Աւելորդ է պատմել, թէ այդ օրը կանխող գիշերին մէջ ան ինչպէս ինքզինքը խոչտանգեր էր, նմանելու համար Սահակ Պարզեւեանի միպակի Հերոսուհիին: Երկարա՞ծ մահիւնին մէջ, սերկէ արիւնք ողորած էր սենեակին գետինը:

.....

Մատուտին բաց դուռնէն շշուկներ տաքի:
 Արտակ Փասպարեան դարձուց գլուխը՝ Վերտտեաւու մայրապետն էր: Քաղցրատպիտ, բարի, յուսալից:
 Մտաւ ներս, կամացուի: Սչոթող մարապետն ալ փութաց զայն դիմաւորելու:
 — Ատաւած լսեց ձեր ձայնը, տղաք, — ըսաւ անիկա, բարի ու կամաց, — անհետացած է յիւանդը:
 Ելաւ դուրս:
 Արեւը կը վառէր իր վերջին փառքը:
 Արտակ Փասպարեանին արտունեցաւ մայրատան սրահէ դուռնէն աչք մը մետնի խաղաղ, կազդուրիչ բունի մտնող աղջկան պատկերին: Ետքաթ մը ետք, ազատ էր ատենի տալու զայն:

Բ.

Հարիւրաւոր սա չջերը, որոնք անցան, կեանք են, ըսել կ'ուզեմ՝ գրուած են կենսական, կենսապաշտ մղումին տակ, որ մեզին իմաստասէր մը փառքի տանող տարազ մը չէ, այլ՝ գումարը մեր բոլոր տոածներուն ու տուածներուն, մեր շրջապատէն ու մեր շրջապատին:

Բայց որպէսզի ըլլան վէպ, պէտք ունին սա քանի մը տողերուն ալ:

Ամիս մը ետքը, աշնանամուտ օրուան ու ետինքին, Սոնա Գուհարեան մտաւ Պէյնիլտուրէյնի եկեղեցին: Տրտում էր ու տժգոյն: Արի ու իրաւ սակայն: Կը հետեւէին Արտակ Գասպարեանը, միշտ հիացիկ, միշտ մանուկ, բայց տարօրէն ճառագայթուն, գրեթէ երջանիկ: Բանաստեղծ Տիրանեանը, իր ակնոցին անգոյ փոշիները օրրելէն, մտքին մէջ արթնցնելով քանի մը ամիս առաջուան տեսարանը, Սահակ Պարզեւեանին վերջին համարըրը տուող կնիկէն: Կը պակսէր մայրը, Արտեմիս Գուհարեանը, որ կը հանդէսը Մարմինա (գերեզմանատունը Գահիրէի հայերուն), Պարզեւեանին ժօտիկ: Զգիտցան, թէ ինչու մեռած էր եւ ինչպէս: Գտեր էին զայն անշունչ, մահելին մէջ, խաղաղ, վնասուած ու ազատ: Ոչ ոք՝ որ խորհէր հոգեկան հերոսութեան, ինքնասպանութեան: Իշխանութիւնները, հարցուփորձերէ ետք, սիրեցին կարճ կատել: Սիրտի հիւանդութիւնները ըլլային ողջ: Բանաստեղծ Տիրանեանը, այդ մահէն առջին բազմաթիւ փորձեր ժլտած էր վեպակի մը, ուր մայր մը, որ վտանգած էր իր կեանքին արատովը իր աղջկան վարկը, բախար, ծրարած էր մաքրագործել իր գաւկին հասցուած սա թշուառութիւնը, ինքզինքը ջնջելով անոր բախտին քառուղիներէն ու զներ խաղաղութիւնը, գերեզմանէն անդին՝ ինչպէս առջին: Ու եղբրականը ան է, որ բանաստեղծ Տիրանեանն էր նման իր բոլոր բանաստեղծութիւններուն, այս անգամ բառին տալով իր օրտում իմաստը — Պարզեւեանէն այնքան յաճախ սրբապղծուած: Ուրիշներուն կեանքէն ոմանք բարիք, ոմանք ոչ թուղթ պիտի հանեն: Տիրանեանին վիպակը շէր քալած, երկրորդ էջին վրայ ուժասպառ ինչալուն: Բաղեր էին խեղճ կնիկը, ժօտիկ էր սիրահարին ու մոռցեր:

Քահանան օրհնեց պսակը: Մարդիկ շարմացան այդ շուտիկփուտիկ, գրեթէ գաղտուկ կատարուած միացումին: Մայրատանին պատմութիւնը թէեւ իջած փողոց, բայց չէր եղած հրապարակային վէպ: Գիշեր միայն եղան գիտակ տրամային բուն խկ տարողութեան: Ու այդ քիչերը լուեցին: Ոչ ոքի հարսնետոմս, նոյնիսկ պարզ տեղեկութիւն: Կնքահայրն էր բանաստեղծը:

Սոնա Գուհարեան շիրջաւ մերժել առաջնորդին բացառիկ ներկայութիւնը: Անտիկալիստ՝ որքան սիրտի մարդ, անիկա իջեր էր, անպաշտօն, այսինքն՝ առանց թափօրէ, ժամ, կեցեր դասին ետին, գրեթէ աննշմար, ու արարողութեան աւարտումին, քալեր ներս: Անիկա օրհնեց Բարեբաւն երջանիկ միութիւնը, անտուներ ու խաղաղ արքաներ հայցելով անոնց, ու թախանձեց երկնային մարդասիրութիւնը կիներուն, իր երեսներուն լոյսին արժանացնելու համար անոնց հոգիները, որոնք առնուազն զնեցին, կը հաւատար, իրենց տոտապանք:

ները սա մեր աշխարհէն: Իր մագթանքները ո՛չ գրաբար էին եւ ոչ ալ աշխարհիկ: Կը խօսէր մեզմ ու բարի:

Յուզումը իրաւ էր: Անսպարտ, թերեւս արցունքները ծածկելու համար, իջան զուրո, առնելէ ետքը ալը սրբազանին:

Արեւը զով էր ու զայցր վերի պատերուն:

— Մարմինս՛:

Հրաման ըրաւ բանաստեղծը ժամուն դուռն սպասող կառքի մը:

Սոնա Գոհարեանը ո՛չ զող ունէր, ոչ ալ ճերմակ զգեստը հարս ելլողներուն: Ամուր իր ափը զոցած էր խաչիկի մը, նարտը մեր հարսներուն:

Կէս ժամ ետքը, Սոնա Գոհարեան, կարճ եւ լուռ ազօթէ մը յետոյ, ուր բառեր չեղան, բայց իջաւ արցունք, մօքը եւ Պարզեւեկանին գերեզմանները հսկող խաչերէն վար առաւ ծաղկեփունջերը, կըրցածին լափ իրարու միացուց անոնց ղիակները եւ կապեց այդպէս զոյացած պտակին վրայ իր ափի նարտը: Մահէն անդին պսակն էր ասիկա: Ամէնքը հասկցան խորհուրդը:

Արեւը մեռած էր բոլորովին: Քարերուն վրայ ու արձաններու ոտքերուն սիւր: Ոտրունի թախծութիւն մը բուսաւ մէկէն, հողերուն խորքին՝ ինչպէս սիրտերուն ներսէն:

Նոր հարսը կու լար:

Արտակ Գասպարեան, իր կարգին, չլալու համար զլուխը խոնարհեց թարմ հողքերուն:

Բանաստեղծ Տէրանեանը իր վիպակին վերջին տողը գրեց իր մտքին մէջէն

— Ապրիլ՝ եթէ պէտք ըլլայ, բայց մեռնիլ դիմնալ, որպէսդի ուրիշները ապրին:

ՅԱՅՈՒՆ ՕՇԱԿԱՆ

(Շար. 27 եւ վերջ)

ԿԱՐՕ ՄԵՆԵԱՆԻ ՄԱՅԸ

Երկուշաբթի, 1 Հոկտեմբեր 1988ի առաւօտուն, յետ կարճատեւ հիւանդութեան, Փարիզի մէջ ծանցացաւ սփեռաբանայ ճանաթ արձակադէր եւ հրապարակապէր Կարօ Մենեան (առաջին անունով՝ Կարօ Ղապարտեան)։

Կարօ Մենեան ծնած է Փուրբիոյ երբեմնի հայաշատ կնդրաններէն Փաստաթ, 1898ին։ Ետնորոնք եւ երկրորդական ուսումը տեղւոյն ազգային վարժարաններուն մէջ ստանալէ ետք, կ'անցնէ Պոլիս, ուր Արդի վարժարանէն լրտեսաւար կ'ըլլայ 1914ին։ Եղեռնի օրերուն, ինք եւս կը ճաշակէ տարադրութեան դառնութիւնները եւ Առաջին Աշխարհամարտին ետք, զստեական թուականներուն, շրջան մը կը հաստատուի Պոլիս եւ կը զբաղի ուսուցչութեամբ։ Այս կը փոխադրուի Պուչկարիա, ուր եւս կը շարունակէ ծածառայել հայ դպրոցին, միաժամանակ մասնակցելով հանրային հասարակական զործունէութեանց եւ ստորագրելով հրապարակադրական է-րէր։

Երկրորդ Աշխարհամարտի ճախորտակին, Կարօ Մենեան կ'այցելէ Փարիզ եւ կը սկսի կանոնադրարար աշխատակցել ճեպագոջ օրաթերթին, որուն էջերուն՝ Վ. Իշխանեան ստորագրութեամբ լայն կը տեսնէ իր մէկ շաբթէ՝ «Թուրքիա» իր կողմիցով եւ փորձերով, որ պայթի Երկրորդ Աշխարհամարտը եւ Կարօ Մենեան կը վերադառնայ Պուչկարիա, իսկ երբ 1946ի Մեղաներէն Կարմիր բանակը մտաջ կը գործէ Պուչկարիա, Մենեան կը մերթապարտի եւ կը փոխադրուի Սիպուրիա, ուր բանտարկուած կը մնայ մինչեւ 1950, երբ, շնորհանուր ներումէն օգտուելով՝ ինք եւս ազատ կ'արձակուի եւ կը տեղափոխուի Փարիզ։

Այնուհետեւ եւ մինչեւ իր մահը Կ. Մենեան կ'աւարի Փարիզ, կը վերադառնայ իր սիրած սուպրազին՝ ուսուցչութեան եւ կը շտառանդէ Դպրոցային Տիկիանց եւ Վամաւել Մարտանոն վարժարաններուն մէջ։ Այս շրջանին, ան կը ստանձնէ հրատակարարական պատասխանատու պաշտօններ եւ կ'ունենայ հրապարակադրական ու զբաղանքային գործունէութիւն մը։ Սոսեան Տըզան, Վ. Իշխանեան, Լեւոն Ռուբինեան, Դէա, Մոնագո, վահրէն եւ այլ գրչանուններով կ'աշխատակցի «Յատարչին», «Հայաստան» պարբերականին, «Հայրենիք» ամսագրին եւ օրաթերթին, «Ապարտգոյն», «Ազգային», «Յոռաքերչին», «Ազգային», «Արդի»-ին եւ Սփեռնի տարածքին հրատարակուող այլ պարբերակներուն։

Կ. Մենեան գրականութենէն ներս մտաջ կը



զօրէ երիտասարդ տարիքն եւ իր առաջին վըրջովները կը սկսի հրատարակել 1924 թուականէն սկսեալ։ Առաջին շրջանի այս գրութիւնները առհասարակ հայկական մտայնական պատմութեանցներու եւ հեղինակներու մշակութեան կ'ըլլան, իսկ ասելի ուր՝ սփեռաբանայ եւ իմաստասիրական հայեցող շտափող պատմաագծներ ու տպագրուողաւ էջեր։

1969ին Կ. Մենեան կը հրատարակէ «Աւարտի» մը յուշերէն «Որովանոս», ապա՝ «Աւարտի»-ն օրերէն, «Պարիզի մեղքեր», «Ենչտ անլինքն է արտակայաններ», «Ապագայագծում վառագոյն», «Արեւմտի ցարեր», «Այլաբաբում», «Իմաստասիրութեանց աշխույժ», «Մրցում էր անհրկի-նիլի» անուն զբաղան եւ հրապարակադրական հատորները։

Առ ի երախտագրութիւն Կ. Մենեանի ուսուցչական ծառայութեան եւ հասարակական ու զբաղանքային քաղաքական գործունէութեան, 1975ին, Փրինստան դադարի այս նուիրեալ մտադրականը կը մեծարէ յորինական հանդիսութեամբ մը։ Իսկ վերջերս, 12 փետրուար 1988ին, Ճրանասանայ Դրողներու Ընկերակցութիւնը «Երկր Պատարան-Այլազգան» մրցանակը կը շնորհէ Կ. Մենեանի, իր վերջին երկին՝ «Մրցում էր անհրկի-նիլի» հատորին համար։

Յաջորդ կարգ գրութիւնը, որ ստորագրուած է Օշականի մահուան 15ամեակին առիթով, կը պատմէ թէ՛ մեծազանգ գրողներին խորհուրդներու աշխարհին մէջ թափանցելու մասնաւոր հակումը եւ թէ՛ իր՝ Կ. Մենեանի կենսագրութեան մէկ երկուց...

Կ. Մ Ե Հ Ե Ա Ն

«Չ Ե Ռ Ն Ա Յ Ս Ա Ն»...

Պոլիսը զրաւուած էր քեմալականներէն: Յ. Օշական, Ծ. Միսաքեան,
Հրաչ Փափազեան եւ ես անցեր էինք Պուլիարիտ:

Ծ. Միսաքեան Սոֆիա էր: Հրաչը շուտով մեկնեցաւ արտասահման:
Օշականն ու ես մնացինք Փիլիպէ:

Օշական տուն-տեղ ունէր: Ես, արագիլի նման... մէկ սաքի վրայ էի:
Կը խորհէի անցնիլ Փարիզ:

Մեր ամէնօրեայ հանդիպման վայրը Վեճէմին սրճարանն էր, — ըն-
դարձակ բակ մը, որուն յետամասն էր սրճարանը: Կը նստէինք բակը:
Օշական արդուտարի մտահոգութիւն ունէր:

— Գործ մը ճարենք, — կ'ըսէր միշտ, — կա'մ վարժապետ ըլլանք, կա'մ
նպարավաճառ...

Մեր զօրակարգ»ին առաջին նիւթն էր ատիկա: Բայց նաեւ ամէնէն կար-
ճատեւը: Քանի մը վայրկեան ետք, Օշական անցած էր պրակտիկութեան: Եւ
գրեթէ ամէն օր ինծի կը թեյադրէր, որ դրեմ:

— Ինձմէ դրագէտ չ'եւր, — ըսի օր մը:
— Գրէ՛ կ'ըսեմ, — յարեց, — ես դիտեմ ըսածս, Այս տարիքիդ արդէն
սկսած ըլլալու էիր:

— Գրականութիւնը եւս ամուսնութիւն մըն է, — ըսի, — իսկ ես դեռ
«անշարժահաս» եմ այդ երկուքին համար ալ:

— Գրականութեան համա՛ր ալ:
— Այո՛, նիւթերը, դորս կը նսխադրեմ, կը կարօտին հասունալու
...ինծի հետ:

Օր մը ձեռագիր մը տուի:
— Ի՞նչ է, — հարցուց:
— Համը շարժապատկեր մը, — ըսի:

Առաւ: Ոլորեց ձեռքին մէջ: Եւ իր անո՛ւշ նայուածքը ուղղելով ինծի՝
— Դուն հաւնա՞ծ ես, — հարցուց:

Եթէ հաւնած ըլլայի, զեզի չէի բերեր, — եղաւ պատասխանս:
— Լա՛ւ, — յարեց ժպտուն, — դուն զեզի պիտի չհաւնես, որպէսզի
ուրիշներուն հաւնուելիք ըլլաս:

Յետոյ, յանկարծ.
— Ձեռքդ առ'ւր, — հրամայեց:
Ձարճացած՝ նայեցայ իրեն:

— Տո՛ւր կ'ըսեմ, — բարձրացուց ձայնը:
Երկարեցի: Ձեռքս առաւ ափին մէջ: Դարձուց, ուղղեց, նայեցաւ եր-
կա՛ր, մէկ քանի փաղաքշական բաներ ըսաւ ու շարժեց:

- Ի՞նչ պատահեցաւ, — հարցուցի :
 - Ոչինչ, — պատասխանեց :
 - Սմարտեցաւ դէ՞ծը... ըսէ՛ ինչ որ տեսար :
 - Ձե՞՛մ ըսեր, — յարեց կարուկ :
 - Երբ ձեռքս ուղեցիր, լուսեայն յանձնատու եղար տեսածդ ըսելու :
- Կատարէ՛ խոստումդ :
- Ձե՞՛մ ըսեր, — կրկնեց տւելի վնասկան :
 - Ուրեմն քեզի հետ տար՞ խմելու չե՞՞մ դար ալլեւ, — սպասեացի...
- Ու քանի՜ մը օր չդացի սրճարան... կարկանդակին զէն շնոր աղոց նըման :
- Չորրորդ օրը լուր տրկեր էր, որ երթամ : Գացի իրմէ առաջ : Քիչ ետք բակ մտաւ՝ թուերը շարժելէն :
- Ինձէ՛ կանուխ եկեր ես, — ըսաւ :
 - Ի՞նչ արանս վարդեալին, — պատասխանեցի :
- Մուռ սկնարկ մը ուղղեց : Նստաւ : Խմեցինք սուրճերը : Լոռն էինք երկուքս ալ :
- Ինչո՞ւ կանչեցիր դեռ, — խոցի լուսթիւնը :
 - Ինչո՞ւ չեկար երեք օր :
 - Արովհետեւ չըսիր :
 - Ըսե՛՛մ :
 - Այո՛ :
 - Այլ՛ի... Երկարատեւ բանտարկութիւն պիտի ունենաս, — ըսաւ, տանոց քովնաի կերպեր փնտաւու, ինչպէ՛ս կ'ընեն ձեռնահամները :
- Ինքնարուխ քրքիլ մը ունեցայ :
- Ատիկա պատահելիք բան է, Օշակա՛ն, — ըսի, — բանտարկութիւն... ո՛չ գողութիւն կրնամ ընել եւ ոչ ալ մարդասպանութիւն... Ա՛ս է ամբողջ գիտցածդ...
- Մօ՛, — ըսաւ, — արմուկները տեղադրելով սեղանին վրայ եւ շեշտակի նայելով ինձի, — ես էլ աւ բեռ մը գիրք կարդացած եմ ձեռնահամայութեան մասին... Կը մաղթեմ, որ օր մը չիշխես ըսածս :



Օշական մեկնեցաւ Պուլկարիային : Քանի մը տարի ետք հրատարակեր էի թատերակ մը՝ մէկ արարեաց : Նամակ մը ստացայ իրմէ : — «Ինչպիսիքս Երևան մը բրած ես. հարկ էր գզուշանայ անկէ՛. իսկ տխարիկդ շատ հաւանցայ. թատերադութիւն գրէ, — կը յանձնարարէր :

Ատկէ ետք մեր թղթակցութիւնը չշարունակուեցաւ : Աւելի շատ ե՛ս թերացայ, քան ինք :

Անցան տարիներ : Երկրորդ Աշխարհամարտի վերջնօրեր տարին, 1944ի աշնան, խորհրդային բանակը անսպասելի կերպով մտաւ նաեւ Պուլկարիա : Նոյնմբեր 11ին, երկոյնեան դէմ, ձերբակալուեցայ : Ձեռն տարին ատիկանուտուն ու գրին փոքրիկ խուց մը : Պուլկարական նախկին բանտակի ազաներ քարու վրայ դիպուած էին տախտակամանին վրայ : Նստելու տեղ չկար : Մնացի առջի : Մտածումներ կը անշէին դանկու : Ատոյզ էր, որ աշխարհ մը պիտի թողէի ետիս, երթալու համար դէպի անտարբեր, որ մտայլ ու նաեւ տածանելի պիտի ըլլար անշուշտ : Փրկութեան յոյս չկար : Պարզ էր, թէ հեռանալու վերջին մասը կը սկսէր : Ու կը ցանկայի, որ այդ վերջին մասը ըլլար շատ կարճատեւ...

Այդ մասնադուրբիւններու մէջ, յանկարծ յիշեցի Օշականին նախա-
տեսութիւնը: Ուրեմն, ճիշդ էր ինչ որ ըսած էր, — բանտարկութիւն: Եւ զեր-
կարտակ'... Ու յիշեցի նաեւ իմ հարցումիս տուած պատասխանը. — «Այո՛,
պիտի ազատիս»: Այդ պահուն ինծի այնպէս թուեցաւ, որ ճակատագիրը, իր
կարգին, կը զբջջար երեսիս...

Մտադ էակը, ինչ տարիքի մէջ եւ մտաւոր ինչ աստիճանի վրայ ալ
ըլլա, տաղնապի պահուն կը դառնայ բարեմիտ, կը մանկամտի, յոյսի նրբի՛ն
թելիկ մը կը փնտռէ եւ միամտօրէն կը կառչի ու կը հաւատայ անոր...

Այդ տկարութիւնը թերեւս իր... ուժեղ կողմերէն մէկն է:

Ես եւս, միշտ ստգի, ետիս թողած աշխարհ մը հարազատներու, ընկեր-
ներու, մտերիմներու, դունսւոր ու ժպտուն էջերու, բայց այլեւս դէմ յան-
դիման ժողով ու անստոյգ աշխարհի մը հետ, կառչեցայ այդ յոյսի թելին,
մարդկային ամբողջ միամտութեամբ...

Կը խոստովանիմ, թէ երկար շտկաց այդ թելը: Տանկերկու տարիներու
անողոք պայմանները, ամէնօրեայ տաղնապներ, ճնշում ու զրկանք, ընդհիշտ
մոռցնել տուին զայն:



Օր մը, վերադարձի արտօնութիւնը արուեցաւ նաեւ ինծի:
Շողկաւորը զիշերտան թանձր մութին մէջ անցաւ Խորհրդային սահ-
մանը եւ մտաւ Լիհաստան: Պերլին կը տարուէինք, ինծի բախտակից ծօթը
զերմանցիներ եւ ես: Կէս զիշերը անց էր: Մինակ կանգնե՛ր էի վակոնի նըր-
բանցքին մէջ:

Ու կրկին ետիս թողած էի աշխարհ մը՝ Հոգեկան ու Ֆիզիքական տա-
ռապանքներով լի եւ դէմ յանդիման էի աշխարհի մը հետ, ուր հարազատներ,
ընկերներ, մտերիմներ ունէի եւ սակայն չէի կրնար կրակել, թէ դունսւոր
նոր էջեր ալ վերապահած էր ան ինծի:

Եւ, կրկին յիշեցի Օշականը: Իրականացած էր նաեւ իր կանխատեսու-
թեան երկրորդ մասը, — ազատած էի: Այսինքն՝ կատարուած էր ա՛յն, ինչ
որ կախում ունէր «ճակատագրէն»:

Չեմ դիտեր միայն, թէ իրականած է իր այն միւս նախատեսութիւնը,
որ ինձմէ կախում ունէր, — զրո՛ղը:




...Ու վակոնի նրբանցքին մէջ կանգուն, զիշերային տնթափանցելի
խաւարին դէմ, որքա՛ն հոգի եղաւ ցանկութիւնս՝ վերադարձիս անպայման
տեսնելու Օշականը, ձեռքս նորէն երկարելու իրեն եւ ինդրելու:

— Այժմ գուշակէ նաեւ կեանքիս... մնացորդացը, — Օշական՝ Մետրոպ
Մաշտոցի դամբանին ուխտի գացած Գուրեան Պատրիարքին նման, — «Վար-
դապետ, Ա.Բ.Գ.էդ դաս մը տուր ինծի»...

Հազիւ Հասած Փարիզ, սակայն, խոր, չափազանց խոր ցաւով անդեկա-
ցայ, թէ իր արջերը յաւիտենապէս փակեր էր մեր մամանակակից դրապա-
նութեան ամենատիրական ու ամենարեղուն դէմքը, որուն — թող թոյլ տրուի
գործածել իր բացատրութիւնը, — «էջու բեռ մը» եւ մեծարժէք վաստակին
առջեւ իսկ, մոլեռանդ ու ընդզիցեցիչ այլամերժութեամբ մը դեռ փակ կը
պահուին Հայրենիքին դուռները...

Փարիզ, 1963

ԿԱՐՕ ՄԵՀԵԱՅ



ԱՆԿՈՆՖԼԻԿՏԱՅՆՈՒԹԵԱՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆԸ



«Բազին»ի Հոկտեմբերի թիւով, «Անցնող հարիւրամեակի գրականութեան կշիռը մշտնջու փորձ մը» անուն իր տեսութեան մէջ, Քատերական տարեգրքին վրայ հայրենի գէժքերտէն պարզած տկարութիւնը մատնանշած տեսն, պատճառներէն մէկուն համար Բ. Փափազեան կը վկայակոչէր նաեւ զբազանի մը հաստատումը, սա հարց-պատասխանով.

«Երբ կը հարցնէի՞մք Հայաստանէն եկած գրագետի մը, թէ ինչո՞վ կը քացատրէր Խորհրդային Հայաստանի քառերագրութեան բաժնի՞ն համեմատարար ետ մնացած ըլլալը, մինչ բաժնատեղծութեան մէջ ունէինք արժէքատար հնգիմակներ, գծաշատի անկեղծութեամբ ու պարզութեամբ կը պատասխանէր.

— Պարզ է, դրա պատճառը անկոնֆլիկտայնութեան տեսութիւնն է»:

Որպէսզի բերանացի կատարուած այս ախտանշանայումը առանձին չժընայ, կ'ուշէինք առ այդ նշել նաեւ դրանք քանի մը վկայութիւններ Քատերական արուեստին թէ վէպին կապակցութեամբ: Ուշիդ երեսուն տարի կ'ընէ, որ այս հարցը, անկոնֆլիկտայնութեան տեսութիւնը, զննադատներուն մտայուն թիրախը կը հանդիսանայ եւ ջննադատներուն թիւին կրկինը եւ թերեւ ալ աւելին կը հաշուեն այդ մասին ստորագրուած գրութիւնները: Բաւարարութիւնը հետեւաբար երեքին յիշատակութեամբ, առանց թուական կարգի, Լեւոն Ղազարեանի եւ Լեւոն Հախվերդեանի նշմարները՝ Քատերական մարզէն, իսկ Հրանտ Թամրազեանի վերլուծումը՝ արձակէն, յաջորդաբար՝ «Հերոսի պարլեմը ՅՅական ԹԹ. դրանայի տեսութեան մէջ եւ Գ. Գեմրեանի հայեացքները»,

«Առանց կոնֆլիկտի դրամատուրգիա չի լինի»,

«Կոնֆլիկտը ու կերպարները մեր վէպերում»:

Առաջինը, որ միացեալ հեղինակութեամբ կազմուած եւ 1976ին լոյս տեսած «Աւանդայինը եւ գեղարուեստական զարգացումը» անուն հատորին

մէջ երեւցաւ, կը պարզէ նաեւ այդ տեսութեան ծննդոցը, որ տեղի ունեցած է 1934ին, Մոսկուա, սովետական գրողներու առաջին համագումարին, Գեորգի Գեորգիեանին հակադրուած Ա. Կոռնէյչուկի մտքերուն որդեգրումով: Աւելի շօշափելի գաղափար մը տալու համար այդ մասին, արտադրենք Լեւոն Ղազարեանի ծաւալուն ուսումնասիրութեան սա հատուածը.

«Ա. Կոռնէյչուկի ելոյթում արտայայտուեցին այն մտքերը, որոնք հետագայ տարիներին փաստօրէն դրուեցին «անկոնֆիլիտայնութեան» տեսութեան հիմքում: Այդ տեսութեան համաձայն, առաջաւոր գաղափարի պատկանելը իմքնիմ ապահովում էր յաղթանակը իւրաքանչիւր կանկրետ դէպքում, ցանկացած իրականութեան մէջ: Լաւատեսական կանխատեսումը մեղցնում էր դրաման դեռ սաղմնային վիճակումս:»

Մէջբերուած այս քանի մը տողերուն մէջ է հարցին ամբողջ բարդութիւնն ու պարզութիւնը, թէ՛ Կոռնէյչուկի առաջադրած յաղորդութեան լզըրծուն կեցուածքը, թէ՛ լաւատեսութեան նախապայմանը թատերգութեան համար մահացու վտանգ համարող Լեւոն Ղազարեանի ամողջ պնդումը, որ իբր ուժը առած է յիշեալ համագումարին արտասանած Գեորգի Գեորգիեանի մտածումներէն: Ենթանման կամ նոյն հայեացքներէն թափ առած ըլլալ կը թուին նաեւ Լեւոն Հախվերդեանն ու Հրանտ Թամրազեանը: Եւ տարբեր ալ չէր կրնար ըլլալ, որովհետեւ ճիշդ կ'ըսէր արդէն ծանօթը լեւելայն դատապարտող եւ ալեկոծին, վտանգաւորին, դժուարին ու անպատկերին կարօտով տազնապող Գեորգի Գեորգիեան.

«Անա դուք եկել էք քաղաքն եւ սպասում էք գեղարուեստական ազդումներին քերկրանքի: Ան՝ո, կուլիսների Խոնից Երեսում է. դուք մտածում էք դաշիմում, կարգում էք թերթ: Դուք մոնոլոգայելի էք, դուք համզիտ էք: Ձեր հերթը — դուք կանխա համագումար էք — կը յաղթի: Նա յաղթում է արդէն պիեսի սկզբում, յաղթում է պիեսի կէսին, յաղթում է, ինչպէս կարգն է, պիեսի վերջում: Ոչ մի անսպասելի բան, ոչ մի վտանգ, ոչ մի դժուարութիւն: Ինչպէ՞ս ձեզ պիկոծել: Ալեկոծել ձեզ հնարաւոր չէ, առանց վտանգի ենթարկելու դրամատիկ դրութիւնը:»

Մատնանշուած այս պզտիկ հատուածներուն ընդմէջէն կարելի է այլեւս պատկերացնել այն անկենսադարձը, ուր անտեսուեցաւ «չարուած դործողութեան» մէջ ինքզինք կերտող հերոսին պահանջը ու ամբողջ քառորդ դար թատերագրներուն պարտադրուեցաւ պարմանաւոր հերոսներ բեմ հանելու տեսութիւնը, որ հետագային կողուեցաւ «անկոնֆիլիտայնութեան տիրահաւանկ տեսութիւն»:

Հրանտ Թամրազեան կ'ըսէ.

«Անցել է անկոնֆիլիտայնութեան թէորիայի տիրապետութեան շըրջանը:»

Իրապէ՞ս ասոցեր է արդեօք, թէ երևութապէս եւ մասամբ: Մեր սոցալ-տրուութեամբ երևութապէս եւ մասամբ միայն: Այլապէս անցնող երեսուն տարիներուն ընթացքին խօսքի նիւթ դարձած ու բեմ բարձրացած թատերգութիւններուն թիւը այսքան սակաւ չէր ըլլար: Ու չէր բարձրանար սղբացածայ թատերագիր Գրիգոր Տէր Գրիգորեանի ցաւադին արտունջը, ըստ որում՝ «Տասնեակ պիեսների շարանում մեզ դեռ չի յաջողուել ստեղծել այն հուսատի-լիարիւմ հերոսի կերպարը, որն իր մէջ ամբարի ո՛չ միայն այսօրուայ, այլեւ՝ վաղուայ մարդու առաջինութիւնները:»

Անկոնֆիլիտայնութեան աղէտը աւելի շօշափելի դարձնելու համար, յաղորդող էջերուն կու տանք Լեւոն Հախվերդեանի մէկ տեսութենէն հատուած մը:

Լ. Հ Ա Ն Վ Ե Ր Դ Ե Ա Ն

ԱՌԱՆՑ ԿՈՆՖԼԻԿՏԻ
ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ ԶԻ ԼԻՆԻ

7

Գեղարուեստական կերպարի այս կամ այն յատկանիչը կարող է գրք-
անւորուել իր անմիջական կիրառութեան մէջ միայն, կերպարը՝ իր արտաբնե-
րի, գործողութեան մէջ: Խոչընդոտներից չվախեցող կերպար վերարտադրե-
լու համար պէտք է ցոյց տայ նաեւ այդ խոչընդոտները, ամէն տեսակ դժ-
ւարութիւններ յարթեալովու ընդունակ հերոս պատկերելիս՝ երեւան բերել
նաեւ այդ դժուարութիւնները եւ հերոսին պատկերել այդ ամէնը յաղթա-
հաւրելու ընթացքի մէջ:

Ձի կարելի գծուարութիւնները թոյլ ու աննշան ներկայացնել, քանի
որ այդ դէպքում հերոսի ուժը նոյնպէս աննշան չափով կ'երեւայ: Հերոսի
քաղութիւնն աննշան վտանգ յաղթահարելիս չի կարող տեսնելի լինել: Քա-
ղութեան ու վտանգի չափերը պայմանաւորուած են միմեանցով: Հերոսի ուժն
այն դէպքում կարող է երեւալ, երբ նա լարուած է յաղթելու համար, կանգ-
նում ամբողջ հասակով, այսինքն՝ զանուամ է ակտիւ պայքարի, ուրիշ խոս-
քով՝ կոնֆլիկտի մէջ:

Այստեղից էլ կոնֆլիկտի նշանակութիւնը ընդհանրապէս դեղարուես-
տի, գրականութեան եւ ժանանորայէն դրամատուրգիայի համար, գրական-
նութեան մի տեսակ, որ կոչուած է արտայայտելու կեանքի տոտուել դրամա-
տիկական երեւոյթները: Առանց կոնֆլիկտի դրամատուրգիայ չի լինի, աւե-
լին, շատանց կոնֆլիկտների չկայ կեանք, ուրեմն եւ, չկայ արուեստ, —
դրուած է «Պրաւդան» իր «Յարթեալովու դրամատուրգիայի եւ մնայլը խժրա-
գրական յոդուածում»(1):

Միայն ուժերի բախումն է կոնֆլիկտ առաջ բերում, որը, արտայայտ-
ւած երկի մէջ, իրենով պայմանաւորում է հերոսների վարքագիծը, երկի
սիւժէն, կառուցուածքը: Դրամատուրգիայի բազմադարեան պատմութիւնը,
սկսած «Շոքալուստ Պրոմէթէոսից» մինչեւ «Համիլտոն ու Էստիֆից պատա-
հաւք», «Պետրոսն ու Քաղքեմիսը», մինչեւ սոցիալիստական ուսայիժիզի
դրամատուրգիայի լուսադոյն երկերը՝ «Սգար Թուլլիւսովն» ու «Լեուրով Յար-
վայան», — ցոյց է տալիս, որ կոնֆլիկտը դրամատուրգիայի կենսական
հիմքն է, նրա սրին:

Կոնֆլիկտը (գրականութեան ո՛ր տեսակում էլ արտայայտուած լինի)
նախ եւ առաջ գաղափարական կատակորիտ է, որի լուծման մէջ արտայայտ-
ւում է դրոշի իդէալան ու էմոցիոնալ վերաբերմունքը, այսինքն՝ նրա պար-
տականութիւնը: Առանց տիպական կոնֆլիկտի չեն կարող սահղծուել տիպա-
կան դրութիւններ, ուրեմն նաեւ՝ տիպական կերպարներ, բնաւորութիւններ,
քանի որ գործող անձը բնաւորութիւն է դասնում ամէնից առաջ կոնֆլիկտի
հանդէպ ունեցած վերաբերմունքով ու նրա լուծման մէջ ունեցած ժամանակ-
ցութեամբ: Առանց կենսական կոնֆլիկտի չի կարող լինել գործողութիւննե-
րի զարգացում (դրանք կը փոխարինուեն անհետաքրքիր, տեղում դոփող
դրութիւններով), չի կարող տեղծուել դրամատուրգիական դիալոգ (զա կը
փոխարինուել սարսաձ դրոյցով, քանի որ պիտի գիտաւզը ոչ թէ սովորական

(1) «Պրաւդա 1962, 7 Ապրիլ»:

խօսակցութիւն է, այլ՝ կոնֆլիկտի դրսևորման միջոց), չի կարող լինել լիարժէք սիւժէ, քանի որ սիւժէն կոնֆլիկտի լուծման պատմութիւնն է, իսկ դրամայի էքսպոզիցիան, կուլմինացիան, Փինալը ոչ այլ ինչ են, եթէ ոչ կոնֆլիկտի առաջ քաշումը, զարգացումը, լուծումը:

Այնանոց, ուր կայ կեանք եւ առաջնադասում՝ չեն կարող ուժերի բախումներ, պայքար, կոնֆլիկտ չլինել, իսկ այնտեղ, ուր կայ պայքար՝ պէտք է լինի յաղթուող եւ պարտուող, ճիշդ եւ սխալ, առաջադէմ եւ յետադէմ, նոր եւ հին: Նորի եւ հնի պայքարն իրենով ենթադրում է շատ անլի բազմազան կոնֆլիկտներ, քան կարող է թուալ մեր դրամատուրգիայի ներկայ վիճակից դատելով: Եստ պիեսներ են գրուել, որոնց մէջ նորի ու հնի պայքարը ներկայացուած է իրիւ պարզապէս նորարարի եւ հնամուլի պայքար: Սա հարցի մեխանիկական լուծումն է. նման կոնֆլիկտ, որ ինչպէս է բազմաթիւ յար եւ նման պիեսների հիմքում, իրենով ո՛չ միայն չի սպառում նորի եւ հնի յարասեւ պայքարը, այլեւ դա նրա թիրեւս ամենամեղմ արտայայտութիւններէն է: Նորն ու նորարարը, ինչպէս եւ հինն ու հնամուլը համանիշներ չեն, ինչպէս երեւում է այդ պիեսներից: Նորի յատկանիշները կրող հերոսը կարող է ոչ մի նորարարութիւն էլ արած չլինել. եթէ հերոսն ունի բարոյական բարձր սկզբունքներ, դիտէ ինչք պայապանել, ո՛ւմ դէմ եւ ինչպէ՛ս պայքարել՝ նա արդէն նորի կրողն է: Նոյնպէս եւ հինը բնաւ էլ նորարարութեանը հակադրուելը չէ. հնի կրողը կարող է եւ հնամուլ չլինել արտայայտութեան մէջ: Հինն արտայայտում է այն բոլոր մնացուկների մէջ, որ սեփականատիրական աշխարհը ժառանգութիւն է թողել մեզ՝ անհատապաշտական ռոզերանութիւն, քիչ տալու եւ շատ ստանալու ձգտում, քաղքենիական հակումներ, խարէութիւնն ու ստորաջարկութիւն:

Մեր դրամատուրգիայի մէջ եւս մեր օրերի համար ամենաբնորոշ կոնֆլիկտը համարում էր պայքարը լաւի ու լաւագոյնի միջեւ: Իսկ լաւագոյնի ու վատթարի, ազնուութեան ու խարդախութեան, գեղեցիկի ու այլանդամի միջեւ ընկած անհայտ կոնֆլիկտն էր: Սրանք դիտւում էին իրիւ կեանքի համար ոչ տիպական, ուստի եւ՝ արուեստի համար դրամատիւն չունեցող կոնֆլիկտներ: Եւ դրամատուրգները գրուելով համար շրջանում էին դրանք: Այրօգէս երեւան եկան ու մինչեւ անգամ բեմ հանուեցին «Անուրախ մտրդիկ», «Էրաշայի գանձ», «Մեր քաղկազիմ հիւրերը», «Միլիոն», «Արարատեանցի դաշտի ազգիկը», «Նախնանքի բախտ», «Կեանքի երգը», «Անհամարապատ մարդիկ», «Ամսարտակի կամուրջներ», «Մշտադալար այգիներ», «Պատուի աղիք», «Մեր առանց խարդախների», «Կեանքը քեզից դուրս է», «Փնդ դժուար է մառնալ» պիեսների նման անհետաքրքիր գործեր: Ի հարկէ, կասկածից վեր է, որ այս պիեսների ձախողման պատճառը միայն կենսական կոնֆլիկտի բացակայութիւնը չէ. արանց մի ժառը արդիւնք է պարզապէս ապանորհութեան: Բայց այս բոլոր պիեսներին էլ, անկախ կատարման մակարդակից, միացնում է մի ընդհանուր յատկութիւն՝ կենսական կոնֆլիկտի բացակայութիւնը, իսկ դրա մասին ո՛չ միայն կարելի, այլեւ պէ՛տք է խօսել: Կարող են առարկել, թէ հարկ չկայ անդրադառնալ ակնյայտօրէն թոյլ պիեսներին, որովհետեւ անարժէք գործի թերութիւններն էլ ընդհանրապէս քիչ քան են սպացուցում: Բայց, մեր կարծիքով, դրանց մասին անհրաժեշտ է մի քանի խօսք ասել թէ՛կողմ եւ նրա համար, որպէսզի շօշափելի օրինակներով տեսնենք, թէ մինչեւ ուր կարող է իջնել կեանքի օրինաչափութիւնների ու արուեստի օրէնքների հետ արեւէ ստրկութիւն չունեցող դրամատուրգիան, թէ ինչպէս չպէտք է դրուի պիեսը եւ թէ ինչու այլեւս երբեք մեր դրամատուրգիական գրականութեան մէջ տեղ չպէտք է ունենայ անկոնֆլիկտայնութեան տիրահաշակ գտե-

տութիւնը: Այսինքն մոռանալ նաեւ, որ ապաշնորհ գործը Հինց միայն նրա-
նով չէ վատ, որ ապաշնորհ է. վատ է, որովհետեւ ազատացնում ու ազա-
տալում է կեանքը, ճաշակ է փշացնում, ժամանակ ու միջոցներ է խլում:
Գնդարուհետորէն անընդունելի գործն անընդունելի է եւ զազադարապէս,
ուրեմն՝ չի կարելի լիստել նման գործերի մասին:

Պիեռի չորս արարը լցնելու, շուրջ ութսուն էլ դիտողամեւ շարադրեա-
լու համար այդ գործերի Հեղինակներն ի՛նչ անհեթեթութիւն տեսն որ չեն
Հնարում: Նրանք ուշում են օրը ցերեկով Հանդիսատեսին հաւատացնել, թէ
արտագրութեան ղեկավարը կամ կրօնաստիճանի նախագահը ոչ մի կերպ
չեն ուշում առաջաւորների շարքում լինել, բնու չեն ուշում հասկանալ, որ
Նորարարութիւնը լաւ բան է. գործող սեմինը չեն բժշկում ամենատարա-
կան ճշմարտութիւններ, աղմուկ են բարձրացնում սովորական անախորժու-
թեան առթիւ, անտեղի կոււում սիրած աղջկայ կամ բնկերով Հետ՝ վարադր-
րը փակուելուց մի քիչ առաջ նոյնքան անտեղի հարուստ եւ Ֆինալային
ճուրախ տեսարան ստեղծելու համար: Եւ շատ բնական է, որ բոլոր այդ
պիեռների վերջին տեսարանները յիշեցնում են ոչ թէ Փինալներ, այլ՝ եզ-
րափակիչ Համերգներ: Ո՞վ կը հաւատայ նման դրութիւններին, երբ մարդիկ
տարբարական արամարնութեանը հակառակ բաներ են անում, աննպատակ ներս
ու դուրս անում բեմի վրայ, պարզունակ թեղի ու հակաթեղի առաջադրում
եւ այդ ամէնը ոչ թէ իրենց ներքին մղումներով, այլ՝ Հեղինակային ջեա-
հանդիսների ստիպմամբ: Այդ Հերոսները ոչ թէ կենդանի մարդիկ են, այլ՝
թղթէ պայմանական պերտոնամներ, Հեղինակի հրու-հնազանդ գերիները, ոչ
թէ գործող, այլ՝ խօսող, շատախօսող սեմինը:

Հարկ չկայ այդ գործ պիեռները մի առ մի վերլուծել, որովհետեւ բա-
լորն էլ ստեղծուած են նոյն սխեմայով: Առաջին արարում Հերթապահ սխե-
մայական Հերոսը որեւէ սխալ թեղ է առաջադրում: Երկրորդ արարում Հանդէս
է զայն դրական Հերոսը եւ (անշուշտ պարտկազմակերպութեան ջարտողա-
րի խորատուանքով) առաջ է քաշում ճիշդ թեղը. մի պիեռում ճակնչեղ ցա-
նելու անհրաժեշտութեան մասին, մէկ ուրիշում՝ հանքավայրերի առկայու-
թեան, շրջապատում՝ անտառաչերտ պեղելու, Հինգերորդում՝ արտագրութեա-
նը կատարելագործելու մասին, եւ այլն: Նոյն երկրորդ արարում սխալական
Հերոսի կիներ կամ աղջիկը (որը, ըստ Հեղինակի ցանկութեան, հարող է լի-
նել Հերոսի աշխատակիցը կամ նոյնիսկ պարտական կազմակերպութեան
քարտուղարը) հակադրում է ամուսնուն (կամ սիրած աղամարդուն՝ Նայած
նրանց քաղաքացիական գրութեանը) եւ սպանում բաժանուելով: Այսպի-
սով, բնասնեկան զորամանչ զուգորդում է Հասարակական զորամայինն:
Հերոսի վիճակն աւելի է բարձրանում, երբ նրա Հայրը կամ մայրն էլ են անց-
նում հակադրութեան կողմը:

Երրորդ արարում պարտկազմակերպութեան ջարտուղարը, կիներ (կամ
սիրած աղջիկը), մանկութեան ընկերը եւ Հայրը փորձում են նրան Համոզել,
որ սխալուել է, բայց փորձերն ապարդիւն են անցնում, քանի որ օտարները
զեռ մի արար էլ կայ: Հերոսն ընկնում է մաստանջութեան մէջ, մանտանդ՝
երբ հիմքեր է ունենում խանդելու՝ ենթադրելով, որ սիրած աղջիկը հակա-
ռակորդներին մէկի Հետ կապուած է ո՛չ միայն սկզբունքով, այլեւ՝ զգաց-
մունքներով: Ընկերը Հերթում է այդ ենթադրութիւնը, նրան կեանքի Հետ
կապուելու կոչ անում, բայց ամէն ինչ ի դուր է անցնում, որովհետեւ Փե-
նայը պէտ բաւական Հեռու է:

Չորրորդ արարում պարզում է, որ սխալական Հերոսն իսկապէս լուրջ
սխալ է գործել, քանի որ ճիշդ թեղն արդէն սկսում է իրականանալ: Դա այն-

քան է ազդում հերոսի վրայ, որ սա, ինքն էլ ընկատելով թէ ինչպէս, ետանգով օգնում է այն յղացման իրազօրծմանը, որի թուևդ հակառակորդն էր նախորդ արարներում: Հակառակորդները մեծահոգաբար ներում են սխալուկանին, իսկ վերջինս անյարմար է զգում իր մութ կասկածներին, ինչպէս նաև կեանքի հետ համընթաց չգնալու համար: Բուրբն իրենց երջանիկ են զգում: Այդ առթիւ սեղան է դրուում եւ վարազոյրի փակուելու հետ մէկտեղ հնչում է առաջին բաժակաճառը:

Սա է այն անձուկ սխեման, որ զանազան տարբերակներով կրկնուել է ասանհակ պիեսներում, այն քարացած սիւժէն, որի մէջ հեղինակները խրցկում են կեանքի հարասութիւնը: Եւ զարմունալու ի՞նչ կայ, որ այդ պիեսները լի են տարրական տրամաբանութիւնից զուրկ երկուորեակ հերոսներով:

Այս տաղակալի պիեսների «կոնֆլիկտներն» ու «գրամատիզական կողմիաները» չբի կաթիլների պէս նման են իրար, ուստի՝ ծնում են համաձայն կերպարներ ու դրութիւններ: Այդ պիեսներում կան հանրայայտ ճիշտաբարութիւն իրրեւ տմենաթխարմ նորութիւն քարոզող, դժտուած ընկերներին ու սիրահարներին հաշտեցնող պարտական աշխատողներ, իրենց որդա ամուսնութիւնը երազող մայրեր եւ ամուսնութիւնից յամառօրէն խուսափող քուսկներ, ծայրայեղ ինքնասէր ու անուսկտ սիրահար դոյզներ, «խժաստութիւններ» ասող ծերունիներ, նորարարութեան օգուար լըմբանող տնտեսախարներ, հերթապահ ջննադատուող կերպարներ, կուլիաների յետուում կատարուող հրաշք-վերափոխումներ, արտադրական կամ դիւղանանասական որեւէ կասկածելի կամ պարզապէս հնարովի պրորիւմ, որի հանդէպ ունեցած վերաբերմունքը դառնում է նրանց գնահատութեան միակ չափանիշը: «Ահա, ինչ վերաբերմունք ունեն պրորիւմի հանդէպ՝ կ'ասեմ, թէ ով ես դու», — սա է կերպարների ընտրութեան սկզբունքը: Ըստ էութեան դրանք պիեսներ են ո՛չ թէ մարդկանց, այլ՝ տեխնիկական որեւէ հարցի մասին, ասինք ասպակու համան նոր մեթոդի («Նախաննի թախտ») հանքափայլի յայտնագործման («Նարալի գամնը»), նորազիւտ դազգահի («Անխարտակիլի կամուրքներ»), ճակնդղի ցանքն աւելացնելու («Նեմնէր քիլադրում է»), տնտեսման մեթոդների («Միլիոն») եւ այլն, ըստ որում դրանք թունում են մարդկային ընտարութիւնների ու փոխյարաբերութիւնների՝ հենց նրանց տեղը, որոնց մասին պիեսի դրուի պիեսը: Եւ հանդիսատեսը տուծ է գնում իր հետ աստեղով ո՛չ թէ մտքեր ու զգացմունքներ, ո՛չ թէ մարդկային ընտարութիւններ ու գեղադիտական հանոյք, այլ՝ կիսատ-պոստի տեղեկութիւններ որեւէ տեխնիկական պրորիւմի մասին (որի վերաբերեալ նա շատ աւելի սպառելի զաղափար կարող էր կազմել մասնագիտական բրուշիւրից):

Պատրաստի սխեմայով ստեղծուած գորչ պիեսների սիւժէն ծայրայեղորէն անհետաքրքիր է, կերպարները՝ զուրկ կենդանութեան նշոյլից, իսկ դիալոգները՝ սարքուած հնամալ արհեստագրական ձեւով. մէկն ասում է րացայտաբ սխալ բան, որ միւսը հերքի, մէկը զտալուում է՝ միւսի ճիշդ պատասխանի հող ստեղծելու համար: Պարզ երեւում են դիալոգների կարուածքի ուպիտակ թելիքը:

Կեանքում տեղի են ունենում դրամատիզմով յագեցած, բարդ երեւոյթներ, իսկ այս պիեսներում՝ հնարովի դժտութիւններ՝ կոնֆլիկտի անուանումով, կեանքում մարդիկ ասարում են իրենց զործով, առօրեայ հոգներով, կեղծ պիեսներում՝ հանդէս գալիս իրրեւ խոտափողեր: Կեանքում մարդիկ միմեանց սիրում են, ասում, խանդում, հիասթափուում միմեանցից, իսկ լինուում պիեսներում՝ դժտուում միայն այն պատճառով, որ սիրեցեալը ազրոտեի-

ներկայի որևէ հարցի մասին յանդգնել է այլ կարծիք ունենալ: Այդ պիեաների ջնկադատուող գործող անձինք բացասական են ըստ հեղինակի քմահաճոյքի, ինչպէս առաջատար հերոսներն են դրական միայն հեղինակային հաստատումով: Նրանց յատկանիշները որոշուած են ըստ դրաւած պաշտօնի, հակառակ այն հանրայայտ ճամարութեան, թէ մարդն է զարդարուած տեղը եւ ոչ թէ տեղը մարդուն: Հերոսը դրական է ո՛չ թէ նրա համար, որ արժանիքներ ունի, այլ՝ որովհետեւ ղեկավար աշխատող է կամ պարզապէս այդպէս է հեղինակի կամքը: Այդ հերոսը չի գրաւում հանդիսատեսին, որովհետեւ նա յաջողութիւն է ունենում հեղինակի երանդուն ու անաքող զօրութեան» շնորհիւ: Հեղինակը ամէն ինչ այնպէս է դասաւորուած, իսկ չըջապատի գործող անձինք իրենց աշխատէն եւ պահուած, որ դրական հերոսը դայ, մատով հրի եւ ամէն ինչ կարգի ընկնի:

Գործող անձինք (մինչեւ իսկ դրական հերոսի հակառակորդը) կաշուից պտուր են դալին դրական հերոսին որքան կարելի է վաշտուն յաղթանակ ապահովելու համար: Պարզ երեւում է դրական հերոսի թիկունքում թաքնուած հեղինակը («Բազմուած» յայտնի առակի թուշուհի նմանութեամբ) աշխուրջ հետեւելիս, որ իր հերոսին շատ էլ ննդութիւն չտան, որ դժուար տեղում շտապ փորձով վերացնի խոլընդտը, ուղեգորգ փոխ հերոսի առաջ՝ ընդհուպ մինչեւ Փինալային խնդրի սեղանը:

Եւ դրական հերոսը հետանում է բո՛ւրից՝ հանդիսատեսին նորքան անծանօթ, որքան էր առաջին անգամ վարազորը բացուելիս՝ բնի մտնելու պահին: Արայիտի մարդկանց մասին է, որ Վլ. Մայակովսկին տակ է, թէ՛ «Նա, ով միտապէս պարզ է, նա, ըստ իս, պարզապէս յիւտը է»: Եւ մեր ժամանակակիցները կերպարները այնպէս աղքատիկ ու տղեղ ներկայացնող շինծու պիեաների հեղինակները մեղք են գործում կեանքի ճամարութեան, արուեստի ու ժողովրդի հանդէպ: Ակնյայտ է, որ մեր ժողովրդի այսօրուայ կեանքը պտղոզնակ ու տաշակալի պատկերները, վարպետութեան պակասն ու աղտոշնորութիւնը վերաճում են դաշակարական արտաքին, պարզապէս սրգարտութեան՝ մեր իրականութեան հասցէին:

Անարդար կը լինէր վերը յիշուած բոլոր պիեաները դնել Նոյն մակարդակի վրայ: Ճանաչողական ու գեղարուեստական նուազագոյն արժէքից դուրի շինծու պիեաներից, ասե՛նք «Էրաշալի գամնայից կամ «Անհամցիտ մարդիկ» վոգելից ինչ-որ շափով շահեկանօրէն ասորեքուած են «Երկաթալուծ», «Արարատեան դաշտի աղբիլը», «Միլիոն» գործերը: Սրանց մէջ գտնէ գրաժամատուրական գրադիտութիւն կայ, մի քանի սպաւորուող կերպարներ կան (ինչպէս Գալուստեանը եւ Սեդան «Երկաթալուծ» պիեսում), կոմիկական հետաքրքրալարք գրութիւններ (ինչպիսիք թիչ լին «Արարատեան դաշտի աղբիլայ» մէջ), հետաքրքիր գրուած կոմեդիական գիւլուղներ («Միլիոն» կոմեդիալում): Բացի այդ, կան եւ բախումներ, հետաքրքրական վէճեր, թէ՛ եւ գրանք հարկը կարող են բաւարար լինել մի ակնարկի կամ պատմուածքի, բայց ոչ երբեք պիեսի համար (պարզ է, որ ամէն գժտութիւն չի կարող դրամատուրգիական երկի նիւթ դառնալ): Բայց եւ այնպէս այդ պիեաներն էլ անկոնֆլիկտաշունութեան գոհ են: Սրանց մէջ էլ սկզբում ամէն ինչ համարեալ թէ կարգի է, յետոյ դառնում է աւելի լաւ, իսկ վերջում՝ սքանչելի: Այդ պիեաներն էլ կատուցուած են լաւի ու լաւագոյնի միջեւ ընկած «պայքարի» սխեմայով:

Բազմաթիւ այս օրինակները, եւ ընդհանրապէս անկոնֆլիկտ գրամատուրգիայի ամբողջ պրակտիկան, նորից ու նորից ապացուցում են, որ գրողը, որքան էլ օժտուած լինի, անկարող է առանց կոնֆլիկտի գրամատուրգիական երկ ստեղծել: Հերոսի ակտիւ գործողութեան ուժը (ուրեմն նաեւ՝

Նրա անհատականության բացայայտման հնարաւորութիւնը) պայմանաւորուած է հակազործողութեան ուժով, որի յաղթահարման մէջ է զբաւերուում Հերոսի բնաւորութիւնը: Առանց կոնֆլիկտի չկայ դրամատուրգիւս: Բայց սրանից բնաւ էլ չի հետեւում, թէ կոնֆլիկտի առկայութիւնը վճռում է ամէն ինչ: կոնֆլիկտը աւելի դրամայի ստեղծման պայմաններից մէկն է: աւելի շուտ՝ նախապայմանը եւ ուրիշ ոչինչ, իսկ միւս պայմաններէց տարբերուած է միայն եւ միայն նրանով, որ նախորդում է ըտրբին: Ուրիշ խօսքով՝ դրամատուրգիական երկի ստեղծման գործը ո՛չ միայն չի աւարտուում կոնֆլիկտով, այլեւ նոր միայն սկսուած է: Եւ մեր յետպատերազմեան դրամատուրգիայում թիչ պիեսներ չկան, որոնց ձախողման պատճառը ո՛չ թէ կենսական կոնֆլիկտի բացակայութիւնն է, այլ՝ վարպետութեան պակասը, կոնֆլիկտը, սիւժէն ու կերպարները միասնական ոլորտի մէջ քարզացնելու անկարողութիւնը:

Ի՞նչ խօսք կարող է լինել կոնֆլիկտի բացակայութեան մասին, երբ լուսաբանում է կոյտնտեսային գիւղացիութեան աշխատանքը իւրացնողների ու նրանց դատաւարտողների միջեւ ընկած պայքարի թեման, երբ դրամայի նիւթ է դառնում իրանի կամ Ամերիկայի ժողովուրդների պայքարն ընդդէմ սեւակցայի: Բայց այդ թեմաները լուսաբող մի քանի պիեսներ ձախողուել են եւ դրա պատճառն ամէնից առաջ վարպետութեան պակասն է, դրամատուրգիական ձևի օրէնքների անտեսումը:




Վերը զննուած պիեսները կրկին ու կրկին վկայում են, որ առանց կենսական կոնֆլիկտի պիես ստեղծելու ամէն մի փորձ ապարդիւն է, նախօրօք դատաւարտուած ձախողման: Ի հարկէ, միամիտ բան կը լինէր կարծել, թէ քննուած պիեսների բացարձակ անյաջողութեան պատճառը կոնֆլիկտի բացակայութիւնն է որ կայ: Ոչ մի կասկած, որ այլպիսի տառ ձախողութիւնից իննի պատճառը պարզապէս ապաշնորհութիւնն է, մտքի ու երեւակայութեան ապշեցուցիչ աղքատութիւնը: Եւ այստեղ էլ օրինաչափութիւն կայ. անկոնֆլիկտայինութեան «տեսութեան» հետ ամէնից լաւ լեզու են գտնում ստեղծագործական նուազ կարողութիւնների տէր Հեղինակները:

Այսպիսով, մենք տեսանք, թէ մինչեւ ուր կարող է իջնել դրամատուրգիան անկոնֆլիկտայինութեան այսպէս կոչուած «տեսութիւնը», որ ոչ այլ ինչ է, քան ի՞նչ հասարակութեան քարզացման օբյեկտի օրինաչափութիւնների անտեսման դրսեւորումը արուեստի մէջ, իրականութեան մարքսիստական ըմբռնման, սոցիալիստական սեփականի էսթետիկայի հետ ոչինչ ընդհանուր չունեցող այդ «տեսութիւնը» զրկում էր արուեստն իր կենսական հիմքից, Հետո վանում սեփականական արուեստի սկզբունքներից, արուեստը տանում կեանքին հակադիր ճանապարհով, զրկում կեանքը հետազօտելու նրա մեծ իրաւունքից եւ մղում քարացած գոգմանների ու պատրաստի սխեմաների, ուրիշ խօսքով՝ կեղծիքի ու արհեստաւորութեան դիրկը:

Եւ, ինչպէս տեսանք, բնաւ էլ պատահական չէ, որ անկոնֆլիկտայինութիւնը դուռ է բացում թոյլ, կեանքի հետ առնչութիւն չունեցող պիեսների առաջ: Չի կարելի չգարմանալ, որ թատրոնների սեպարտուարի մասին Համի(ք)Պ Կենտկոմի յայտնի որոշմանը յաջորդող տարիներին էլ մեզ ծօտ բաւական շատ են տեսնուել գործեր, որոնք, նոյն այդ որոշման բնութագրմամբ՝ ցածր են իրենց դեղարուեստական որակով, հակազգայութեանական են ու պիւմիտիւ, դրուած են անփոյթ, անգրագէտ...»:

ԼԵՒՈՆ ԼԱՅՎԵՐԳԵԱՆ



«ԱՂԲԱՏՆԵՐՈՒՆ ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆԸ»

(ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ)

Անցնող ամբարն հրապարակ իջուս վըրադէտ Պօղոս Մնասկեանի «Աղբատնիրում աւանդութիւնը» հատորը, որ կը բաղկանայ հետեւեալ տասը պատմուածքներէն. — «Գիշերայիմ մահագանգ», «Ախոռիմ մէջ», «Աղբատնիրում աւանդութիւնը», «Կատարած շարադրութիւնը», «Մանե Թալորս!...», «Անդրանիկիմ զինուորը», «Էւսցազ ձիմ», «Ո՛վ է տարրը», «Ճեռագիր յուտութիւն» եւ «Երգիմ ծիածանը»:

Հակասուկ անոր, որ յիշեալ պատմուածքները ժամանակի եւ միջավայրի ծրնունդներ են, սակայն կը յարակցին իրարու տարբեր ա՛յն հանգամանքով, որով կը կազմեն բազադրիչ տուեալները սաղնապալի կացութիւններով գոյացած հասարակաց մթնոլորտի մը:

Այս յղացքով, տառապանքը այն հիմնական ենթահողն է, որ կը պարզուի բընորոշ դիմազիծներով: «Աղբատնիրում» մէջ խորտող աւանդութիւնն է այդ տառապանքը, որ պատմուածք առ պատմուածք կը դրսեւորուի այլադան պատկերացումներով:

Մնասկեանի բնութագրած աղբատնիրորուան հացի կարօտ եւ բարեկեցիկ պայմաններու ծարախ կերպարներ չեն, այլ ճակատագրի անողոք դիպուածով հոգե-

կան վերելայրումներու մասնուած զըրկեայնեք են, որոնք վճռական սեւեռումով կը փորձեն դիմակալել վերահաս ամէն սղէտ, անչըջանցելի ամէն եղերովիճակ:

Հետամուտ են անոնք մարդկային արժէքներու եւ նախանձայոյ ձգտումով մը կը կատարին պատմական անկիւնադարձ մը յատկանշող երեւոյթի մը, դիւցազնատիպ սիրանքներու հետ կապուած հերոսի մը յիշատակին, կորուսեալ ծննդավայրի մը իտէլայացած կարօտին եւ, վերջապէս, իրենց իքնութիւնը հաստատող ցեղային արեւունչ տւանդներուն:

Իրողութիւն է, որ «Աղբատնիրում աւանդութիւնը» գործին տիպարները կ'ապրին երկուութեան մը տապնապը, որ արդիւնքն է արտաքին ազդակներու հարկադրանքին եւ տիպարներուն նախասիրութեանց միջեւ կայացած հակադրութեանց: Այս պատճառով, տիրաբեկ արտամարտութեամբ կը յառին ներկային, որ իր այլամերժ յայտնադրութեամբ ազաւազումն է այն երջանկութեան, զոր անոնք կը ձգտին կերպարանել ըստ իրենց բազմանքին եւ հայեցողութեան:

Այս երկուութեան յատկանշական մէկ օրինակն է «Աղբատնիրում աւանդութիւնը» խորագրով պատմուածքը, որ հերոսը

կը պատկերացնէ՝ Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի իր ուսանողութեան շրջանէն դրուալ մը, թէ Երկրորդ Աշխարհամարտի աւարտին, պատրիարքն ու վարդապետները ի՞նչ Հանդիսաւոր արարողութեամբ զուրիշին յաղթանակը կը փառաբանեն և զուրիշին նահատակները կ'ողբնոյնեն, իսկ կը սնուցանեն լոկ ատելութիւն՝ անկախութիւն կերտած հայ ժողովուրդի կարծիքներուն հանդէպ:

Այս ճնշիչ մթնոլորտը կ'աշիկոծէ հերոսին ներքին աշխարհը և երբ կը բացուի Մայիս 28ի արշաւանը, զազափարապաշտընկերով մը թելադրանքին անտալով, ինք ևս կը դիմէ անհանգստութիւն-լուծուածին, կը մտայ անկողին և կ'ողբնոյնէ սըրբալի անցեալը, — աղքատներուն աւանդութիւնը:

Ըստ Մնացեանի, արութեան զործեր և ազգադրոշմ սրբութիւններ թաքուն պաշտամունքով մեծարելու ներանձնապէս մարդկային այս մտափեճակը աղքատներուն յատուկ աւանդութիւն է, զոր անաղարտ պահպանելը կ'օժտուին բարեբար չնորհներով:

«Ազգայններու արամաւորութիւնը զործին մէջ կան երկուութեամբ բնորոշ այլ պարսպաններ ևս, որոնցմէ իւրաքանչիւրը կը յայտնարելէ ուշագրաւ մէկ յատկանիշը տիպար աղքատներու ներանձնական աշխարհումն է:

Այսպէս, «Mais alors!...» պատմըւածքի հայազգի հերոսուհին՝ Աւրան, որոշ ժամանակ մը կը տուայտի և կը տարուրերի Ֆրանսացի ժերմի հետ իր ամուսնական որոշումին և այդ օտար կապով մտասանի իր ծնողքին ընդդէմութեան միջև: Կը հասնի վճռական պահը, երբ Աւրան Մար Միայնի թաղի իրենց ծովահայտաց պատշգամէն ականառես կ'ըլլայ հրոյ ճարակ զարձող հայկական ԲՆՎՓին և, շտապելով դէպքին վայրը, ցաւատանջ սրտով մը կը նայի հրակիզուած շէնքերուն, որոնք կ'արթննեն իր մտքին Եղեռնի հետ առնչուած մահատեսիլ յիշատակներ: Իսկ ժերմը, որ լրատու դործակալի պաշտօնով, այդ հրդեհին շուրջ, նոյն դիւերն իսկ կը փոխանցէ անհրաժեշտ տեղեկադիրը «Փարի Փրէսին, չի ծածկեր Աւրայէն իր խանդավառութիւնը՝

զորք մը կատարած պաշտօնեայի մը դուռնակութեամբ»: Պատահարին նկատմամբ ժերմի շահագիտական նկատմամբ կ'ազատագրէ Աւրան՝ զինք մտալիկ երկդիմի վիճակէն, որուն մտածումին առաւել ևս կը պայծառանան օտար ամուսնութեան առթած առհաւական հետեւանքները...»

Մնալով սեփական իտէալի մը ճշդ դակնութեան տակ՝ Մնացեանի տիպարները կը հակադրուին յաճախ շրջապատի մտայնութեանց, նկատելով զանոնք իրրեւանյարի և կը մատնուին մարդոց կողմէ չկարենալ հասկցուելու ողբերգութեան:

Սոյն հոգեփեճակը մարմնաւորող կերպարն է «Անդրամիկիմ զիւնորը» պատմըւածքին հերոս կամաւորը, որ իր կեանքի վերջնական ապաստան կը գտնէ Սանճաք շէմիի թիթեղալէն խրճիթի մը մէջ: Մնացեան կը պատկերացնէ այն հակադրութիւնը, որ կը ստեղծուի Անդրամիկ փառայի զինակիցը եղած հերոսին սրտցական վիճակին և զայն հեղանջի նաւակ զարժուցած թաղի խումբ մը ստահակներուն և անոնց մեղսակից մարդոց միջև: Վաթսունամեայ այս հերոսը «Սուրճուի Ալպարոսին վիճակուած դժբախտ ճակատագիր մը ապրելով հանդերձ, դիտէ, սակայն, «մեղմէլ իրեն եղած անիրաւութիւնները», պարզապէս կանչելով անցեալին և ճարժելուրեկով իր կեանքը»՝ Անդրամիկի ողբոյն ներկայութեամբ:

Մնացեանի տիպարները ո՛չ միայն կը գիտակցին իրենց ցախն, այլև գիտեն ձերբազատուիլ երկուութիւն առժամրէն, երբ պարագայական մտատեսութեամբ կը յանձնուին քաղցրալուշ ապրումի մը վայելքին կամ աղղային արժանիքի մը յայտնակերպող աւանդութեան: Հողեկան ուղիներով կիրարկուած այս շրջապարձը կը կենտարեք անոնց մէջ ա՛յն գիժադրականութիւնը, որուն միջոցաւ իրենց տագնապներուն ծնունդ տուող շարժառիթները յաղթանակելով՝ անոնք կ'ըլլան ներգործի կայտառ, յանդուգն և տիրակալ: Ահա թէ ինչու կը անտապին, բայց չեն ընկրկիր, կ'ապրին յուսահատական պահեր, բայց չեն դիմեր քայքայիչ արարքներու և ստորեայէն փոխանցուած դառն

փորձառութիւնները կը բարեխառնեն երազայուշ ապրումի մը քաղցրութեամբ:

Մնայեանի տառապակոծ տիպարներուն կենարար օթեւանն է ժառանգական կամ ապրուած փորձառութեան մը այն ցուքը, որուն կը յսոին օրուան տուեալ մէկ պահուն, իրենց ծածուկ ինքնութեան կամ պատրանաթափ կեննքին հարգատ քիմաքիծը յայտնադործելու ցանկութենէ թելադրուած: Հո՛ն միայն, այդ ցուքին մէջ կը վերազաննեն անոնք ա՛յն մեկնակէտը, որ կը մղէ զանոնք հեղեփոխման բարենպաստ նախաձեռնութեանց:

Հոգեփոխման ընթացքը բացայայտող վկայութիւններ են «Գիշերային մահագանգ», «Լացող միջ» եւ «Ձեռագիր յուռութե» խորագրով պատմուածքները, զորս կարելի է համարել հասորին երեք լաւագոյն կտորները, զգացական բարդ միեւնոյն կարելի ճշմարտութեամբ եւ յուպական գեղեցկութեամբ սեւեռած ըլլալու իրենց իրողութեամբ:

Այսպէս, «Ձեռագիր յուռութե» տիպարը՝ Հմայեակ Հերկան, Լիբանանի կոթիներուն ընթացքին կորսնցնելով իր սուտցիին՝ Յ. Օշակունի նկարին հետ աւեր ձեռագիր գոյք մը նամակները, խորագրովս կը ցարի եւ իր տաղնապը դրսեւորելու «հիւանդութենէ մը բոնուած» նման տաղնապներով շահադրդիւ թատկիցներ կը փնտռէ, ամբողջու առ ձեռագիրներուն կորուստը՝ Օշակունի դրակա-նադրուական հմտութեանց եւ սուտցումներուն հետ կապուած կարգ մը սրտառու զրուակներու վերլուծումով:

«Գիշերային մահագանգ» պատմուածքի հերոսը կ'երգէ նոյն մատանջութեամբ իր ծննդավայրին՝ Մուսա լեռան անկէջ կարօտը եւ Պեքայի դաշտավայրէն զայն կը վերակոչէ՝ գեղապաշտ գրողէտի երեւակայութեամբ:

Իսկ «Լացող միջ» պատմուածքի տիպարը՝ «Քրքուհին» Սունայը, Փարիզի ուսանողական ըրջանակներու մէջ կը ծանօթանայ կատուցողական ասպարէզին մէջ աշխատող Վարագին, որուն հետ հաստատելով զգացական կապեր, կը վերաբժար-ծէ մանկութեան տխուր յիշատակներ, ի վերջոյ կ'այ ծնած ըլլալուն ճշմարտութիւնը խոստովանելով:

Սունայ յորովայնէ այն վշտակիր էակըն է, որուն մտքին մէջ եռեւեփող երկու-ութեան զգացումը ո՛չ մէկ տոնիթով այնքան յուսարեկ եւ անհամեմատօրէն նահատազրապաշտ կրուարականութեան մը կը յանգի, որքան Վարագին ուղղուած հետեւեալ խօսքերով. «Ձեմ կրնար թուրք մնայ, եայտօթիւնս կը խորտակէ զես, չեմ կրնար հայտօթեմ վերադառնալ, թուրքերը կը յօշոտեն զես, երկուէն քստ չեմ կրնար երբորդ զատկանիլիտօթեմ մը լարիւրիմքոսին մէջ նստել ինքզնիս, չեմ կրնար, ես տառապանքն եմ իմ տառապանքն սու՛րբ հօրս, ես տառապանքն եմ իմ տառապանքն սու՛րբ մօրս, ես մարմնացնալ տուտապանքն եմ կրակմերէս վազող ա-րիւմիմ...» (էջ 131):

Արդարեւ, Մնայեանի պատմուածք-ները առհասարակ կը պարզեն սրտառու յեղելութիւններ, որոնց աստղծը կը կազմեն զրկանքն ու դառնութիւնը, սէրն ու պատրանքը եւ այն երեւոյթները, որոնք կը բերեն շոտացուած իրծերու կամ անաւարտ երազներու հետալուր անդրադարձումները: Իւրաքանչիւր պատմուածք պատակը կամ նուազ համեմատութեամբ, կ'եղբարեւորի տխուր գրուագով մը անպարման, կերպարելով վիպակին այն ենթաշարժը, ուր ամէն ցանկութիւն իր լուսանցքային բնոյթով իսկ կը դառնայ տաղնապալի երականութեան մը յատկանիւր:

Այս առնչութեամբ ուշադրաւ է «Գիշերային մահագանգ»ին վերջաբանը, ուր Մնայեան կը մաղնիրացնէ պայծենաւանդ իր հողերէն տարադրուող մուսա լեռցի ժողովուրդին ապրած վերլին գիշերը, երբ բաժանման թախիծներով ծանրացած լը-տութեան մը մէջ, Աստուածածնայ հեղեփի զանգուկատուէն յանկարծ կը հնչէ մեռելագանգ մը: Խոնարհ եւ խնկիր հերոսի մը՝ Քրեղիին գինոյութեան վերադարձով այս անտոյսը եւ ապաժամ արար-քին պատասխանատուութիւնը եւ դիմելով մահապանդով խորհրդանշուած պատ-մըւածքին եղբարեւոր հնարքին, հեղեփնակը հաւաքական գիտակցութեան կը վերածէ իր հարապատ ժողովուրդէն բաժ-նըւող գիւղի մը անլուր օղորդութիւնը...

Յատկանշական է նաեւ Մնայեանի

զրկակերպը, որով արագ զործողութիւններով կը զարգացնէ տուեալ գէպերը՝ առանց ծանրաբեռնելու զանոնք անշահ խորհրդածութեանց մթնոլորտով: Այս պատճառով, նկարագրուած իրադարձութիւնները կը ստանան ուշադրուելու և տպաւորիչ հանգամանք:

«Ազգատններում աւանդութիւնը» գործին հիմնական արժանիքներէն մէկը կը հանդիսանայ անակնկալին պայթիւնը, որուն գործոն յայտնութեամբ կը շեշտուի թելադրական իմաստը արուած պատկերացումին: Մնասպանի պատմութեան արուն անբակտի մէկ յղացքն է անակնկալի մը երեւումը, որուն բարեբար միջամտութեամբ լիտուելէ խորհուրդի մը կը վերածուի արկարաններուն ներայայտ տառապանքը: Այսպէս, «Լացող ծին» պատմութեան ճիշտ մէջ, անակնկալը կը կենսազործուի, երբ զոյգը կը վերնայ ծածկուած հայրութեան վրայէն: Իսկ «Երգին ծիածանը» պատմութեամբ, հայրենաշունչ երգի մը յեղակարծ հեղեղումը օրհնարէր զայդքուութեամբ կը ծիածանէ արհաւիրքէն սարսափահար հոգիները:

Առանձնապէս պէտք է շեշտել այս պատմութեան ճիշտ արտացոլումը հոգեբանական շերտերը, որոնց մէկ բնորոշ օրինակն է «Երգին ծիածանը» կտորը, ուր Մնասպան կը նկարագրէ այն սու. Գիրական, զոր կ'անցընէ Պուրմ Համուտի իր խարխուլ տան մէջ, երբ Մթնոլորտներու բուրբն ծայր առած կոհուր կը սփռէ մահու ակեր բնակարանային շրջաններու մէջ: Աննանոթ զգացումէ մը թելադրուած՝ կը մերժէ Գիրական մանկամարդ նարինէնց տունը անցընելու կանխօրօք տուած իր խոստումը եւ իր սննեակին մտերմութեան ապաւինելով կը հետեւի կոյր ուժբակոծումներէն ահաբեկ արտաքին կեանքի թո՛ւրուհին: Արագ ուրուապիծով մը պատկերացնելէ ետք հանդիպակաց փուռին առջեւ ծամեր խոնուած ու ձեռնուռնայն տունը դարձող հացի սպասողներու պարագան եւ, փողոցին մէջ, հայկական թաղերու հակողութիւնը ստանձնած հայ տղոց հերոսապիպ կեցուածքը, հեղինակը ականջաւոր վկայութեամբ կ'անդրադառնայ պատկեր տան այն մանկան, որ կը հշայ յայտնապէս պայթող ուժերու

պատճառաւ: Մինչ ծնողքը ի զուր կը փորձեն արտաբար խօսքերով մեղմել մանկան լացը, նոյն պահուն իսկ ուժերու նոր տարաք մը կը մաղուի ամէնուրեք: Որոտումի, ծուխի, փոշիի եւ եղերական ջրակերու մթնոլորտի մը մէջ, կը ծնի անակնկալ մը յանկարծ: Մտակայ տունէ մը լուտող, տղոց եւ աղջիկներու կողմէ խմբերդուող «Երեւան դարձած դու էրբութիւն» երգն է անիկա, որ խաւարակոծ գիշերին, ցնծառիթ պահեր կը յայտնագործէ իրաքանչիւր մահափիւռ ուժքի հետ եւ զաւերիչ հեղեղներու վրայ բացուող ծիածանքի մը պէս կը համապոկէ կեանք եւ ոգեւորութիւն:

Հակադրելով յիշեալ երգին բարենպատակ ներգործութիւնը տիրող մղձաւանջային կացութեան եւ անկարկելով այս հակադրութեան ծնած այլ անակնկալի մը, հեղինակը կը գրէ. «Երգին հետ, մէկէն, ուրիշ անակնկալ մը գրաւեց ուշադրութիւնս, — լուսիւն մը, պայթիւններու, համազարկներու, սուլոցներու, կտուրներու շարունակուող ազնուկին մէջ պակաս՝ ձայնը, մանուկին դադրած լացը: Այդ պահուն յոգնասպառ քո՛ւն մը տար արդեօք ինձ, թէ երգը ծանօթ էր իրեն եւ անոր մտերմիւ հուկներ ապահովութեամբ պարուրեցին հոգիս: Ի՞նչ գիտես: Ցնորակամ այդ պահուն դժուար էր նշելի ազդեցութիւնը լուսնի ձայններուն, որոնք կը շարունակէին պայթիլի հաւասար ուժգնութեամբ, պա՛ւմ... անկատար տեղեր... Պա՛ւմ... Ունեմք դժեշատ... Պա՛ւմ... Դա՛ւմ... Դա՛ւմ...» (էջ 186):

«Ազգատններում աւանդութիւնը» հատորին հիմնական մէկ այլ յաղորդութեանը կը կայանայ այն նախանձախնդրութեան մէջ, զոր հեղինակը կը ցուցարարէ հայ լեզուին հանդէպ: Մոյն գործով ի յայտ կու գայ հայոց լեզուի պաշտամունքը որբացան աւանդութեան վերածած զբաղէտ Մնասպանի լեզուական շնորհներուն, բերեղացած ոճին եւ պատկերաւոր մտածումներուն կենդանի առանձնայատկութիւնը:

Գրաւիչ է Մնասպանի ոճը, որ ներքին շերտութեամբ մը բարբախուն՝ կը ծաւալի պատմութեան զգացումները, Հեղինակը

նակին սեփական ձայնին արտայայտելը եւ ինքնութեան դիմապատկերն է այդ ոճը, որուն շնորհիւ որեւէ դրուագ իր պարագայական եւ նախնական բնոյթովն իսկ կը վերածուի արուեստի :

Կենսունակ են նաեւ իր բառերը, որոնք կը հանդերձեն տուեալ ապրում մը համապատասխան գոյներով եւ կ'ընծանեն ա'յն էական ստորագիւղները, որոնց նպաստով կը յայտնադարձուի պատմուածքներուն բանաստեղծական նկարագիրը :

Իրողութիւն է, որ Մնայեանի պատմութեանը, հակառակ իրենց ներքին միութեան, ո՛չ մէկ կերպով կը նմանին իրարու կամ կը յիշեցնեն զիրար : Անոնցմէ իւրաքանչիւրը իր թեմայով թէ՛ զարգացման հարմարութիւն կը դրսեւորէ իւրայատուկ խտնուածք մը :

Նոյն հաստատումը կարելի է կատարել իր նախորդ գործերուն պարագային եւս, որոնք չեն կրկնէր զիրար իրենց արծարծած նիւթերուն թէ՛ բնութագրած կերպարներուն նուազագոյն յարակցութեա'մբն իսկ : Այսպէս, «Յնդափոխութեան համար»-ին զգացական ենթացողը հիմնովին տարբեր է «Ես այդ շունն եմ»

գործին զարգացման յղացքէն, ինչպէս է «Կորստական քայլեր» ժողովածուին սպասարարապաշտ երանգը՝ ներկայ հասարկին հոգեբանական ոլորտէն :

«Աղփատներում ամառը»-ի մասին ծաւալով ուրիշ գրուածքներ կարողացած ենք Մնայեանի ստորագրութեամբ, բայց ոոյն հատորին մէջ խմբուած են միայն անոնք՝ որոնք ներքին միութիւն մը կը կազմեն, պարզ մարդոց գոյութեան իմաստը հանդիսացող եւ տեսարար փայտած այն կեցուցիչ իսկութիւնը, որ այս կամ այն պատկերին մէջ կը յայտնէ իր ցոլքը :

Սոյն ժողովածուին մէջ ներկայ է Մնայեանի իր խտնուածքով եւ հողերով, գեղարուեստական ըմբռնումով, զարգացման, արուեստի, ինչպէս եւ ոգեզինացած անուններու եւ սրբութեանց հանդէպ իր հաւատարմութեամբ :

«Աղփատներում ամառը»-ի կենդանագիրը վկայութիւնն է ազրուած վիճակ մը վարակիչ զգայնութեամբ կեանքին վերընծայելու խոռովիլ ամանդութեան եւ այս յատկութեամբ կը վերապրուէ իրեն մնայուն արժանիք մը :

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Ե Ա Ր Ո Ս Լ Ա Ի
Ս Ե Ց Ֆ Ե Ր Թ Ի

Հ Ե Տ



Այս կարճ Հարցազրույցը լռյա ընծայուած է ամերիկեան զԹայմս շաբաթաթերթին կողմէ, Դեկտեմբեր 17 թուակիր համարով: Հարցազրույցը վարած են Հեթեր Կրեմուայտ եւ Ջան Մուտի՝ մրցանակակիր քանաստեղծին հանդիպելով իր շաբաթաթերթին մէջ, Փրակա: Անկախ ու յանդուզն ժամուածներով ծանօթ Եարտալա Ալթիերթ հոս եւս հաւատարիմ կը մտայ իր խառնուածքին ու կեցուածքներուն:

— Ամերիկացիներու մեծամտանութիւնը անձանօք է ձեր բանաստեղծութեան: Ինչպէ՞ս կը ներկայացնէք ձեր գործը:

— Բանաստեղծութիւնն դիւրութեամբ ընկալելի է: Էստէջ բանաստեղծութիւն է: [Ասպարէզիս] սկզբնաւորութեան զանազան յանգեր ունէր եւ երգունակ որակ մը: Անիկա ներկայիս ազատ բանաստեղծութիւն է եւ, որոշ շահով, յանդաւոր, սակայն հիմա նուազ կարեւորութիւն կ'ընծայեմ յանդին, եւ աւելի կարեւորութիւն՝ ներքին կըտայթիւն:

— Կը կարծէ՞ք, թէ նուազեան մրցանակը ստացաք ամբողջ երկրի մը փոխարէն:

— Յաւանորոշութիւն պիտի ըլլայ այդպէս ըսել, սակայն, կը կարծեմ, թէ այդ: Առնուազն զայն ստացայ իմ հայրենակիցներուն մեծամտանութեան կողմէ, որոնք ինծի պէս կը զգան եւ ինծի պէս կը սիրեն գրականութիւնը:

— Երկար կեանք մը ապրած էք: Ի՞նչ սարված է բազմակամութեան:

— Անկեղծ ըլլալու համար՝ ոչինչ: Ես միտիայն բանաստեղծութեամբ շահազրգուած էի եւ քաղաքականութիւնը պարզապէս լուսանցքային կարեւորութիւն ունէր ինծի համար: Յարաբերութիւնները քաղաքականութեան հետ պաղած էին, մասնաւորաբար Մասսիչէթ մահէն ետք: Ուժեղ տեսակէտներ պարտազրուած էին ինծի: Անձնական ուժեղ համոզումներ ունենալով, ստիպուած էի խառնուիլ քաղաքականութեան: Զոյալուն մարդ եմ: Յաջողած էի դրսեւորել ժողովուրդին կեցուածքը, իսկ ժողովուրդը մէջս գտած էր իր ձայնը:

— Ո՞ր մէկը կը համարէք ձեր կեանքին ամենամեծ շնորհը:

— Սերունդին ամենահրաշնակ ժամանակաշրջանը Համաշխարհային Առաջին եւ Երկրորդ պատերազմներու միջեւ եղած է: Եւ զիտէ՞ք ինչու՝ որովհետեւ երիտասարդ էիք, եւ որովհետեւ ամէն ինչ կարելի կը թուէր: Եւ կը թուէր, թէ վերջապէս ձեռք ձգած էինք ձեր ազատութիւնը:

- Կը կարծէ՞ք, որ մեծ արուեստը տգատութեան պէտք ունի :
- Այո, ազատութեան միջոցառումը անհրաժեշտ է, սակայն տագնապներն ու գէշ ժամանակները նոյնպէս կ'օժանդակեն :
- Ի՞նչ կը խորհիք քաղաքական գործունեութեան դրսևորումներում մասին :
- Ձերտնտեսական մէջ, մշակութի կեցուածք կը նկատենք չմասնակցի որոշ ձեւի դործունեութիւններու : Կրնայ ըլլալ, որ առիկա անոնցմէ մէկն է :
- Մտահազուած է՞ք հումաշխարհային կացութեամբ եւ խաղաղութեամբ :
- Բոլորս կը խորհնք խաղաղութեան մասին : Մենք կը վախճանք, բանն որ պատերազմի մը կարելիութիւնը բացառուած է : Գիտէ՞ք, որոշ բանաստեղծներ կը դրնն խաղաղութեան մասին . ես անոնցմէ չեմ : Խաղաղութիւնը բանաստեղծութեան պէտք չունի : Բանաստեղծութիւնը արդիւնք է, խաղաղութեան պատուէն է եւ զբերուողը բանաստեղծին ներքին խաղաղութեան :
- Ինչպէ՞ս կը տեսնէք Ձերտնտեսական ապագան :
- Այդ մէկը ձեզմէ եւ սուսերէն կախում ունի :
- Ըսել կ'ուզէք, որ եթէ մեզ ու ռուսերը պահե՞նք խաղաղութիւնը :
- Նուազագոյնը, որ կրնաք բնել, նոսրի է սեղանի մը շուրջ, խօսիլ եւ պահել իրողական կացութիւնը : Սակայն առիկա բաւարար չէ բան մը փոխելու համար :
- Միացեալ Նահանգները ինչպէ՞ս պէտք է տեսնէ Արեւելեան Եւրոպան :
- Մեզի համար Արեւելեան Եւրոպա չկայ, այլ կայ երկիրներու հաւաքականութիւն մը, որոնք կը կոչուին Չեխոսլովակիա, Լեհաստան, Հունաստան, Եւրոպայի Իրրեւ մէկ ամբողջութիւն պէտք չէ տեսնէք մեզ :
- Որքեւ պատգամ ունի՞ք ամերիկացի ժողովուրդին :
- Եթէ կարելի է կարգացնէ մեր բանաստեղծութիւնը : Ձգարուն բան է խօսիլ այս բաներուն մասին : Ձեր ժողովուրդը պէտք է գնահատել գիտնայ իր անկախութիւնը :
- Երբ կ'ըսենք Նիւ Եորք, կը մտածենք ուժի մասին, երբ կ'ըսենք Փարիզ՝ վայելչութեան, Լոնտոն՝ ազնուականութեան եւ գրամի : Ինչպէ՞ս կը բնորոշէք Փրական :
- Մենք փոքր ազգ ենք, սակայն, մեր ամբողջ պատմութեան ընթացքին, Փրական մեր վահանն ու խորհրդանիշը եղած է : Օտարականները միշտ ալ փորձած են զինուորական ուժով նուաճել Փրական, իսկ մենք միշտ դիմադրած ենք : Ահա թէ ինչու կը սիրենք Փրական, անկախ իր զեղեցկութեանէն, Տակալին՝ անիկա աւելի զեղեցիկ է Նիւ Եորքէն :
- Գիտադրութեան խորհրդամշա՞մ է :
- Այո, սակայն համարող դիմադրութեան : Մեր պատմութեան ընթացքին, սկսեալ 17րդ դարու Երեսուց Տարուան պատերազմի օրերէն, ստիպուած եղած ենք աւելի մեծ ուժերու հետ հարց ունենալ, ինչպէս Գերմանիոյ եւ Իտալիոյ : Սակայն, նոյն ստեղծ, մենք կը գտնուինք Եւրոպայի կեդրոնը : Մասաչիւսէթս նման քաղաքացիներու ըմբռումն էր, Եւրոպայի սրտին վրայ, Չեխոսլովակիան իրրեւ կամուրջ գործածել, Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ :
- Եւ ի՞նչ վիճակի մէջ է այդ կամուրջը այսօր :
- Կամուրջ չկայ . փլած է :

Կղճարներ

«Այլի՜ք որթերձի նոյեմբեր 25 թուակիր համարին մէջ խորան
զբային ճիշդ ու ճիշդ վարի գրուածքով կարգացինք Մկրտիչ Անթան-
եանի Քարգմանութիւնը, սպա, ճշգրտե՛ք ճշ հանգիւպելու յոյսով, հաս-
տատացինք որթերձին յաւորական շուրջ ասուը թիւերը: Ի զարք: Մին-
չն այս սողորուն զբառումը, որթազրութիւնը կատարուած պէտք է են-
թազրել, որովհետեւ չենք կրնար երեւակայել, որ մէկը կրնայ այսօր
նորենային ծ. զար փոխազրել, այգբան երկարաշունչ բանաստեղծու-

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ (Ժ. ԳԱՐ)
ԳՐԱՐԱՐԻՑ ԱՇԽԱՐՀԱՐԻ ԳԱՐՁՐԵՑ՝ ՄԿՐՏԻՋ ԽԵՐԱՆԵԱՆ

ՄՐՏԻ ԽՈՐՔԻՑ ԽՍՍԷ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

Ա.

Եւ քանզի խօսել սկսեցի քեզ ետ,
Որ կենցանի շունչն ունես ձեռքիդ մէջ բազմամեղ հագուստ՝
Սարսառեմ եմ սաստիկ տագնապով իրօք ու դրդում եմ երկիւղից տեա՛,
Ջի յիշելն անգամ քա անխաւափելի եւ անաչառ դատատանի մասին,
Որ պիտի մեղքերն իմ կշտամբուեն, ո՛վ արարիչ երկնի եւ երկրի,
Անաւար է եւ անպարփակելի ու վեր ամէն սահմանումից:
Մանաւանդ որ չկայ բժշկութիւն իմ բազմավտանգ, անողջամտի
սաստիկ վերքերին,
Որո՞՞ք ստացայ հազիս կարստեամ մատնողի մտեաքեր ժառիքներին
Եւ չի՞ք պատասխան քպատերազմի օրնք, — ըստ առակողի:
Հնար չի լինի ո՛չ խօսով արգարանալ, ո՛չ վերտրկուի տակ պահուել,
Ո՛չ դիմակաւար՝ կեղծել եւ ո՛չ երեսպաշտ խօսքերով մտածեալ,
Ո՛չ շինծու ձեւերով խաբել, ո՛չ կցկտուր բառերով ստել,
Ո՛չ արագտան փախչել, ո՛չ թիկունք դարձնել,
Ո՛չ երեսն ի վայր՝ դէմքն հողին քսել,
Եւ ոչ էլ երկրի խորքերում քա՛հնուել,
Քանզի ծածկուածները բաց են քեզ համար եւ անբնույթները՝
երազարակուած:
Արգարութիւնն իմ նուազել է ի սպառ եւ ունայնացել,
Մեղքերս յայտնի են դարձել եւ շատացել են է՛լ տեղի,
Մնացական են չարութիւններն իմ, եւ ես՝ կորստական.
Իրաւունքի կշիռն է պակասած, եւ անիրաւութիւնն իմ՝ միանգամից
գորացած.

Յրեններու դիտը ընել պատճառք մտա ու չնայել Վերսի խորհրդի
խօսքն Ոստանայ հետո նշանաւոր խորագիրը, որ կրկնուած է Վարկիչի
ամբողջ երկայնքին, ինտուն երեք տեղում:

Մենք այս ստիժը պատե՛ւ կը համարենք տեղում մը եւս ընդդէմը,
որ ընթերցողին աշխարհարար նարեկացիին հաստաւ մը ներկայացնելու
հարց մը ծագի, ապա ուրեմն պէտք է դիմել նարեկայ Մոնտզին ստու-
գապէս վերափառք մը ապահոված Վաղէն Գէորգեանի փայլուն ուշա-
տանքին, որ պարզած հասկացողութեան յատկութեամբ եւ արուեստի
փողփողումներով տնկածմատելի կը մնայ Քարգմանչական նախընթաց
սուր փորձերուն հետ:

Նուսն չերթալու համար՝ Մկրտիչ Խերանեանին ձկնիչի ներկա-
յացուցած հաստաւին զուգահեռ կու տանք Վաղէն Գէորգեանի Քարգ-
մանութիւնը, որ մինակը կը հաստատէ վերջ մեակերպուած մեր նա-
խընտրութիւնը:

ՎԱՋԳԷՆ ԳԵՈՐԳԵԱՆ

Ա.

Արդ, քանի խօսել սկսեցի քեզ հետ,
Որիդ ձեռքում է կենդանի շունչը բազմամեղ հոգուս,
Ահից ասմոված՝ սարսու՛մ եմ, դողում սաստիկ տագնապով,
Քանակի, արարի՛չդ երկնի եւ երկրի,
Մտաբերումն իսկ դատատանի քո,
Անճողպրելի, ահեղ, անայառ,
Ուր յանցագործս պիտի կշտամբուի, •
Անտանելի է, ահաւոր, խօսքի սահմաններից դուրս:
Առաւել եւս, որ չկայ բուժում
Սաստիկ վերքերիս, անողջանալի ու բազմալտանգ,
Որոնք ստացայ կործանարարիս դժնի, մահաբեր
Ժանիքների խայթ-խածոտումներից:
Իսկ «պատերազմի օրն» այդ ահարկու,
Ըստ առավոդի, ո՛չ պաշտպանուելու ինչ-որ միջոց կայ
Եւ ո՛չ էլ խօսքով արդարանալու:
Ո՛չ հնար կը լինի պատսպարուելու վերարկուի տակ,
Ո՛չ դիմակներով ծածկուած, կեղծելու,
Ո՛չ մօտենալու՝ խօսքով երեսպաշտ,
Ո՛չ խաբիբելու՝ կերպարանելով,
Ո՛չ կմկմալով ստախօսելու,
Ո՛չ ճողոպրելով փախչելու հապճեպ,
Ո՛չ էլ ծկելու՝ թիկունք դարձնելով,
Ո՛չ երեսն ի վար գետնին կառչելու,
Ո՛չ հաստատուելու՝ բերանով հողին,
Ո՛չ թաքնուելու երկրի խորքերում:
Ձի ծածկուածները մերկ են քեզ համար,
Իսկ անտեսները յայտնի, անսքող-
Արդարութիւնս նուազել է ու չքացել ի սպաս.
Մեղքերս քացուել են ու բազմապատկուել.
Չարիքները իմ մնացական են, ես՝ կորստական.
Թեթեւացել է սաստիկ նժարը իրաւունքներիս,
Անիրաւութեան կողմը՝ ծանրացել.

ՄԿՐՏԻՉ ԽԵՐՎԱՆՆԵԱՆ

Բարեգործութեան պատուներն են հալած, եւ սխալմամբներն արձանացած.
 Աւանքն է կորած, եւ դատակնիքն այժմուանից գտնուած.
 Մահուան մարիակն է գրուած, եւ ուետման կտակն եղծուած.
 Բարերարն է տխրած, եւ բանտարկուած ուրախացած.
 Հրեշտակների գունդը թախծած, եւ սատանան խնդափրոս պար բռնած.
 Վերնական զորքը ողբի մէջ, եւ երկրայինները բերկրած.
 Ապանուողի մթերանոցն է յի, եւ պահպանողի զանձը կոզոպտուած.
 Օտարի մասն է կանգուն, եւ ստացողի պարգեւը՝ մատնուած,
 Ստեղծողի շնորհն է մտազուած, եւ կորուստի ծուղակները պահուած,
 Փրկչի երախտիքն է հեզնուած, եւ Բելիարն է զուարթացած.
 Կեանց աղբիւրն է փակուած, եւ գոռոզի ժամը ժամտիս հասած:

Բ.

Սւ արգ, ինչպէս Գիրքն է ասել դեռ առաջուց,
 Տանկալի չէ՞ր արդեօք չստեղծուել երբեք արգանդի մէջ,
 Քեւտարուել որովայնում եւ չծնուել,
 Ո՛չ մարդկանց թում գրուել եւ ո՛չ անել, առնել հասակ,
 Ո՛չ գեղեցիկ պատկերով գարդարուել եւ ոչ էլ օծուուել խօսելու
 ճիրքով,
 Գամ թէ կնքարկուել այսպիսի սաստիկ ու սարսափելի ծանրութիւններէ,
 Որոնց չեն կարող դիմանալ կարծր բարերը նոյնիսկ,
 Ել ո՛ր կը մնան՝ մարմինները լոյծ:

Գ.

Ուստի, բարեգութ, ազաչում եմ քեզ, առ՛ւր ինձ ողորմութիւն,
 Դու, որ քո խօսքով իսկ սահմանցիր մեզ վարուել այսպէս,
 Ասելով.— Տու՛՛ք այդ մուկն Աստծուն՝ ձեր փրկութեան համար,
 Ու մաքրուեցէ՛ք, քանզի ողորմութիւն եմ ուզում ես եւ ո՛չ պատարագ:
 Այդ խօսքդ յիշելով, բարձրացի՛ր անս վերտին, խնկուա՛ծ,
 Դու, որ ունես ամէն ինչ եւ ամէն ինչ քեզանից է:
 Քեզ փա՛՛ք բարորից. ամէն:

Հայրեւի, ցնդել է բերքը բարիբիս,
 Իսկ սխալներս՝ հաստատուել ամուր.
 Ասանդը կորցրել, դատակնիքն եմ գտել այժմէն իսկ.
 Մահուան մուրհակս գրուած է արդէն,
 Իսկ աւետիքի կտակը՝ ջնջուած:
 Երախտատորը տխրել է սաստիկ,
 Իսկ նենգ բանասարկուն ցնծում է ուրախ.
 Քախծում է զունդը հրեշտակների,
 Սատանան՝ պարում լիրբ հոռոցոցով.
 Ողբերի մէջ է պորքը վերնական,
 Ստորինները բերկրում են զուարթ.
 Մահ տարածողի մթերանոցը լցուած է բերքով,
 Եւ կողպատուած է զանձն տտեղծողի.
 Օտարի կողմը անպակաս է, իսկ
 Տիրոջ պարգեւը տրուած է քամուն.
 Հնորին հաստողի մոռացուել է, իսկ
 Կորստաբերի վարմեքը՝ պահուել.
 Երախտիքները փրկչի հեզնելով՝
 Զուարձանում է Բելիարը նենգ.
 Կենաց աղբիւրս խցուել է անդարձ,
 Գոռուի ժանգն է ժամանել ժանտիս:

Բ.

Անելի լաւ չէ՞ր, ինչպէս որ Գիրքն է ասել նախօրօք,
 Ո՛չ սաղմնատրուել բնաւ արգանդում,
 Ո՛չ ձեւատրուել որովայնի մէջ,
 Ո՛չ ծնունդ առնել, ո՛չ լոյս աշխարհ գալ,
 Ո՛չ ժարդկանց թում երբեւէ գրուել,
 Ո՛չ հասակ առնել, աճել, վարզանալ,
 Ո՛չ գեղապատկեր դէմքով պարդարուել,
 Ո՛չ օժտուել խօսքով, բանականութեամբ,
 Քան թէ ենթարկուել այսբան սաստկագոյն
 Ու սարսափելի տառապանքների,
 Որոնց դիմանալ կարծրակոփ ժայռերն անգամ չեն կարող,
 Ո՞ր մնաց տկար մարմինները լոյծ:

Գ.

Տո՛ւր ինձ, բարեգո՛թ, աղաչում եմ քեզ, տո՛ւր ողորմութիւն.
 Չէ՛ որ դու ինքդ քո խօսքով այդպէս մեզ պատուիրեցիր
 Անելով՝ տուէք այդ նուէրն Աստծուն՝
 Ի փրկութիւն ձեր եւ մաքրագործուէք.
 Զի ես ձեզանից ողորմութիւն եմ ուզում, ոչ թէ պոհ:
 Ահա բարձրացի՛ր վերատին՝ խնկուած այդ խօսքն յիշելով,
 Դու, որ ամէն ինչ ունեւ լիապէս
 Եւ ամէն ինչի աղբիւրն ես միակ.
 Բոլորից քեզ փա՛ռք յաւիտեանս. ամէն:

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՆԳԵՍ ԵՒ

ՁՐԻ ԾՆՈՐՀԱԲԱԾԻՈՒԹԻՒՆ...

Մեր ծերունագարդ ախատակիցը, Բիզանդ եղիայան, «Հայրենիք» օրաթերթի Սեպտեմբեր 15 թուակիր Համարին մէջ Հրատարակութեան տը-
ւած է շուրջ շառասուն տարի առաջ ստորագրած իր մէկ գրութիւնը՝ Յա-
կոբ Օշականի «Հայ գրականութիւնը», սա նոթով.

«...Օշականի ծննդեան հարիւրամեակին յաշտտեմով «Բազին» գրական
ամսագրին ընծայութեամբ երախտագիտութեանց եւ 1984ը Օշականի տարի
հոշակելուն առիթով, կ'արտասույնի «Հասկ» պաշտօնաթերթին մէջ երեւցած
հետեւեալ գրադատականը»:

Բիզանդ եղիայան իր հին գրութեան նոր յառաջաբանին մէջ, երկու
սիւնակի վրայ, տուած է նաեւ Օշականի կենսագրականը, ուր, ցաւօք, տեղ
չտած են քանի մը սրբազրելի կէտեր:

Առաջին պարբերութեամբ ընթերցողին կ'ըսուի.

«Բնիկ Սեօլեօզի հոգաբարձ Յովհաննէս եւ Սիրենտ կը գաղթե՞ն իրենց
շրջանի կեդրոն Բազա Պարուս, ուր 1883 Դեկտեմբեր 9ին՝ կը ծնի իրենց
երկրորդ զաւակը ՅԱԿՈԲ, աղագայ ՕՇԱԿԱՆԸ»:

Յովհաննէսի եւ Սիրենայի երկրորդ զաւակը Յակոբը չէր, Սիմոն էր:
Յակոբը երրորդ զաւակն էր, վերջինը:

Երկրորդ վրէպ մը.

«1924ին՝ կը հրաւիրուի Նիկոսիոյ մէջ Յորանաստատ Մեյգոնեան կըր-
քական Հաստատութիւն, կիտրոս, ուսուցիչ հայերէն լեզուի եւ գրականու-
թեան»:

Օշական 1924ին չէ, որ կը Հրաւիրուի Մեյգոնեան կըրքական Հաստա-
տութիւն, այլ երկու տարի ետք, 1926ին: Նախորդ երկու տարիներուն ու-
սուցչական պաշտօն կը վարէ Գաւհրէ:

Ակնարկելով Երուսաղէմի մէջ սպրած Օշականի կեանքին, եղիայան
թող տուած է երկու վրէպ, սա պարբերութեամբ.

«Այս տիտի քլլար Օշականի աւաւցչական կեանքի եւ գրական տրտա-
դրութեանց վերջին կայանք: Այստեղ Օշական կը սկսի իր «Համապատում Հայ
գրականութեան» մեծ գործը: Այստեղ է նաեւ, որ ան գրեց իր աւաւցչական
ամբիոնի փորձառութեանց վկայութիւն «Հայ գրականութիւն» դասագիրքը,
իր ողջութեան տպուած վերջին գործը»:

Ձարմանալ կարելի է միայն, որ Օշականի ամէնէն շատ Հոլովուած
խորագիրներէն Համապատումներն տեղ թող կը տրուի բազմացնել Համապա-
տում անճաշ բար: Ճշդե՞նք նաեւ, որ «Հայ գրականութիւն» դասագիրքը «Իր
ողջութեան տպուած վերջին գործը» չէր: «Հայ գրականութիւն» դասագիրքէն
մինչեւ իր ողջութեան վերջինը (1948), Օշական սպրեցաւ յաջորդաբար տպու-
գրուած եօթը Հատորներու Հանդիսն ու... դասնութիւնը, —

- «Երբ մեռնի գիտեմէ» (1944),
- «Համապատումներ — Ձարթօնքի սերունդ» (1945),
- «Ուրիշք եւ իրաւ բանաստեղծութիւնը» (1945),
- «Քաղհանք» (1946),
- «Վկայութիւն մը» (1946),

«Օրն օրերուն» (1947),
«Արեւիկայի բանասիրութիւնը եւ էջմիաշին» (1947) և
Հինգերորդ վրէպ.

«1945ին սօճուեցաւ Յակոբ Օշակաճի «Փառասմամեայ վաստակի՞ն յո-
րելեանը», Երուսաղէմ, Կիպրոս, Պէյրութ, Հայկայ, Պապատոս, Փարիզ, Նիւ
Եորք»:

Յիշուած քաղաքներէն առաջինը, Երուսաղէմ, ճիշդ է, որ ինք նախա-
ձեռնեց Օշականի յորելեանը, բայց յորելեանը ձախողեցնելու միտումով լրջ-
թալաղիքովու ծանօթ խաչակրութիւնը հաշուի առնելով, երբեք քաղաքի-
նը չունենցաւ յարգելու իր նախաձեռնութիւնը: Պարզապէս առչեցուցիչ է Ե-
րուսաղէմի այս փշապսակը փառասպակի վերածելու Բիւզանդ Եղիայեանի
ցոյց տուած այս դիւրութիւնը:

Վերը նշուած վրէպներուն ու թիւրիմացութիւններուն պէս բաներ
չեն պատահիր, առնուազն քիչ կը պատահին, եթէ մեր մամուլի համապա-
տասխան բաժինները վարելու կոչուած դործօնները, ձեռագիրը զրաշարին
յանձնելէ առաջ, փորձեն ստուգումներ կատարել: Հրամայական է ստուգման
այս ճիգը, որովհետեւ ծերութիւն կայ, անհատ մտաւորականներու ծօտ զրո-
ւարանի սով կայ, եւ այլն: Բիւ մը շատ բծախնդիր ըլլալու պարտքը աւելի կը
չնշուի անո՛ր համար մանաւանդ, որ շատ առիթ չունինք մեծամաստակ մեր
գրողները ծանօթացնելու լայն հասարակութեան, ու երբ առիթը ներկայա-
նայ՝ նեղելի չէ մեզի սխալ կամ թերի տեղեկութիւններ հաղորդել անոր: Լըռ-
ւած բան է, որ զրական հակայ մը կենսագրենք, մտնելով անոր դործերէն
նօքը:

Այդ պարտքը խղճմտութեամբ եւ բժախնդրօրէն կիրարկելու պարտ-
քայնն, անպայման աւելի մեծ պատճառներ կ'ունենանք մեր ծերունագրող-
ներուն ցոյց տուած կորովին, յիշեցումներուն, թարմացումներուն, արժե-
քաւոր իրադարձութիւններ ընդգրկող յուշագրութիւններուն հանդէպ երախ-
տապարտ ըլլալու:

Յաւօք, Բիւզանդ Եղիայեանին թող սուածին պէս վրէպները հազուա-
դէպ չեն մեր մամուլին մէջ, ոչ անպայման նոյն արատութեամբ, բայց եւ
այնպէս՝ կան: Ահա ուրիշ մը, զարձեայ Էլիիէյէն (16 Դեկտեմբեր), «Յակոբ
Օշական» խորագրուած Մանուէլ Մարութեանի յուշին մէջ:

«1938ի կէտրին, Եգիպտոսից ինձ յրկեցին Պաղեստին՝ կուսակցական
աշխատանքի համար: Մնացի մօտ չարս ամիս: Եւ որպէսզի ինձ չլինեմ կու-
սակցութեան քիւզրէիմ, մի էանի ներկայացումներ տալի Երուսաղէմում եւ
Եսփայում:

«Երուսաղէմ եղած ժամանակ, երկարոյ թէ երբորդ օրն էր, որ քա-
րեկանս՝ Լեւոն Քէշիշեանը, ինձ տարաւ վաճէր: Այն ամիս պատրիարքը Խո-
զիլայս Բարգէն արքեպիսկոպոս կիւսեւերեանն էր: Մեծ հագեւորականի ստիք
կատրած էր: Մասայում էր անկողնում:

Յօդուածին մէջ կան եւ ուրիշ վրէպներ, որոնց առջեւէն դիւրին է
անցնիլ քննադատով, բայց կարելի չէ նոյն ներողամտութեամբ դիտել
Բարգէն արքեպիսկոպոսի առիթով զլուխ ցցող թիւրիմացութիւնը: Բարգէն
արքեպիսկոպոս հեղինակ էր, համազայնի գէմք, կենսադրութիւն ունեցող
գործն եւ մեր երեսասարդ խմբագիրները զայն Երուսաղէմի զահուն չքաղմե-
քներէլու չափ բան պէտք է դիտան անոր մասին: Բարգէն արքեպիսկոպոս Կիւ-

լեւեբեան, Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսի օրով, աթոռակից կաթողիկոս էր եւ այդ հանգամանքով ալ դարձաւ Հողին:

Ճշդէլիք բաներու կարգին անճշդելի բաներ ալ կան Մարութեանի յուշին մէջ, մանաւանդ մէկը, որ մտահոգիչ է նաեւ: Օշականին մասին խօսելով՝ ցուցադրել կ'ըսէ.

«Նա ինձ նուիրեց իր քսանբազումներին մէկը, ահաւր շեմ յիշում: Նա իմ արխիւի մէջն է, որ հաւանաբար հիմա գտնուում է Հայաստանում»:

Ուրուագծուած անորոշութիւնը (հաւանաբար) լաւ նշան մը չ'երեւիր: Կարելի է սակայն դիտել, թէ 1938ին Օշականին հանդիպելէ ետք Մարութեան եղած է Հայաստան կամ որո՞ւ հետ Հայաստան գրկած է իր արխիւը: Յայտնի է, որ Օշականի Թատերգութիւններէն շարք մը կորսուած է: Կրեա՞յ արդեօք անունով ու բախտով անորոշ մնացած Մարութեանի նկարագրածը ըլլալ մէկը: Գէտք է փարտտի այս մշուշը:

Աւարկայական տուեալներու առիթով ցուցաբերուած այս արտաներուն առատութեան առեւթեր՝ պիտի ընդունինք, որ մենք երբեմն առատաձեռն ենք նաեւ ենթակայական դնահատումներու պարագային, շնորհաբար խութեան մէջ, որ ուղղակի Հայաստանի նուէրը եղաւ մեզի: Արդարեւ, վերջին երկու տասնամեակներուն Հայաստանի հետ մեր ունեցած փոխաբարեւորութեան սերտացումը մեծ համեմատութեամբ դրապէս անդրադառնալէ ետք հայրենական մեր բովանդակութեան վրայ, զերծ չեղաւ նաեւ բացասական հետեւանքներէ, որոնցմէ մէկը պիտի համարենք հոն տիրող մտաւորական շտեմարանի բառացի ընդօրինակումը: Հոն է, որ բառերուն հետ թէթիւօրէն վարուելու հին աւանդութեան հետ մշակուեցաւ պահպանութեան բաժանականաւոր մշակոյթ մը, ո՞րն աստիճան, որ մարդ կը դժուարանայ ճշդի հիմունքը ստոր ու անոր շաղկուած վերադիմին, «մեծին», «խոշորին», «վարպետին», «վարպետաց վարպետին», «տաղանդաւորին» ու «անհարեղին»: Մանաւանդ «անհարեղին»: Հայրենի մեր թերթերուն ընթերցողը, ի մասնաւորի ա՛ն՝ որ անգամ մը Հայաստան ալ այցելած է ու բաժակաճառներու տարափով օրհնուած, սխաւ նոյն դիրքութեամբ արտասանել բառերը եւ մենք թո՛յլ եղանք անոր զեղումներուն հանդէպ, նոյնիսկ սինակ բացինք անոր դրաւոր անհեթեթութեան, ինչպէս պատահած է ատիկա «Հայրենիք» օրաթերթին մէջ, էջ տրամադրելով Սիրո Ռանգազեանի մասին յօդուած թխած սո՛մն Յովիկ էթեանի սա պարբերութեան վերջին տողին մէջ երեւցող թեթեւութեան:

«...Բեմին վրայ բազմած էին հայ պետական գործիչներ, գլխաւորաբար Կարէն Դեմիրճեանի: Հոն էին Յակոբ Սիլվա Կապուտիկեան, Վահագն Դաւթեան, Վազգէն Մնացականեան եւ ուրիշ անճամարութիւն մը, որ կարծէք ազատագրական շրջանէն եկած առասպելական հերոսներէն մին ըլլար: Անշուշտ քովիս չ'արեւոյցի, թէ ով է եթեւեմ, որովհետեւ բնագոյնը քար գիտցայ, որ տարբեր մէկը չէր կրնար ըլլալ, քան զհիցարգեղանի վիպասան ու համարելի արձակագիր Սիրո Ռանգազեան...» («Հայրենիք», 4 Մարտ 1983):

Մենք չենք հարցներ, թէ Բաճիթի, Ինտրայի, Օշականի կամ Ռակունցի գործերուն առջեւ ինչ բաւ պիտի գործածէ յօդուածագիր այս պարտը, որովհետեւ ան առհասարակ ծանօթ չէ մեր բառերուն արժէքին եւ չի գիտեր զինչ խօսի: Կը զարմանանք միայն, որ «Հայրենիք» օրաթերթի գրական բաժնի պատասխանատուն տեղ կու տայ բառեր միւսող նման շարադրանքներու:

ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻ... ՀԱՆՃԱՐԵՂ

Սերո Խանզազեանի արձակ վառարակին յօտ հանճարեղային բաժինը մերժել բնաւ չի նշանակեր հարկաւ, որ Սերո Խանզազեան այլուք հանճարեղ չէ: Ստեղծագործական մարզէն դուրս սարքած իր գտնելագործութիւններուն մէջ մենք մէկէ աւելի անգամներ հանդիպած ենք անունի գրազէտին այդ գերյասակութեան: Առաջինը՝ «Հայրենազարտում» շարքին առաջին գիրքին մէջ: Հոն Տանճատափ գիւղը եւ անոր Հարսնասար կամ Հարսնաքար անդունդը կը նկարագրէ Խանզազեան եւ անդունդին հրաշքը պատմելու համար իտալացի կուսակցական Օրբելիան պատմիչին: Կը պարզուի, որ Ազուաններու դահերէց Վարագ-Տրդատի դուստր Եահանդուխտ, Հարսնութեան ճամբուն վրայ, ոչմ յանդիման դառով պարտիկ տանանդիչներու, իր ձեռն հետ կը նետուի անդունդ, կը փրկուի եւ տեղւոյն վրայ մատուռ մը շինելով՝ ինքզինք կը նուիրէ Քրիստոսին:

«Այժմ էլ, — կը շարունակէ Խանզազեան, — անդունդի խորքում, Տանճատափի մօտ, Ռոտտան գետի աօ կողմի վի լեզուանի վրայ երեւում է 931 թուականին կառուցուած փոքրիկ մատուռը, որի մէջ քազուած է Եանճառուի տաճարը:

«Երկու տանճատափցի անտառից էշերին բռնած փայտ են տանում գիւղ: Ես նրանց հարցնում եմ, — հաւատո՞ւմ է՞ք, որ Եանճառուի տաճարը ողջ մնացել է վերեւից ընկնելով անդունդի խորքը:

«Հաւատում ենք, — ասաց երկուսից մէկը, որ այնուր էր: — Նման բաներ այժմուս եմ տեսել: — Նա ցոյց է տալիս իրենց գիւղից վերեւ գտնուող մի այլ անդնդային ժայռ, — Բումմուկ թուականի գարնանը դաշնակները, հրէ՛ն, այն ժայռից շատ կումուստների գործերն: Էդ անդունդն անի խորն է, քան Հարսի ձորը: Գլորուած կումուստներից մէկը ողջ-տաղը է մնացել: Մինք նրան հանցիմք ձորից: Այժմուս եմ տեսել: Մարդը երկար շուք (մուշ-տակ) է ունեցել եացիմ, սրա փէշերը քացուել են ու պարաշիտի մման փրկելի իրեն:

«Այս իրականութիւն է: Փրկուած կումուստը միմչեւ վերջերս էլ ապրում էր» (էջ 273-274):

Ինչպէս կ'երեւի, փրկուած կումուստին տարելութեամբ հիւսուած բանդագորչանքին հեղինակային իրաւունքը Սերո Խանզազեան չէ ուզած ամբողջութեամբ Տանճատափի իշտպաններուն ձգել, նոյն պատիւէն ուզած է շող մը առնել նաեւ իր վրայ, անմիջապէս մանկուով վկայի դերին մէջ: «Այս իրականութիւն է: Փրկուած կումուստը միմչեւ վերջերս էլ ապրում էր»:

Գարեկի է գարմանայ միայն, թէ ինչպէ՞ս Սերո Խանզազեան եւ իւրայինները հակադաշնակցական քարոզչութեան (կամ մոլուցքի) համար այդքան ձեռնտու հերոս մը ձգած են Տանճատափի իշտպաններու հիացումին եւ միջուկն օրս զայն չեն վերածած վէպի նիւթ, կամ պոեմի տառագ, կամ զկուսակարգի հերոս...:

Շու այլեւս չենք գարմանար: Եղջերուաքաղը քացայայտ է եւ Սերո Խանզազեան իրապէ՛ս հանճարեղ է իր ընթերցողները ապուշ կարծելու անհեթեթութեան մէջ...

ԹԱՓԱՆՑԱՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

ԷՒ ՏՆԷՂՈՒՄ ԳՈՓՈՂ ՈՒՐԻՇՆԵՐ...

«Գրական քերթ»-ը իր անցեալ տարուան 45րդ համարին մէջ լոյս ընծայեց տաղանդաւոր բանաստեղծ Հենրիկ Էդոյեանի «Երկնային ժամանակ» հատորին մասին (կամ աւիթով) գրած Գէորգ Էմինի տեսութիւնը, անոր կըցելով խմբագրական սա յոյսը:

«Տպագրելով Գէորգ Էմինի այդ յօդուածը, խմբագրութիւնը յոյս ունի, որ նրանում արծարծուած ընդհանուր բնոյթի խնդիրները կը յազնեմ մանր ժամանակակից հայ երիտասարդական պոեզիայի ներկայում ու գալիքով մտահոգուած շատ ու շատ ընթերցողներին: «Գրական քերթ»-ը սիրով իր էջերը կը տրամադրի ստացուած արձագանցներին»:

Պաշտօնական շարք մը քննադատներու կարգին, «Գրական քերթ»-ի այդ կոչին արձագանգեցին նաեւ ընթերցողներ, որոնց վերջին խումբին կարծիքները սպաղրութեան յանձնուեցան այս տարուան 43րդ համարին մէջ, Հետեւեալ ծանօթագրութեամբ:

«Բանավէճի առիթով խմբագրութիւնը բազմաթիւ մտնակներ է տառնում: Մեծք արդէն սպագրել հե՛ք ընթերցողներ Ռաֆիկ Գրիգորեանի «Յանուն իսկական բանաստեղծութեան» (թիւ 19) եւ Մեսրոպ Յարութիւնեանի «Ճշմարտութիւնը չի սարքում» (թիւ 35) քղթակցութիւնները:

«Ստորեւ ձեր աշարքութեան հե՛ք ներկայացնում քաղաւածքներ մտնակներին»:

Ինչ խօսք, որ Հետաքրքրական են այս բոլորը, ու նաեւ ուրախայի, որ տարբեր մանագիտութեան աէր Հայրենի մեր ընթերցողները լայն շահագրգռութիւն կը ցուցաբերեն բանաստեղծութեան նկատմամբ եւ կարգին արտայայտել գիտեն իրենց մտածումներն ու սպաւորութիւնները: Առ այդ ստորագրութիւն ունեցող տասը ընթերցողներէն շահեկան են յատկապէս Մեսրոպ Յարութիւնեանի, Վաչագան Գրիգորեանի եւ Վիկտոր Յովսէփեանի կարծիքները:

Նմոյշներ:—

ՄԵՍՐՈՊ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.— «Այսօրուից յետոյ ընդհանրացնում եւ, ընթերցողների ի՛մ սերնդի բաշարութեամբ, խօսնմ նրա անունից. իսկական բանաստեղծութիւնը իրաւունք չունի լինել հասարակ ու պարզունակ, ԻՍՅԱԿԱՆ է դառնում այն բանաստեղծութիւնը, որն ընթերցողին մատուցում է անսպասելիք, ստիպում է նրան մտածել, խորհել, ու Դաւոյեանի հետ չհաստատայ Տիրամօրն ու Աստուծան, որովհետեւ մեր ռաբբի տակ դէռ այնքա՛մ որդեր կան, էդոյեանի հետ հանդիպել անձրեւին քաղաքի արուարձաններում ու չչտապել դէպի տուն, այլ մտածել, ձեռք տալ նրա մարմնին, Յ. Գրիգորեանի հետ խղճալ մեղսող ծեր քաչաւիճի եւ Դ. Յովհաննէսի հետ ընդունել, որ, այո՛ւ, «Պոեզիան այն է, ինչ պոեզիա չէ...»:

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ.— «Մեծք սովորել հե՛ք ՀԵՇՏ ԲԱՆԱՍՏԵՆԻՇՈՒԹԵԱՆԸ, ՀԵՇՏ ԱՐՁԱԿԻՆ եւ անարդարացիօրէն պահանջում հե՛ք պարզ կամ պարզունակ գրել: Եթէ արձակ է, ուրեմն անպայման պէտք է երկար»:

բարակ սիւժէ ունենայ, եթէ բանաստեղծութիւն է, ուրեմն պէտք է կանոնաւոր յանգրբը շոյնն լսելիքը: Մինչդեռ կարծեօրբ բովանդակութեան խառաւրթիւնն է, մարդկային ճակատագրի մէջ քափանցելու, կենսին գգայու կարողութիւնը: . . . Մի՞թէ մեծն ազգային ոչինչ չենք տեսնում երիտասարդ սերունդի այն ստեղծագործողների մօտ, ովքեր չեն գնում դասական պոետիայի ուղիով: Ի՞նչու, տեսնում ենք, բայց չգիտես ինչու, ուզում ենք, որ այն այն մտնելու չափ ցցում լինի»:

ՎԻԿՏՈՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ.— «Ասում են, Բառապետը վճռական հասակ է: Հայ բանաստեղծութեան այս սերունդը տարիքով քառասունը չուրքն է, նշանակում է՝ աննիւթների ամառային անկրողն առջեւում է: Բայց աննիւթից ասոյք արածի մասին խօսելով, չենք կարող ուրանալ, որ մեր այսօրուայ պոետիան իր արժէքներով դուրս է եկել համընդհանուր-աշխարհային ասիմետրից, եւ ասանց նրա շատ բանով քերի կը լինի միութենական պոետիայի վերջին մէկուկէս տասնամյակի ընդհանուր միտումների ու արդիւնների դիտարկումը: Նա շատ բանով մտքից մքոնողուր հայ ժամանակակից պոետիային սպասանցող միապագայութիւնից, նշարիտ պոետիայի երկրպագուներին փրկեց գաւառական ու արտարձանային կող յանգաք-խաբիւնից»:

Մակերեսայնութիւնն, ճապարակութիւններէն, գիրում հմտով սկսող եւ իր ընթացքին մէջ ու ետին սիրելի ոչինչ ձգող սահմանափակ վարժութիւններէն այլեւ ձեռք բաշելու, եւ նորին, խորունկին, անսպասելիէն կարծումով տարբերու այս միտումը, հակառակ ակնի քան մէկուկէս տասնամյակ հաշուող իր ծննդոցին, գծարտարար զեռ բնականացած չի թուիր ընտել եւ միապագային ու պարզունակին պահանջը զեռ ի գորու կը մնայ ընթերցող որոշ խաւերու մօտ: Հետուն չերթանք: Ահա նոյն շարքին հետ գրական քերթին մէջ տեղ գտած վկայութիւն մը այդ մասին, ստորագրուած Երեւան աշխատող բանասէր ու մանկավարժ Տ. Պետրոսեանի կողմէ:

«...1970 թէ 1971 թուականին «Գրական թերթ»-ում տպագրուել էր Ռ. Դաւոյեանի մի քանի բանաստեղծութիւնը: Զարմանալի էր նրա գրելածները, վերամբարձ՝ ճեր: Կարգալիս չէի կարողանում կենտրոնանալ: 20-30 տող կարգում եւ չես հասկանում՝ սա պատկեր է, թէ՞ արամադրութիւն: Վերջացնում եւ ընթերցումը եւ... ոչինչ չի մնում:

«Շատ ժամանակ է անցել այդ օրից, բայց կարծիքս Ռ. Դաւոյեանի բանաստեղծութեան վերաբերեալ եւստարեա՝ չեմ փոխել: Գուցէ մի քիչ խիստ է առաջում ասելիքս, բայց եւ ընթերցող եմ եւ կարծիքս այդպիսին է. ձեռի եւ բռանքի անպագոգոտ արտայայտութիւնների ետեւից ընկնելով, Ռ. Դաւոյեանը երբեմն մոռանում է ասելիքը»:

Քիչ անդին կը ներկայացնենք ճարական քերթին մէջ հիւրընկալուած Ռազմիկ Դաւոյեանի թէ՛ 1970ի եւ թէ՛ 1971ի շարքերէն երկուսկան նմոյշ, որոնք տուն տուն են բանասէր ու մանկավարժ Տ. Պետրոսեանի արտունջքին. Վերջացնում եւ ընթերցումը եւ... ոչինչ չի մնում»:

Ի՞նչ է արդեօք բանասէր ու մանկավարժ այս յարգարժան ընթերցողին բանաստեղծութեան մէջ փնտռած ինչը, որուն փոխարէն Դաւոյեանի բանաստեղծութեան մէջ ոչինչի հանդիպած ըլլալու այնքան դիւրին յայտարարութիւններ թող կու տայ ինքնիրեն: Երեւի բանասէրը տեղեկութիւն կը փնտռէ բանաստեղծութեան մէջ, ինքորմացիա՞, բա՛ն մը, որ քիչ օղերս օւնի սրտեալ արուեստին Հետ, տրուած ըլլալով, որ անկէս մեր իրականութիւնը այդպիսիպէտէն նախանձանդորութեան չափ պաշտօն ունի միտմունքու խորհուրդներու տիեզերքին մէջ ու վերծանելու մահկանացուներէն չկտահուած

իրագարծութիւններ: Բանաստեղծ Ռազմիկ Դաւոյանն այսպէս վարուած է իր կոչումին հետ ու ազատութեամբ մեղաւորը ինք չէ, որ զնայնքոս պէս գտահարներ չեն ձայներ հողիններուն մէջ ու մարդոց զգայարանքը պատրաստ չէ ճերմկ տխուր, այսօր ուրախ»ի պէս մարդկային յուզումնառատ փորձառութիւններ ընկալելու:

Ինքզինք պարզ ընթերցող համարող բանասէր ու մանկավարժ Տ. Պետրոսեանի տրտունջը հասնանարար այնքան տարօրինակ չնչէր, եթէ երբեք որոշ խաւի մը յայտարար նշանը չըլլար անիկա, որուն առաջացուցած մոլորակներն զերծ չեն նոյնիսկ բանաստեղծները, ինչպէս է պարզապէս բանավէճին զուտ բացած Գէորդ Էմինի, նոյն յօդուածին մէջ, դարձեալ Ռազմիկ Դաւոյանի առիթով:

«Գովֆի այդ ծոյլ իմերցիան մեծապէս վնասեց եւ չէր կարող չլնանել նախ իրեն... Ռազմիկ Դաւոյանին, որն այդ ամէնը շեղուած իւրի տեղ դնելու, այնքան մոլորուեց ու կորցրեց գրական չափանիշները, որ վերջերս, ընթերցողներէ մէկի այն միանգամայն արդարացի դիտողութեամբ, թէ նրա սրտը գործեր բարդ ու անհասկանալի են, ոչ տեղի, ոչ պակաս պատասխանելի է, թէ ի՞նչ անենք, Շեյքսպիրն էլ էր բարդ կամ, ինչպէս իմքն է գրում. «Նըմանատեղ վիճակում են բոլոր նրանք, ովքեր վաղուց ի վեր մտել են համաշխարհային աստարտեզ» (Գրքերի աշխարհ):

«Անկասկած, այս ամէնը ճիշդ է, նրանց նկատմամբ, ովքեր վաղուց ի վեր «մտել են համաշխարհային աստարտեզ»: Բայց ի՞նչ կայ ունի Ռ. Դաւոյանին որոշ քանատեղծութիւնների անհասկանալի լինելու մասին ընթերցողի դժգոհութեամբ հետ: Ինչպէս ասում են՝ «կամեցանք մտնելու են»:

Այնուամենայնիւ, կարեւոր է կոմիտարներէն մէկը, արդէն տեսանելին, — Գէորդ Էմինի արագ դիրքորոշումը ընդդէմ Ռազմիկ Դաւոյանին: Աւագ բանաստեղծը յայտնապէս կը ճզնի ձգել այն սպաւորութիւնը, որ Ռազմիկ Դաւոյանն ինքզինք հասակակից կը համարէ Շեյքսպիրին եւ համաշխարհային աստարտեզ մտած այլ զէմքերու, մինչդեռ տրուածը պարզ օրինակ մըն է ի մասին այն երեսօթիւն, որուն գաղտնութիւնը սպրած են շատեր, առանց Շեյքսպիրը ըլլալու, մեր մէջ՝ Մեծարենց, Վարուժան, Օլական, Զարենց, Փոխանակ Հարցը այդպէս ըմբռնելու, ընդամենը ընթերցողի մը ձայնակցելով: Գէորդ Էմինի թիրախ կը դարձնէ Դաւոյանի ճորտ գործերուն» բարդութիւնն ու անհասկանալիութիւնը: Գործախառնը ճորտ գործերը անորոշ ձեւակած են եւ ճիշդ չէ առանց օրինակի շատ լրջացնել Հարցը: Մենք դիտենք միայն, որ օր մը անհասկանալի հռչակուած բազում գործեր դիւրութեամբ բացուած են յետադիմութեան բաց մտքին: Եւ դիտենք նաեւ, որ արուեստի գործ մը երբեք ամբողջովին չի կրնար ժամանակակիցներուն վստահել իր բախտը: Որքան կը դիւրանար մարդոց գործը, եթէ այդպէս ըլլար զգրուածքը: Ժամանակակիցները կ'ըսէին իրենց խօսքը ու կը վերջանար ամէն բան, յաջորդ սերունդները այլեւ Հարկ չէին տեսներ զբաղել տուեալ հերթնակով ու անոր գործով, ըսենք՝ Նարեկացիին եւ միւսներուն մասին վերլուծական հասարակութիւնը ու հարիւրաւոր յօդուածներ չէին գրուեր: Այս բոլորը, անշուշտ, մեզմէ լաւ գիտէ Էմին, գիտէ նաեւ, որ հասկացողութեան չափանիշները թել մը աւելի շատ յարաբերական են իր ատրած աշխարհին մէջ ու հաշուական գրանցներէ զերծ չեն նոյնիսկ պաշտօնական քննադատներուն ու պաշտօնական անձանց մօտ: Ինչ վախճանական թուականներուն ինչէ՛ր ըսես չըրբին Պարոյր Սեւակի բանաստեղծական վաստակին պակաս հանդիսացող Վաղարշապատցի Վիտուն, մինչդեռ թիրախը այսօր կը փութան նոր օրերու արդարացուն տրտուելով զարգացել իրենց ճակատը: Ուրե՛մն:

Ջորտիթեամբ կը հասկցուի, որ խղճմասնէք ու պատասխանատուութեանէ գուրկ մարդոց վանողական խնդումները սրելէ կապ չունին վերի ընդհանրացումին մէջ, մենք նկատի առնինք խղճմասնէի տէր գրողներուն անսովորը, ձգողականութեամբ օժտուած այն բարդը, որ ընտիրներուն ընծան է մեզի, ընդգրկելու, թափանցելու, տարբանալու, այրելու ու այլակերպուելու շնորհներով առանձնացուած այն հատարը, որ, երեւի, դիւրին չի յանձնելիք ամէն ընթերցողի: Որքան ծանօթ, նոյնքան ալ հսկան այս բաները շրջանցելով՝ ընթերցողի մը նախնական պայմանին կշիռ տալու էմինի միտումն է գարձանալին, երբ իրմէ սպասուածը ճիշդ հակառակն էր, մտնել վարկածներու, անգոր վարդապետութիւններու, հակասութիւններու, առաքելական էութիւններէ կտտարուած խոտորումներու տնդերով կազմուած Դաւոյեանի աշխարհը եւ ըստ այնմ խօսէր իր աշխարհի մարդոց հետ: Ոչ ոք կը սպասէր հարկաւ, որ Դաւոյեանի իւրաքանչիւր բանաստեղծութեան պոսիկ մը քննէր էմին, բայց այդ փորձը վստահարար շատ մը անակնկալներու առջեւ պիտի դնէր զինք ու հետեւ կացուցանէր սովորական պահանջներու անշուք կացութիւնէն:

Տանք հասկնալութեան բոլոր պայմանները լրացնող նմոշ մը, զննողաբար մը կողմէ մինչեւ անգամ մէջընդմեջ արժանացած, Միլիվա Կապուտիկեանի «Ձմեռ է գալիս» խորագրուած վերջին գործէն, հետեւեալը.

Սեղմի՛ր ստամիգ, դու ամենի մօտ
 բացէրաց լալու իրաւունք չունես,
 Թեկուզ վիրաւոր, Ի՛նչուզ արնաքամ՝
 Զէնքերդ տալու իրաւունք չունես,
 Գու՛՛ հայ քանաստեղծ, ի՛նչ էլ որ լինի,
 Վերջին գիմուս՝րն էլ ղնկնի յուսահատ,
 Քն ժողովրդի յաւերժութեանը
 Չհաւատալու իրաւունք չունես...

Այս ութնեակին մէջ չկայ բառ մը, տող մը, պատկեր մը կամ պատգամային շերտ մը, որ հասկնալի չըլլայ: Բայց ո՛ւր է բանաստեղծութիւնը այդ սուրբին մէջ: Ո՞ր տիրացուն այդքան բան չի դիտեր հիմա կամ ո՞ր վարժապետը ասկէ նուազ բան կ'ըսէ այսօր զինք ամէն օր ունկնդրող պատանիներուն: Բանաստեղծութիւնը ծանօթը չափաբերել չէ եւ նոյնիսկ Ջորտիթեի «Ժամանակիդ շունչը գարձիք» յորդորը չի կրնար փրկել մէկը, որ մերկապարանոց բանին կը վստահի եւ կ'անտեսէ «անտեսներէն», ստեղծումը...

Հասկնալի, շատ հասկնալի, անհասկնալի ըլլալու չափ հասկնալի բանաստեղծութեան ժամանակաշրջանը, նաեւ բանաստեղծութիւնները շատ ծանօթ են էմինի: Քիչ չէր թիւր նմանապէս հասկնալութեան սպասարկած անխորհուրդ իր գրողներուն, զորս անձամբ կրակի տուաւ: Այդ վստանումին պատճառները ծանօթ են ու բանաստեղծները իրենք շատ մեղք չունին հող: Ստեղծագործական մթնոլորտը քիչ մը տարբեր է հիմա, անհասկն ու անհասկան բարդութիւններուն գարնուելու հակումը մահացու մեղքերու կարգին չի դատուիր ու կը սպասուի, որ առնուազն բանաստեղծները քայլ պահեն... բանաստեղծներուն հետ:

Թ. Գ Ա Ի Ո Յ Ե Ա Ն

Ձ Ա Յ Ն Ե Ր

Ձայները գուցէ չեն մեռնում բնաւ,
 Ձայները գուցէ բարձրանում են վեր,
 Մանուկների պէս
 Խաղում են փափուկ ամպերի վրայ,
 Յետոյ դառնում են աստղային հովեր:
 Եւ ազատուելով մարդու կապանքից,
 Երջանկանում են տխուր հրնուանքով,
 Մարդն ազատում է իր տառապանքից,
 Եւ տիեզերքը լցում է կեանքով:

Ձայները գուցէ չեն մեռնում բնաւ,
 Գուցէ պահում են ջրերի խորքում,
 Գուցէ մտնում են խեցիների մէջ՝
 Մարգարտանայու տենչանքով զնգուն:
 Եւ կախարդական ձկների տեսքով
 Գուցէ աշխարհ են գալիս վերստին,
 Ապրում են դարձեալ, կորչում են դարձեալ՝
 Կեանք տալով մի նոր խարկանքի, ստի:

Եթէ ձայները չեն մեռնում բնաւ,
 Ապրում են ու դեռ
 Ապրելու տենչ են տալիս օրերին,
 Հազար օրհնութիւն, հազար երանի՛
 Եղէզների մէջ ապրող ձայներին,
 Հազար օրհնութի՛ւն, հազար երանի՛
 Շուշանների մէջ շնչող ձայներին,
 Եւ հազար քաթի՛ծ ու հազար տազնա՛յ
 Գուժկանների մէջ ննչող ձայներին:

Եւ քանի որ դու շուշան ես կապույտ,
 Եւ քանի որ դու եղէգ ես, օ', քոյր,
 Եւ եթէ ես ձայն ունեմ ապրելու,
 Թող քո մէջ զնգայ իմ ձայնը մահուր:
 Թող քո մէջ ննջի, քո մէջ շնչկակայ,
 Թող քեզ աստղային հովերով լցնի,
 Գուցէ մուրումի, գուցէ եկեղեկայ՝
 Թէ մէկը քեզնից հառաչանք փրցնի:

Ձայները գուցէ չեն մեռնում բնաւ,
 Ձայները գուցէ ծաղկում են անվերջ,
 Երբ մենք բոլորս ձայներ ենք արդէն
 Տիեզերական խաղաղութեան մէջ:
 Ձայներ ենք եւ էլ ոչ մէկս չկանք,
 Եւ ոչք աշխարհը դարձել է սեռ
 Աւեր ձայների ծաղկավառ մի գորգ:—
 Թէեւ ձայները չեն մեռնում բնաւ,
 Բայց նրանց կեանքն ալ ակնթարթ է լոկ:



Անճրեից ծեծուած, հազմից հալածուած,
 Ծակ տրեխներով գնում էր Աստուած,
 Ինքը երկնից իր արտասուքով
 Իր կեանքը, ճամբան պատել էր սուգով:

Ինքը գնում էր քեթիւ ու ներհան,
 Որպէս սկիզբն ու վախճանը կեանքի,
 Ինքը տանում էր իր մերկ ձեռներում
 Բախտ արարելու
 Իր կախարդական լեզուակը գանգի:

Եւ գնում էր նա
 Լճուած ու մեծակ աշխարհի կռզմից,
 Եւ ոչ ոք, ոչ ոք չէր կանչում նրան,
 Որ ապաստան տայ անճրեի՛ց, հազմի՛ց:

Եւ նոյն ժամանակ աշխարհից այս չար,
 Պարզուած երկնի անեռնները մութ,
 Բիրաւոր ձեռներ իրենց Աստրժուց
 Ակերտում էին գործակնք ու գութ:

Բ Ա Ռ Ը

Ինչպէս արեւի շողը բոնելով
 Կենդանանում է թրթուրը ճնած
 Եւ իլրտում է տաճուկ փռչու մէջ,
 Այդպէս հանճարի ճառագայթի տակ
 Արթնանում Բառը
 Եւ տաճ իլիքտով
 Շարժում է դէպի յարսեմութիւն:

Ձգացմունքների խեղդուող ալիքից
 Բառն ինքը, ահա,
 Խոստովանանքի համար է ծնում,
 Ու թէեւ նրան մանրում են մարդիկ
 Շահատակութեան շուկաների մէջ,
 Սակայն ինչ-որ տեղ՝
 Հոգու ծալքերում իմաստունների,
 Ապրում է Բառը եւ անվերջ թրծում:

Հաւատամքը — Սէր,
 Տառապանքը — Սէր...
 Եւ նստել էի
 Բառի մեհաւոր քարանձաւի մէջ,
 Եւ Բառը հագար տխուր աչքերով
 Լալիս էր վրաս... —
 Եւ չգիտէի,
 Որ դու մտերմ կը վառես մի օր՝
 Բառի խորքերը լուսաւորելու,
 Եւ լուսեան մէջ կը թողնես, գնաս:

digitised by A.R.A.R.®

Ես չգիտեի...
 Եւ Քառը հիմա քայլում է յոգնած
 Բառերի անծայր քարաւանի մէջ,
 Եւ տխուր է նա, ճանճարացած մի քիչ
 Ե՛ւ աննուան է, ե՛ւ քննչօրէն խեղճ:

Եւ ինձ թւում է նրա ստուերը
 Բոլոր կողմերից
 Քշում են վայրի ուրուրներ հագար.—
 Գիշակերների, անտաղանդների
 սարուկն է Քառը,
 Եւ հանճարին է միայն հաւասար:

Եւ քանի դու կաս, ամէն գարնան հետ,
 Ինչպէս արեւի շողը բռնելով
 Կենդանանում է թրթուրը քնած,
 Եւ խրտում է տափուկ փոշու մէջ,
 Այդպէս Կարօտիս նառագայթի տակ
 Արթնանում Քառը
 Եւ տափ խլիրտով
 Շարժում է դէպի յաւիտենութիւն:

Երեկ տխուր, այսօր ուրախ,
 Այիֆի պէս ծափ եմ տալիս,
 Երեկ՝ դէպի անյայտութիւն,
 Այսօր դէպի ասի եմ գալիս:

Լուռ ժպտում եմ փոքր ու մեծին
 Կամ ծիծաղում խենթի նման,
 Ինձ քաշխում եմ աւազներից
 Անապատի գետի նման:

Ինձ քաշխում եմ անմնացորդ,
 Իմ ժպիտներն ո՛ւր եմ տանում.—
 Միծաղիս մէջ ամէն անցորդ
 Յոգնած հագին է լուանում:

Վաղը երբ որ մշուշ լինի,
 Եւ արցունքներ ծնունեն ցաւից,
 Գուցէ մէկը փոքրիկ մի կայծ
 Եւ քերի ինձ իմ ծիծաղից:

ՌԱԶՄԻԿ ԴԱԻՈՅԵԱՆ

« Բ Ա Գ Ի Ն »

1984 Ի Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հեղինակ	Խորագիր	Թիվ
Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Հաղմազացը	1-2
Վ. ԹԱԹՈՒՆ	Փխտտ	1-2
Պ. ՀԵՐԵԱՆ	Հեղեղը	1-2
> >	Գրոհ	4
> >	Բանին յառույթով	8
Ա. ԵՐԿԱԹ	Գերեզման Յակոբ Օշանցի	1-2
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Ջայռայր եւ պատկառանք	1-2
Փ. ՀԵՐԱՆԵԱՆ	Նայն ճամբուն մէջ	1-2
> >	Գուգէ օր մը	5
> >	Նոր վերջ մը	5
> >	Երեւէ քերթում	9
ԵՎ. ՊՅԵԱՃԵԱՆ	Չկայ վերնագիր	3
> >	Բան՝ սգաւոր եւ տիրական	8
> >	Կէս գիշեր եւ հագի	12
ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ	Կշեռք	3
> >	Ք	3
> >	Մարգարիտն ու փրփուրը	3
> >	Ք	3
> >	Ք	3
> >	Ք	3
> >	«Բիրիլական»	6
Ն. ԿԱՏԱՐ	Ատեղային	3
> >	Սիրտ իմ	3

Հեղինակ	Խորագիր	Թիվ
Մ. ԻՇԽԱՆ	Երեմ սիւն	4
» »	Հայ եմ ես	4
» »	Ինչպէ՞ս մտնում	4
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Մասունք բանի	4
» »	Խաչածեղ ճայներ	9
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Հաճապարհիմ տրուող	5
» »	Marche Nuptiale	10
ՌԻ. ՇԵՔՍՓԻՐ	Հնչեակներ (բարգմ.՝ Գ. Էմին)	
	Խւ վ. Թէֆեան)	5
Յ. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ	Սպիտակ փրթուածներ	5
Փ. ՊԱՍԿԵԱՆ	Առաջին ջրային տաղանայը — Նիսրք, 1941	6
» »	Հալեպի մամբան	6
» »	Մեծ մօրս համար, որ կը վերադառնայ	6
	(բարգմ.՝ Յ. Պերպլեան)	
Վ. ԹԵՔԵԱՆ	Աւ Երկիւզի	6
» »	Աւ Երկիւզի (Ք. մաս)	7
» »	Մոխրի ծառ (Գ. մաս)	11
ԱՐՄԱՆՏ	Գոյնե՛ր, օ՛ր, գոյնե՛ր	6
» »	Համը կեանքին	6
» »	Ձեռքերիս ինտ	6
» »	Վերքն այս խորունկ	6
» »	Փակում եմ աչքերս	6
» »	Մի Մատռույի	6
» »	Դու, ա՛վ սպասում	12
» »	Խաւարում	12
» »	Անուշ իմ	12
ՄԻՍՄԱՆԹՕ	Զաւարեանի հագին	7
Ե. ՉԱՐԵՆՑ	Մահուան տեսիլ	7
» »	«7» կախումներ	9
Գ. ՅՈՎՀԱՆՆԷՍ	Քարը կարող է լինել իմաստան	7
» »	Ես չեմ մեռնի	7
» »	Արարչի երգը	7
» »	Մարը իջնում է հայոց աշխարհին	7
» »	Դիմուն	7
» »	Առաւօտը — փոքրիկ, անպաշտպան մի ծաղիկ	7
ՎԱՐԱՆՆԻ	Ռազմական	8
Ն. ՍԱՐԱՅԵԱՆ	Կայտարանի դիմաց	8
» »	Տղան	8
» »	Տեսիլք	8
ՎԱՐԱՆ ՌԻԺ	Պռնիկը՝ վերջին այցելուին	10
» »	Իզանկարը	12
Է. ՍԱՐԱՅԵԱՆ	Դարձիկ	10
ԱԼՄԻՆ	Սանտ մարգարէ	11
» »	Անետ յաղթանակի	11

Ա Ր Զ Ա Կ

Հեղինակ	Խորագիր	Թիվ
Յ. ՕՇԱԿԱՆ	Թիւրքմէնին աղբիկը	1-2
» »	Մեր Ջատիկը	1-2
» »	Սահակ Պարգեւեան	3
» »	Սահակ Պարգեւեան	4
» »	Սահակ Պարգեւեան	5
» »	Սահակ Պարգեւեան	6
» »	Սահակ Պարգեւեան	7
» »	Սահակ Պարգեւեան	8
» »	Սահակ Պարգեւեան	9
» »	Սահակ Պարգեւեան	10
» »	Սահակ Պարգեւեան	11
» »	Սահակ Պարգեւեան	12
ՍԻ. ԿՈՒՏԻՆԿ	«Միջտանքու արքան» (քարգմ.՝ Յ. Պէրպէրեան)	3
Ա. ԼԻԻԲԷՆ	Մահմէտ էր կոչուում ուժով խփող արեւը	3
Մ. ՍԱՆՆԵԱՆ	Լիճը	4
Պ. ՄԱՊԵԱՆ	Ախտոյն մէջ	4
Ժ. ԱԹԱՐԵԱՆ	Վերջը յաջորդով	5
» »	Enjoy your life	11
Շ. ՇԱՀՆՈՒՐ	Մանուկ լը տարեցներու մէջ	5
Թ. ՄԱՆՏԵԼՇՏԱՄ	Սեւան	5
» »	Աշտարակ (հայացուց՝ Ր. Քէլպապեան)	5
Մ. ՀԱՃԵԱՆ	Քաղաքացին	6
Պ. ԳԼԱԿ	Էմոնէ ողջ մնամ	7
ԵՂ. ՊՕՅԱՃԵԱՆ	Ջորեպան Գայուստ	7
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Սահմանագիծեր	8
Ճ. ՕՐՈՒԷԼ	Կենդանական ազարակը (հայացուց՝ Ս. Կիրակոսեան)	8
Մ. ԳԱՂՇՈՅԵԱՆ	Օրիորդ Մարի	8
Լ. ԱՅԱՏԱ	Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ	9
» »	Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ	10
» »	Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ	11
» »	Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ (հայացուց՝ Ս. Կիրակոսեան)	12
Ս. ԱՍԱՏՐԵԱՆ	Ապրող կակայներ	9
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Կիսանանայարիւն	10
Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Խմբերգերի ժամանակը	10
Ր. ՔԷՊԱՊՃԵԱՆ	«Տող-անցէ»	12
Կ. ՄԵՀԵԱՆ	«Ձեռնահման»	12

Ի Մ Ա Ց Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Հեղինակ	Խորագիր	Թիվ
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ Յ.	Օշական՝ զատագով արժեքներու մշտակենդան առկայութեան	1-2
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Յ. Օշական՝ բուսականներով եւ բիւքով	1-2
Մ. ԻՇԵԱՆ	Յակոբ Օշական	1-2
Յ. ՕՇԱԿԱՆ	Նամակ՝ Աստուծոյ վարդապետներին	1-2
» »	Նամակ՝ Նիկիոզո Սարափեանին	1-2
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Նաւահում մեկնակետը՝ «Առաջին արցունքը»	1-2
» »	Բ. Զաքարյանի հատընտիրը եւ բարգմանական հարցեր	3
» »	Մամիր Էլ-Մալեյ կը պեղէ «տառերու ոգին»	6
» »	Է. Սարգսեանի «Տարածութիւն»ը	6
» »	Բիրտ իրականութեան ներքին բանաստեղծականութիւնը	9
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	«Մակ պատուիչ» կամ անհասի ծառայումը չբացատրած զէմ	1-2
» »	Շահնուբեան ընթերցումներ	5
» »	Փիթըր Պարսեան	6
» »	Նիկիոզո Սարափեան — անծանօթ երկրամասի ուղեւորը	8
» »	Ծա մի ծառ եւ ծիրանի	10
Մ. ՆՇԱՆԵԱՆ	Վեպը եւ արդիական սկզբունքը	1-2
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Յ. Օշական՝ քննադատ	1-2
» »	Յ. Օշական՝ քննադատ	3
Է. Գ. ՏԱՐՕՆԵԱՆ	Յակոբ Օշական	1-2
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Օշականի ռեալիզմ գլխաւոր յատկանիշը՝ պատկերը	1-2
Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ	«Միջին ո՞ւր»	1-2
» » »	Յեղատպանութեան ոգեկոչումը՝ վրձնով	4
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Վիպական տարրը օշականեան «Համապատկեր»ին	1-2
» »	Պ. Գուրջեանի «Պայթած լուսն ինդանոթներում»	1-2
» »	Պ. Սնայեանի «Աղբատներու աւանդութիւնը»	12
Վ. ՕՇԱԿԱՆ	Յակոբ Օշականի տեղը Արեւմտահայ գրականութեան մէջ	1-2
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ	Մի-մի մամակ Ե. Տէմիրճիպաշեանին, Գր. Զօհրապից, Սիւրանթոյից եւ Գ. Վարուժանից	3
» »	Զորս մամակ Վարդգէս Ահարոնեանից Հ. Ներսէս Ալիանեանին	6
Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ	Նամակ՝ Հ. Արսէմ Այաբեանին	3

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
ԳՐ. ԶՕՀՐԱՊ	Նամակ՝ Հ. Արսէն Այսընեանին	3
» »	Բօք	7
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Նամակ՝ Հ. Բարնաբա Պիլեզիֆնեանին	3
» »	Դանիէլ Վարուժանի խօսքը	7
ՍԻԱՄԱՆՔՕ	Նամակ՝ «Հանդէս ամսօրեայ»ի խմբագրին	3
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Սի պատմական ու մարդկային վկայութիւն	3
» »	Ում են վերաբերում Զարեմցի 1936ի Սեպտեմբեր 27ի տողերը	9
» »	Հոգեմտաւոր կեանքի ելուէջները Հարաւարւիայում	11
Կ. ՄԵՀԵԱՆ	Վազգէն Շուշանեանի մասին	3
Ս. Պ.—ՏԱՏՈՅԵԱՆ	Ինտրա — բնագոյնական համակարգը	4
» » »	Շահան Ռ. Պէրպէրեան — արուեստի տեսութեան համայնապաշտական տեսութիւնը	6
» » »	Եղիա Տէմիրնիպաշեան — տրամախոհութեան տարրալուծումը Նիրվանայի մէջ	8
» » »	Լիբանանահայ նկարչութիւնը	9
Ա. ՕՐԼՈՎ	Ստալինեան ռերագործութիւնների գաղտնի պատմութիւնը (հայացուց՝ Լ. Մկրտչեան)	4
Վ. ԳԱԻԹԵԱՆ	Մեծախօսութիւն դարի հերո	5
Ճ. ԿՐԷՓՓԻՆ	Հայկական կաւէ	6
ԶԱԻՐԻՆԻ	Խարազանդ մարգարէն	7
Թ. ԱՐՂՈՒԹԵԱՆ	Սիմոն Զաւարեան	7
ՅՈՎ. Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ	Ազմիւ եւ անկեղծ	7
Ա. ԶԱՄԱԼԵԱՆ	Ինքնատիպ մարտիկը	7
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Հոյակապ տէրվիշը	7
ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ	Սիմոն Զաւարեան	7
ԵՐ. ՕՏԵԱՆ	Տիպար մարդը	7
» »	Սիմոն Զաւարեան	7
Ա. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ	Դ. Յովհաննէսի «Նոր կեանք»ը եւ յաւերժական արժէքները	7
» »	Եւ մի պատահիկ Գայռչեանի ժառանգութիւնից	8
Վ. ԱՀԱՐՈՆԵԱՆ	Նամակներ՝ Հ. Ներսէս Ակիմեանին	8
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Անցեալ հարիւրամեակի հայ բարեբաղն գրականութեան կշիռը Յշոյու փորձ մը	9
» »	Անցեալ հարիւրամեակի հայ բարեբաղն գրականութեան կշիռը Յշոյու փորձ մը	10
ԵՐ. Տ. ԳԱՐԱՃԵԱՆ	Նկատումներ ժըպրան հայիլ ժըպրանի «Մարգարէն» հատորի բարգաւաճութեան մասին ժառանգութեան հոսքը	9
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	Եւ, Լուիզիանայի ժամն Փասքիլը	10
ԺԱՆ-ԺԱԳ ՊՐՈՇԻԷ	Եւ, Լուիզիանայի ժամն Փասքիլը	11
Կ. ՇԱՀԻՆԵԱՆ	Յ. Պէրպէրեանի «Ոսպնեակ»ը	11
Ե. ՍԷՏԵՐԹ	Զրոյց	12

ԽՈՐԱԳԻՐ

ԹԻՒ

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Ե Ր

Խմբագրական նոթ	1-2
Յովհ. Շիրազի մահը	3
Ն. Կասաբ	3
Վ. Շուշանեանի մասին	3
Սուրեն Մանինեան	4
Շէյխաբիբի հնչեաններուն հայերէն նոր շնչառութիւնը	5
Յովհ. Շիրազ	6
Նարեկեան տիպարը	7
Ճորճ Օրուէլ	8
Սորոսյալ Սէյֆերթ	11
Անկոնֆիկտայնաբան տեսութիւնը	12
Կ. Մեհեանի մահը	12

Ն Հ Մ Ա Ր Ն Ե Ր

Նպասակաւորաց նախաձեռնութիւն	3
Ճշդումներ	4
Նոր վերջ մը	5
Ուրիշ վերջեր	5
Երկու ուղղագրութիւն, երկու լեզու եւ երբորդ մը	
Եւ ուրիշ բաներ	6
Քիւրքիմացութիւններու հանդէս	
Եւ ճրի շնորհարարչութիւն	12
Քափանցումաւ բնութեանը	
Եւ տեղում գափաղ ուրիշներ	13
Այնուամենայնիւ հանճարեղ	12

Մ Հ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Թիւ՝ 4-5-6-7-8-9-10-11

ՄԵՐ ԸՆԹԵՐՈՂՆԵՐՈՒՆՆԵՐ
ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

A Z A D O R
11, Platea Mitropoleos — Athens 117
GREECE

A. MAROUKHIAN
Rümanstr. 51, 8000 München 40
WEST GERMANY

Mr. KRIKOR HOTOYAN
c/o HEBDOMADAIRE HORIZON
3401, Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5
CANADA

Mr. MELKON SOUKIASSIAN
C. P. 239 35100 Padova
ITALY

Mr. ARTO TAVITIAN
24, Kyriacos Matsis st. (Flat 4)
Ay. Dhometios — Nicosia 102
CYPRUS

«ՌԱՏԻՆ» իր 23րդ տարին կը բնակչոյտ
յաջորդ բնով: Էջտ կը տեսնէ տարին 12 քիւ:
Բաժանարարագրութիւնները կը ներառեն օգտյին
բարձրագին ծախսերն ալ: Եթէ ծառայներու փա-
նայագրութիւններ տեղի ունեցան են, կը խնայեն
տեղեկացնել մեր ներկայացուցիչներուն կամ ուզ-
ղակի գրել մեր հասցէին:

Արտասահմանի մեր յարգոյ բաժանարարներին
կը խնայեն, որ 1886ի սկիզբը կատարեն տարե-
կամ իրենց բաժանարարագրին վճարումները՝ կամ
ուզողի մեր հասցէին եւ կամ մեր ներկայացու-
ցիչներուն:

Այլապէս տրիպուստ ցիտի բլլա՞նք դադարեցնե-
լու օտարումները:

Իսկ արտասահմանի մեր ներկայացուցիչներին
կը խնայեն, որ վարչութեան զրկեն 1984ի յո-
լար նաշխանները, բաժանարարներուն տարազմեան
ցանկերն աւ հարկները՝ ճշգրիտ հասցէներով:
«ՌԱՏԻՆ»ի բաժանարարագրութեան պայմաննե-
րը հետեւեալներն են...

Տարեկան բաժնեկից՝

ԼԻԲԱՆԱՆ 125 Լ. ոսկի

ԱՐՏԱՍԱՆԱՍԻԱՆ 40 Տարաք

Հատկաձեռն՝

ԼԻԲԱՆԱՆ 12 Լ. ոսկի

ՍՈՒՐԻԱ 15 Ս. ոսկի

«ՌԱՏԻՆ»ի ՆԵՐԿԱՅԱՑՆԻՑԻՉՆԵՐՈՒ
ՀԱՍՏԻՆԻՐԸ

Mr. J. KIRAKOSSIAN
6 Government Rd. — Beacon Hill
Sidney N. S. W. 2100

AUSTRALIA

Mr. HAIG GAKAVIAN
9417 Curran Road
Silver Spring M. D. 20901

U. S. A.

ASBAREZ PUBLISHING COMPANY
419 W. Colorado Blvd.
Glendale Calif. 91204

U. S. A.

« ALIK » Armenian Daily
Jamhuri Islami Ave.
P. O. Box 422 — Teheran
IRAN

SASSOUN CHEKERCHIAN
BOOKSHOP
SHARSAN AVE
New Julfa - Isfahan
IRAN

D. R. DICKRANIAN
47, Shuttlesworth Rd.
S. W. 11, 3 DH — London
ENGLAND

Mr. ANDREAS CARAMANIAN
c/o « ARMENIA »
El Salvador 4627
1414 Buenos Aires — Rep.
ARGENTINA

Աւտարումները կատարել հետեւեալ հասցէին...

ADMINISTRATIVE DIRECTOR
c/o PAKIN REVUE
P. O. Box 11 - 8404
BEIRUT — LEBANON

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



Այս տարի լրացաւ վերջին դարու հայ բանաստեղծութեան ժառանգիչը՝ հայտնուող գաղափարներ, ինչպէս Վարուժանի ծննդեան 100ամեակը, որ համապատասխան շուքով նշուեցաւ մեր ժողովուրդին կողմէ, Հայաստանէն մինչեւ Սփիւքի հետուոր ծագելը՝ վերահրատարակութիւններով, մեկադրութիւններով, վերլուծական առանձին յօդուածներով եւ հանդեսութիւններով:

Միացեալով ծննդեան 100ամեակը նահատակութեան 100ամեակին, «Բագին» յատկապէս Ապրիլի էր համարը ամբողջութեամբ պիտի նուիրէ հիմնադրութեան, խորհրդանշական էր անմահութեան ընդմէջէն մեր լուս յարգանքը ընծայելով նաեւ նահատակից էր ընկերներուն:

Դանիէլ Վարուժանի նուիրուած «Բագին» բացառիկին մէջ մեր մշտուն աշխատակիցներուն գրութեանց կողքին՝ խմբագրութեան պատրաստած է տարբեր քննադատներէ վերջուած մանրամասնութիւններ, ուր ընթերցողը առիթ պիտի ունենայ տեսնելու մեծ բանաստեղծին անձին ու գործին յատկանշական կողմերուն կարեւի ամբողջութիւնը:

ՅԱԶՈՐԴ ՏԱՐԻՆ

Իր աւագ եւ երիտասարդ աշխատակիցներուն ներ պատրաստած գրութիւններուն կողքին, յաջորդ տարուան ընթացքին «Բագին» ընթերցողին պիտի ներկայացնէ.

Ա.՝ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ.՝ Անտիպ բատերախաղ մը:

Բ.՝ ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ.՝ 27 անտիպ նամակ, գորս մէկտեղած, ծանօթագրած ու մեր տրամադրութեան տակ դրած է Մարտիրոս Միքատեան:

Գ.՝ ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ.՝ Անտիպ նամակներ:

Դ.՝ ԵՂՈՒԱՐԿ ՊՅՅԱՃԵԱՆ.՝ Արձակ եւ չափաճայ գործեր:

ԼԻԲԱՆԱՆ

Հատալահառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատալահառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ
مجلة شهرية ، ادبية وقتية علمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KAZAMONIAN

•
Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱՍԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԷՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿՐԻՍՏՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898



كانون اول ١٩٨٤

digitised by A.R.A.R.@